


ԷԶՄԻԱԾԻՆ



Ա

2003


ՀՄԽ 796



ԾԹ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ



Յ ՝ Ն ՝ ՝ ՝
2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի պապագամը Սուրբ Ծննդյան և Աստվածաշնորհության փոխի առիթով	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի խոսքը Ամանորի առիթով	6
Սուրբ Ծննդյան փոքր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	8
Փրկչի հրաշալիատ և Սուրբ Ծննդյան փոխի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	9

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Զարուհի Դուխանյանին՝ ծննդյան 85-ամյակի առիթով	13
Հայրապետական գնահատություն	15
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը Հայաստանի հանրապետության Ազգային ժողովի նախագահին փոխանցեց Աստուծոյ Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգևը	16
Այս փարի կառնովի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օժան 1700-ամյակը	17
Միջոցական երկրասարդական ներկայացուցչական ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	18

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

Տ. Հոսիկ արքեպիսկոպոս Սանթրուքյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ամանորի առիթով	19
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պեգապալանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	21
Տ. Եզնիկ եպիսկոպոս Պեքրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	23
Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Տիրոջ անվանակոչության փոխի առիթով	26
Տ. Դավիթ արքեպիսկոպոս Բարամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	28

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ԱՂԱՍՏ ԶԱՆԱՆԱՄ ՄԱԿԱՐԱՅԱՆ - Երանելի Օգոստինոսն ընդդեմ Նիցեի . 30

Թարգմանական

ՆԻԿՈՒԱՅ ԲԵՐԴՅԱՆՎ - Ազատություն 35

ՊԱՏՄԱՒԱՆԱԿԱՆ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ - Սահակ Պարթևի Կանոնագիրքը որպես
Ե դարի Հայ Եկեղեցու պաշտոնեղծության ձևավորման
պարագիծական աղբյուր 48

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ - Հայերեն ձեռագրերի
կորսուած հաւաքածոների ցուցակների հրատարակման խնդիրը 54

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ - Շողագավանքի գրչության կենտրոնը 69

ԱՐԱՍՏՅԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ - Նոր միություններ զաքարյանների շրջանի
(XII - XIV դդ.) եկեղեցիների արարաքին հարդարանքում 74

Տեսակներ

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ - Գազա բերդը 79

ՍԱՏԱԿ ՍԱՆԱՅԱՆ - Ներսես Աշարակեցու գործունեությունը
Վիրահայոց թեմի առաջնորդի պաշտոնում 86

Գևորգյան ճեմարանի երախտավորները

ԽԱԶԻԿ ԲԱՐԻԿՅԱՆ - Գուրգեն Էդիլյան 91

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ - Ռաֆայել Պապայանի
«Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները»
աշխատության հոգևոր արժեքը 99

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱԿԱՐԱՅԱՆ - Ամանորը Մայր Աթոռում 103

ՄԵԴԱ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Հանդիսություն «Ոգեղեն ուժ» կենտրոնում 114

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԶՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց դեսպան Դավիթ Պելեգին . . .	116
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հանդիպեց Էջմիածին քաղաքի մարավորականների հետ	117
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Մոսկվայի քաղաքացիներ Յուրի Լուժկովին	117
Հանգիստը Տ. Վաչե ծ. վրդ. Իգնատիտյանի	119
Եկեղեցական բեմ, լուրեր	120
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . .	122
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	125
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine	128

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(6 հունվարի 2003 թ.)

*«Փառք ի բարձունս Աստուծոյ,
 եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:
 (Ղուկ. Բ 14):*

Փառք Զեզ, Թագավոր Երկնավոր, որ Աստվածհայտնության խորհրդի առջև զավակները ազգիս ի Հայաստան և ի Սփյուռս համախումբ՝ հոգևորական ու աշխարհական դասերով, այսօր ողջունում են միմյանց Զո Սուրբ Ծննդյան ավետիսով: Ծինական ու պարական գործիչ, զինվոր, մարավորականություն և ուսանողություն, մեծ ու մանուկ ունկնդիր ենք 1700-ամյա Միաձնաէջ Զո Սուրբ Տաճարից բաշխվող «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» երկնաձայն պատգամին, որը մեր հայացքի առջև պարզել է խորախորհուրդ պահը Սուրբ Ծննդյան, երբ Բեթղեհեմի երկնքում կանգ առավ առաջնորդող պայծառ Աստվոր:

Փառք Զեզ, Թագավոր Երկնավոր, ազգս հայոց վերստին ապրում է Զո Սուրբ Ծննդյան մխիթարությունը. մոզերի հեծր երկրպագում ենք Զեզ, հովիվների հեծր փառաբանում և հրեշտակների զեզերի հեծր օրհնաբանում՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Աստվածային գթառար ու ողորմած Սիրով Փրկիչ ծնվեց աշխարհին: Տերը փրկեցեալ Մանկացավ ու աշխարհ եկավ, որպեսզի աղամական մեղքով չարի որոգայթներում մոլորյալ և Աստուծոց հեռացած մարդը նորոգվի, նորոգվի և աշխարհը մարդով: Մարդկանց հոգիներին ազատություն բերելու, մարդկանց արդարության ու խաղաղության կոչելու համար Աստված հաշտության Իր ձեռքը մեկնեց ու փվեց սիրո անգեղազանցելի օրհնակը: Բեթղեհեմի մատուրմ ծնունդ առավ Արդարության Արեգակը և խաղաղության Իշխանը, որպեսզի աշխարհում անբաժան լինեն ազատությունը, արդարությունն ու խաղաղությունը: Արդարեւ, Հիսուսի ծնունդը վերածնունդն է մարդու՝ Աստծո հեծր հաշտության շնորհով և «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» երավերով:

Բոլոր ժամանակներում մարդկության փայփայած երազն է խաղաղությունը՝ իբրև պայման ապահովության, բարօրության ու երջանկության: Որքան փեսություններ են մշակվել, սկզբունքներ առաջադրվել, միջոցներ ու ջանքեր ներդրվել հանուն խաղաղության, սակայն չեն լուել պարբերազմի որոտները, չեն դադարել դավն ու թշնամությունը, ավերածությունները, չեն վերացել սովը, թշվառությունն ու կարիքը, քանզի միշտ չէ, որ մարդկությունը հեծրամուր է Զրիստոսի պարգամած խաղաղությանը՝ մարդկային հոգում սիրո, ազատության և արդարության Ավերարանի հաղթանակին:

«խաղաղություն թողում ձեզ. զխաղաղության գիմ տամ ձեզ, ոչ որպես աշխարհս տայ. տամ ես ձեզ» (Հովհ. ԺՂ 27): Քրիստոսապարզև խաղաղությունը աշխարհի համար է. հի-րավի, բայց ոչ աշխարհից: Աշխարհին ծանոթ խաղաղությունն ավելի հաճախ շահերից է բխում. շահերով ու ինտեգրմանը ներդրելով պայմանավորվում, հաճախ և բռնությամբ հաս-տատվում ու պահպանվում: Ուստի և այն չի կարող հաստատվել ու անշրջելի լինել և, առավել ևս, չի կարող լինել այն իրական բարիքը, որը բարիք է պողպատե ժամանակում, քանզի միջ-տապես լի է հակամարտության փոխվելու վտանգով:

Այսօր Սուրբ Երկրում խաղաղության օրհներգության փոխարեն ծայնում է թշնամու-թյունը, և մահաբեր համազարկեր են հնչում: Այսօր աշխարհն անհանգստությամբ ակնա-դրես է երկրագնդի տարբեր անկյուններում ահաբեկչության սարսափներին ու անմեղ բյուր-կյանքեր խլող և ավերակ սփռող պատերազմներին: Մեր ժողովրդի սրտում աղետալոր են վերքերը Հայոց Զինատառության, որը տակավին չի գտել համընդհանուր դադարապար-տություն պետությունների կողմից և շարունակում է մնալ քաջալերություն նոր եղեռնագոր-ծությունների համար, ինչպես ժամանակին՝ Հոլոքոստի: Մեր հոգին այսօր խռովված է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փխրուն խաղաղությամբ, քանզի հակառակ կողմից շարունակ պատերազմի վերսկսման անխորհրդ և անհեշտ են հնչում: Փակուղի է առաջ-նորդվում պատմական իր հողում ապրող արցախահայության հիմնահարցը, երբ անարդար-տորեն ու հիմնագուրկ կերպով առնչվում է տարածքային ամբողջականության սկզբունքին, և ոտնահարվում մարդու և ազգի ազատ ապրելու բնական, արդար ու օրինական իրավուն-քը: Արդարությունը կհաղթանակի, պատերազմի ոտնակները կլռեն, ազգամիջյան հակա-մարտությունները և հասարակական ճգնաժամները կհարթվեն, երբ մարդկությունը աշխար-հի խաղաղության ուղիներից առավել ցանկա և փնտրի Քրիստոսի պարգևած խաղաղու-թյան փրկարար ճանապարհը, երբ իրավունքն ու մարդասիրության արժեքները առաջնոր-դողը կդառնան մարդկային կյանքի: Այսպես միայն խաղաղությունը կարող է ճշմարտորեն հաստատվել ընկերային կյանքում՝ դառնալով արարման ձգտում, միմյանց նեցուկ լինելու, միմյանց ուրախությամբ ու փխրությամբ ապրելու մեծագույն կարողություն ու ներշնչու-թյուն:

Այսօր, սիրելի ժողովուրդ հայոց, Բեթղեհեմյան այրում խանձարուրված Սիրտ ակուն-քից, հավատի ու հույսի Սիոնի բարձունքներից խաղաղության լույսը իջել ու ամփոփվել է մեր եկեղեցիների կանթեղներում և, ինչպես դարեր շարունակ, բաշխվում է «խաղաղություն ամենեցուն» մաղթանքով, որպեսզի Տիրոջ խաղաղությունը բնակվի մեր մեջ ու մեր հոգիե-րից սփռվի ազգային-հասարակական մեր կյանքին ու համայն աշխարհին:

Սուրբ Ծննդյան «յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճութիւն» ավերիստով Փրկչին ենք տեսնում այսօր վերստին մեր հողին, մեր կյանքին իջնող, որ հայոց հավերժական Մայր Աթոռով միշտ նորոգ լինի մեր հավատը և Աստվածապալինության մեր ուխտը:

Աստված մեզ հեպ է: Մեզ հեպ է խաղաղության Իր ողջությունով: Այս է մեր հավատը: Ըն-դունենք Տերունական ողջույնը, ճշմարտապես սիրենք միմյանց և հաճության ու խաղա-ղության Տիրոջ կամքը փափագելով՝ ծառայենք մեկմեկու ու միասին՝ մեր Հայրենիքին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: 2003 թվականը դարձնենք նոր հույսերի ու սպասում-

ների, հայրենիքում ու Սփյուռքում ազգային մեր կյանքի գորացման, մեր հավատի վկայության նշանակալի մի նոր փայլ:

Մարդազյալ Աստծո սնարի առջև միասնաբար հայցենք, որ Տերը Իր խնամքի ներքո անսասան պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Իր օրհնության ու շնորհի մեջ պահպանի ու զորացնի Նվիրապետական մեր Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուշաֆյանին, հայ Եկեղեցու ուխտապահ ու նվիրյալ ողջ հոգևոր դասը և ի ծագս աշխարհի հավատարվոր համայն մեր ժողովրդին:

Հայրապետական սիրով և օրհնությամբ Սուրբ Ծննդյան Մեր բարեմաղթություններն ենք հղում հայոց պետական ավագանուն՝ ի գլուխ Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիար Ռոբերտ Զոհրաբյանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Տիար Արկադի Ղուկասյանին և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ու միջազգային կազմակերպությունների բոլոր ներկայացուցիչներին:

Թող Փրկչի հայտնությամբ ծնունդ առնող խաղաղությունը, որպես մանուկ, Աստվածածնի հոգածությամբ խանձարուրվի բոլոր հարկերից ներս, խնամվի ու զորանա մեծ ու փոքր բոլոր ժողովուրդների բարի կամքով, վստահությամբ ու համագործակցությամբ, որ ազգերը սուսերներից խոփեի ծուլեն ու սվիններից՝ մանգաղներ, և աշխարհի բոլոր անկյուններում փարածվի «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» օրհներգությունը:

**«Քրիստոս Ծնաւ և Յայտնեցաւ,
Յեզ և Մեզ Մեծ Աւերիս. Ամեն»:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

«Յանուն Տոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

Միակնի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Աղոթարար հոգով ամենքիդ հետ ենք փարեմութի այս գիշեր և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս:

Առանձնակի խորհուրդ ունի փարեմութի գիշերը՝ ավարտ և սկիզբ, վախճան և ծնունդ: Հանգուցակեպում այս խորանում է կյանքը և ավելի զգալի դառնում նրա ընթացքը: Ավելի ամբողջական ենք փեսնում մեր ապրած փարին, անդրադառնում հաջողություններին, ավստացում կորուստների ու բացթողումների առիթով և մեր եզրահանգումները ելակետ դարձնում նոր փարվա անելիքների համար:

Ժամանակը մեր իրագործումներով է շռայլելի և իրական: Մենք ենք ժամանակը ժամանակ դարձնում, փարին՝ փարի, ու դարը՝ դար: Խոսել ժամանակի մասին, նշանակում է խոսել այդ ժամանակում մարդու գործերի մասին:

Հրաժեշտ ենք փայխ 2002 թվականին: Հրաժեշտ ենք փայխ լրագրող Տիգրան Նաղդալյանի ռճրագործ սպանության հետ կապված վերջին օրերի անհանգստությունն ու վերդովմունքը մեր հոգում, որ սրվելեցին փարեմութի մեր ուրախությունը, սակայն ոչ մեր լավատեսությունը, քանզի փարին առկա բազմաթիվ դժվարություններով ու լուծման կարող կարևոր խնդիրներով հանդերձ, այնուամենայնիվ, հայրենական կյանքում հաղկանալված է խաղաղությամբ, ներքին կայունությամբ և բարեհույս ձեռքբերումներով: Գոհություն և փառք Աստծո, որ անցնող փարում միաբան պահեց ազգս հայոց, կամք ու արիություն պարզենք համարեղ ջանքերով դժվարությունները հաղթահարելու, անկախության մեր նվաճումները շարունակական դարձնելու և ի սփյուռս աշխարհի հայ կյանքը կենսունակ պահելու:

Բոլորիս համար քաջալերական առիթներ եղան «Հայաստան-Սփյուռք» երկրորդ համաժողովի իրավիթումը, Արցախի «Հյուսիս-հարավ» մայրուղու կառուցման նպատակով կազմակերպված հանգանակությունը և հայրենաշեն բազմաթիվ ծրագրեր, որ բարերար հայորդիները իրականացրել են Հայաստանում ու Արցախում՝ իբրև վկայություն առ Հայրենին իրենց սիրո ու նվիրումի:

Անցնող 2002 թվականին ձեռքբերումներ ունենք նաև եկեղեցական մեր կյանքում: Վերաբացված և նորած եկեղեցիներ, նոր ձեռնադրյալ հոգևորականներ, ընդարձակվող քարոզչություն, Սուրբ Էջմիածնի հավատքի նորոգում և օրհնության բաշխում հայոց Սփյուռքում: Կարևոր ձեռքբերում որպես իշխենք հայրենի Կառավարության որոշմամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանին բարձրագույն կրթական հաստատության կարգավիճակի շնորհումը և հանրակրթական դպրոցներում Հայ եկեղեցու պարամության ուսուցումը, շնորհիվ որի Առա-



ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿԵԼԵՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԱՆ ԿԵԼԵՐՈՒՄԻ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿԵԼԵՐՈՒՄԻ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿԵԼԵՐՈՒՄԻ



Ս. ՊԱՏԿԱՐԱՊԵՏ ԶԵՏՈՒՄ ԶԱՅՆԱԿԱՆ ԹԱԿՈՐԸ ԴՈՒՐՄ Է ԳԱԼԻՍ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻՑ

քելական մեր Սուրբ Եկեղեցին առավել ճանաչելի դառնալով՝ առավել սիրելի պիտի լինի մեր զավակներին՝ նրանց հոգիները գորացնելով մեր հայրերի հավատքով: Զույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդների ու ներկայացուցիչների հետ Մեր հանդիպումներով վերստին հաստատվեցինք մեր նդբայրությունը, հավաստեցինք համագործակցելու մեր պարզաստակամությունը՝ հանուն աշխարհում հոգևորի արժևորման ու խաղաղության գորացման:

Ամեն նոր տարվա գլխավոր մաղթանքն է խաղաղությունը: Այսօր, երբ մեր հայացքը ուղղված է 2003 թվականին, մեր հոգու առաջին ձգտումը, առաջին կարևորության մեր նպատակը, սիրելի հայրերից, պիտի լինի համազգային մեր միասնականության առավել ամրապնդումը, մեր հայրենիքի կայունության ու խաղաղության պահպանումը, որպեսզի հայաստանը գիտությամբ, կրթությամբ ու մշակությամբ հզոր, շեն ու բարգավաճ՝ միշտ լինի ապավենն ու հույսը համայն հայության:

2003 թվականը հանգուցային է նախագահական և խորհրդարանական ընտրություններով: Արդար և օրինավոր ընտրությունները հիմնական պայման են ամուր պետականության: Աղոթքը դարձնենք մեզ ուղեկից և արդարը գործենք: Ապավինենք արդարությանը և մեր խղճի ծայնին ունկնդիր, պարասխանաբարության ամենաբարձր զգացումով ու մեր ժողովրդին հատուկ խոհեմությամբ գործելով՝ ընտրությունները դարձնենք ձեռքբերում, գորացնենք մեր պետականությունը, որպեսզի կարող լինենք իրականացնել մեր իղձերն ու երազները, հասնել Արցախի օրինական պահանջի արդար վճռմանը և հաստատուն քայլերով ընթանալ դեպի զարթոնքով լեցուն նոր օրը հայաստանի:

Միքելի բարեպաշտ հայրորդիք ի հայաստան, Արցախ և ի Սփյուռս:

Նախախնամության կամոք մեր ժողովրդի կյանքում նոր տարվա հետ հավաքի, հույսի ու սիրո նորոգման երկնային մի նոր հրավեր է հնչում: Լրանում է Աստվածակառույց Սուրբ Էջմիածնի օծման 1700-ամյա տարեդարձը և Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մաղյան Ողբերգության» աղոթագրքի 1000-ամյան: Տարեմուտի խորհրդաշար այս պահից ևեթ բացենք մեր հոգիները երկնամայն այս հրավերի առջև և սիրով շաղախենք մեր կյանքը, սիրո արժեքով գնահատենք մեր նպատակները:

Ուղիղ մեկ տարի առաջ ասացինք, որ ուխտավորի ճանապարհ ենք անցնում: Հարստի է ուխտավորի մեր ընթացքը: Մեր Ուխտի մարմնացումն է հայոց պետականությունը՝ ամենայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով: Այսօր վերանկախացյալ ու նորոգվող հայաստանի տեսիլքի միջից լսենք մեր պարմության ծայնը, մեր նախնյաց պարգամը, մեր հողի կանչը, մեր սրբերի ու նահապետների արյան պահանջը, որպեսզի միշտ ուխտյալ հոգով սիրենք Աստծուն, մեր հայրենիքն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

«Քինն անց, եւ արդ, նոր եղեւ ամենայն» (*Բ Կորնթ. Ե 17*): Թող նոր տարին սկիզբ առնի ու շարունակվի նոր Օրենությամբ, նոր ինքնորոշումներով ու նոր ուրախություններով, և Շնորհը, Մերն ու Խաղաղությունն Աստծո լինեն մեզ հետ և բոլորի:

Շնորհավոր Ամանոր: Բարի նոր տարի:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՂԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

«Ջրիստրոսականական խաղաղությունը աշխարհի համար է»:
Գարեգին Բ

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնեց Ս. Ծննդյան և Աստվածհայությունից հրաշափառ տոնը: Նախորդ օրը, հունվարի 5-ին, Ս. Էջմիածնում բողոքական հավատացյալներ ճրագալույցի Ս. Պատարագին հաղորդակից դարձան Ս. Ծննդյան ավերիսին:

Հունվարի 6-ին Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Ծննդյան «Յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճություն» ավերիսով հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին:

Հավարտ Ս. Պատարագի Հայոց Հայրապետը կատարեց Ջրօրհների արարողություն, որ խորհրդանշում է Ջրիստոսի Մկրտությունը Հորդանանում:

Ս. Պատարագին և Ջրօրհների արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Զոհրաբյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, պետական պաշտոնապար այլ անձինք, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱԲԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՈՒՆՈՎ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՋՐՕՐՀՆՅԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽԱՉՈՎ ՕՐՀՆՈՒՄԷ ՋՈՒՐԸ, ՋՐՕՐՀՆՅԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ
ԽԱՉԻ ԿՆՁԱՀԱՓՐ, ՌՈՒՍԱՍՏՅԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ
ՊԱՀԵԼ Է ԽԱՉԻ ԸՈՒՇՊԱՆՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԻՅ ՎԵՐՅՆԵԼՈՒ ՋՐՕՐՀՆՅԱՅ ԽԱՉԸ

**ՓՐԿՉԻ ՆՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ՆԱՅՐԱՊԵՏԻ**

**ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ**

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՆԱԿԱՆԵՐԻ,

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ

ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ

**ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՆԵՌԱԳՐԵՐԸ**

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հոռմ)

Առսրանդնուպոլսի Հուսագ Տիեզերական Պապրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պապրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պապրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻՍ Բ (Թբիլիսի)

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒՂԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԶԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պապրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԲԼՈՍ (Ադիս Աբեբա)

Նոդկատրանի Ասորի Մալաբար Ուղղափառ Եկեղեցու պետ. Նորին Սրբություն
ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք.
 Նորին Գերաշնորհություն
ՊԵՏՐՈՍ Է (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք.
 Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անցլիայի Եպիսկոպոսապետ և
 Միաբնակություն, Նորին Գերաշնորհություն
ՌՈՈՒՐՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն
ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Սեբեիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Քելզրադ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱԶՄԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՂՈՒԼՈՍ (Աթենք)

Վարչապալայի և Համայն Լեհաստանի Միաբնակություն, Նորին Սրբություն
ՍԵՎՎԱ (Վարչապալ)

Մինսկի և Սլուցկի Միաբնակություն, Համայն Բելառուսի Պատրիարք.
 Նորին Սրբություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՋՈՒԿԿԱ ՊԱՍՐՄԱ (Նելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների խորհուրդների Միության Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍՄԴԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հայոց Կաթողիկոս-Պատրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*
* *
*

ՎԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱԴԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻՅ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Հոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՍԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ստամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմական առաջնորդներից և Թեմական խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամականեր և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միաբնակիցներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուր

ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուր

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծարգո

ԱՆՈՒԵԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու փորձեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և սպեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային փորձեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլաբենկյան հաստատությունից, Կարազյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների հորինողից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԶԱՐՈՒՀԻ
ԴՈՒՈՒԽԱՆՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱՎ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱԶՆԻԻ ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ԴՈՒՈՒԽԱՆԵԱՆ,
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ**

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով եւ օրհնությամբ Մեր ողջոյնն ենք յղում Ձեզ եւ շնորհատրում շնորհալի ու անուանի հայրուհուդ ծննդեան 85-ամեայ յօրելեանական տարեդարծի առիթով:

Մեծազնի Տիկին Զարուհի Դուլիսանեան,

Ուրախ ենք անդրադառնալու, որ Ձեր կեանքի յօրելեանական այս հանգրուանը Դուք դիմաւորում էք երգարուեստի ասպարէզում մեծ վաստակով, ճանաչուած ու սիրուած երաժշտասէր հասարակայնութեան կողմից, ում նուիրել էք Բարձրեալից առաւօրէն պարգեւ ստացած երգչուհու Ձեր շնորհները, Ձեր անդուլ ջանքերն ու անմնացորդ սէրը:

Տասնամեակներ շարունակ կատարողական բարձր վարպետութեամբ Դուք աշխարհի տարբեր բնահարթակներից մատուցել էք դասական երաժշտութեան գոհարները՝ ծառայելով երգարուեստի ճանապարհով բարու արգասատրմանը մարդկային հոգիներում: Ձեր երգացանկի առանձին մասն են կազմել հայ երաժշտութեան գանձերը՝ իբրեւ վկայութիւն, որ ստեղծագործական Ձեր կեանքն ապրելով Մոսկուայում, Դուք հարազատ գտաւկն էք մեր ժողովրդի եւ կրողը նրա հոգևոր ու մշակութային դարատր արժէքների: Վազգէն Ա Կաթողիկոսի հայրապետութեան շրջանից, երբ դեռ նորընծայ սարկաւազ էիք, Մեր յիշողու-

14 Ա. Մարտի 1991 թ. Ներքին գործերի նախարարի հրամանով հաստատվել է Սուրբ Պատարագի Ձեր հոգեշաղկապ երգեցողության մեջ անցնելիքովն արարողությամբ է Սուրբ Պատարագի Ձեր հոգեշաղկապ երգեցողության Մայր Տաճարում:

Երգչուհու Չեր յաջողութիւնների ու ձեռքբերումների խօսուտն վկայութիւններն են պերական ու միջազգային բազում մրցանակները. կոչումներն ու պարգևները: Մեծ ու գեահարելի է նաեւ Չեր աւանդը երաժիշկների նոր սերունդ պատրաստելու ոչ դիրին գործում: Շուրջ երեսուն տարի դաստաւանդելով Գնեսինների անուան հանրայայտ մանկավարժական երաժիշտանոցում՝ այսօր Երաժշտութեան Ռուսական Ակադեմիայում, Դուք Չեր սասներին էք փոխանցել ոչ միայն Չեր բազմափորձ գիտելիքներն ու վարպետութիւնը, արուեստագէտի ճաշակը, այլ նաեւ կրթել էք նրանց երգարուեստի հանդէպ սիրով ու մարդկանց ծառայելու նուիրումով: Այսօր Դուք հայարտութեամբ կարող էք անուանապէս յիշել բազմաթիւ Չեր սանուիրումով: Այսօր Դուք հայարտութեամբ կարող էք անուանապէս յիշել բազմաթիւ Չեր սանուիրումով: Այսօր Դուք հայարտութեամբ կարող էք անուանապէս յիշել բազմաթիւ Չեր սանուիրումով: Այսօր Դուք հայարտութեամբ կարող էք անուանապէս յիշել բազմաթիւ Չեր սանուիրումով:

Մեծագնի փիլիև Դուլիսանեան, երգարուեստի անդամարանում Ձեր աւանդի բարձր գնահատարանով, ընդառաջ Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հաւու թեմի առաջնորդ Գեորգեանի Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնգրակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԵՆՔԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատույ թարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամ Աստուած Իր օրհնութեան մէջ պահպանի Ձեզ եւ պարգեւի քաջատեղ արեւշարութիւն. նոր ուրախութիւններ ու երջանկութիւն: Թող միշտ ուղեկից լինեն Ձեզ Ձեր երկրպագուների ու սաների նրախորագիտութիւնն ու սիրտը:

Ողջ լերուզ ի Տէր, գօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 30-ն Յունուարի
յամի Տեառն 2003 եւ ի թուին եպոց ՌՆԾԲ
ի Մայրապաւան Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 123

ՆԱՅԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի հունվար ամսվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի Կոնդակով

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է
Նիկոլայ Քոչարյան (Ուկրաինայի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Սրբոց Նահապետաց եկեղեցի (ԱՄՆ Արևելյան թեմ)
Հայաստանի ծնողագուրկ երեխաներին օգնող
CYMA կազմակերպությանը (Կանադահայոց թեմ)

**ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆԱՓԱՌ-ՆԱՅՐԱՊԵՏԸ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՏԻՆ
ՓՈԽԱՆՅԵՅ ԱՍՈՐԻ ՈՒՂԱՓԱՌ-ԵԿԵՂԵՅՈՒ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ**

Հունվարի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանին փոխանցեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու պեպ Նորին Սրբություն Մար Իզնապիոս Զաքարյա Ա Իվաս Պատրիարքի կողմից պրն Խաչատրյանին շնորհված Ասորի Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս. Իզնապիոս Թեոֆորոս» շքանշանը:

Սա Զաքարյա Պատրիարքի գնահատությունն է ՀՀ ԱԺ նախագահին՝ հայ Եկեղեցու հանդեպ ցածրած սիրտ և նախանձախնդիր վերաբերմունքի համար:

«Մեզ համար մեծ ուրախություն է կարարել ցանկությունը մեր հավատակից Եկեղեցու գահակալի, որն անցած տարի էյուրընկալվեց Մայր Աթոռում և այցի ընթացքում հանդիպում ունեցավ նաև ձեզ հետ», - շնորհավորելով պրն Խաչատրյանին և մաղթելով նրան հաջողություններ իր գործունեության մեջ, ասաց Վեհափառ հայրապետը:

Շնորհակալության և երախտագիտության խոսքերով ընդունելով Պատրիարքի բարձրագույն պարգևը՝ պրն Խաչատրյանը կարևոր նկատեց հասարակական կյանքում քրիստոնեական բարոյական արժեքների հաստատումը: ԱԺ նախագահը հավաստիացրեց, որ այսուհետև ևս կշարունակի իր գործունեությունը ի բարօրություն հայ ժողովրդի և Եկեղեցու:

Շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին Ս. Ներսես արքեպս. Պողոսյանը և Ս. Փառեն եպս. Ավետիսյանը:

**ՄԱՅՐ ԱԹՌՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ԱՅՍ ՏԱՐԻ ԿՏՈՆՎԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունները կազմակերպելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաղղիկ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնտրիությամբ ստեղծվել է հանձնախումբ՝ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի արեւնապետությամբ:

Օրերս Խաժակ Սրբազանի նախագահությամբ Մայր Աթոռում տեղի ունեցավ հանձնախմբի երկրորդ նիստը, որի ընթացքում հաստատվեցին տոնակատարությունների հիմնական ծրագիրն ու ժամանակացույցը: Ժողովականներն ընդգծեցին, որ Մայր Տաճարի 1700-ամյակի տոնակատարությունները միևնույն ժամանակահատվածում կհանդիմանա միջոցառումները՝ ուխտագնացություններ դեպի Ս. Էջմիածին, Հայաստանյայց Եկեղեցու բոլոր թեմերի և երիտասարդական միությունների ներկայացուցիչների հավաքներ և այլ ծրագրեր: Տարին կնշանավորվի նաև միջազգային գիտաժողովով և զանազան հրապարակություններով:


Հոբելյանական ողջ փարվա ընթացքում Հայոց Եկեղեցու բոլոր թեմերից կկազմակերպվեն առանձին ուխտագնացություններ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր ուխտավորների ամեն մի խումբ իր թեմակալ առաջնորդի հետ միասին կմասնակցի Ուխտի Պատարագի:

Հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի մեկը նախատեսվում է Հայ Եկեղեցու թեմական ներկայացուցիչների հավաք:

Եկեղեցասեր երիտասարդաց թեմական պատգամավորական առաջին համագումարը, որը նախատեսվում է հուլիսի առաջին տասնօրյակի ընթացքում, կազդարարի Հայ Եկեղեցու երիտասարդական ընդհանուր կենտրոնի ստեղծման մասին: Այդ օրերին կրկին նախատեսվում են ուխտագնացություններ Հայաստանի և Արցախի տարբեր սրբավայրեր՝ մասնակցությամբ Հայ Եկեղեցու բոլոր թեմերից ժամանած երիտասարդների:

Այս փարի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի 1700-ամյակին նվիրված հանդիսությունների շրջանակում կազմակերպվելու է նաև միաբանական համագումար, որը տեղի կունենա հուլիսի 23-27-ը Սևանի Վազգենյան դպրեվանքում: Համագումարին մասնակցելու է Մայր Աթոռի աշխարհասփյուռ ողջ միաբանությունը:

Հոբելյանի առիթով նախատեսվում են նաև մի շարք ալբոմների և գրքերի հրապարակություններ՝ նվիրված Ս. Էջմիածնին, Մայր Տաճարի պատմությանն ու խորհրդին:



**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՄՄԿԱՐԳ**

ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ միջթեմական երիտասարդական ներկայացուցչական ժողով՝ Ս. Հովնաթ արքեպս. Տերտերյանի նախագահությամբ: Ժողովին մասնակցում էին Հայաստանի թեմերի երիտասարդական միությունների ներկայացուցիչներ: Հավաքը, որ նախապատրաստական բնույթ էր կրում, նպատակ ուներ նախանշելու այն ծրագրերը, որոնք հիմք կծառայեն Հայ Եկեղեցու երիտասարդական ընդհանուր կենտրոնի ստեղծման համար:

Երիտասարդական այս նոր կազմակերպության առաջին պատգամավորական համագումարը նախատեսվում է այս փարվա հուլիսի առաջին տասնօրյակի ընթացքում: Այդ օրերին նախատեսվում են նաև ուխտագնացություններ Հայաստանի և Արցախի տարբեր տրբավայրեր:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՀՈՒՄԻԿ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻՑՈՎ

(1 հունվարի 2003 թ.)

«Ցանեուն Հօր եւ Որդոյն եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալ եղբայրներ և քույրեր, հայրեր և մայրեր.

Պողոս առաքյալը երբ Հոռնի բանաբանում էր, փնտրեցանում է այն մասին, որ կողոսացիների համայնքում շատ մարդիկ զգրնվում են մի նոր քարոզություն փարածողների ազդեցության տակ, ինչի պարճառով համայնքի ներսում տնտնում երկպառակություններ և կարգապահական խախտումներ: Այս երկպառակությունը փարածողներն ասում էին, որ Աստծուն առավել լավ ճանաչելու և փրկվելու համար անհրաժեշտ է մատուցել պաշտամունք ինչ-որ հոգևոր գորությունների համար, նաև ձեսերի մեջ որոշ փոփոխություններ կատարել և օգտվել արգելված կերակուրներից և խմիչքներից: Պողոս առաքյալը խիստ մտա-հոգված սրբեղծված վիճակից, մի նամակ է գրում կողոսացիներին և ասում. «Քրիստոս գե-րիվել է բոլոր տեսակ գորություններից, Նա է գլուխը եկեղեցու, Նրան է պատկանում բարձրագույն իշխանությունը և Աստծո կողմից մեզ շնորհված ի Քրիստոս փրկությունը»:

Սիրելի հավաքացյալներ, ուշադիր լսեցեք, թե Պողոս առաքյալն այդ նամակում ինչքեր է ասում կողոսացիներին. «Հրաժարվեցեք պոռնկությունից, հոռի կրքերից, սպախոսությունից. ձեր վրայից հանեցեք ինչ մարդուն և հագեք նոր մարդը՝ իր բարի գործերով, որ է՝ գթություն, ողորմություն, համբերաբարություն և սեր: Այդ սերը և Աստծո խաղաղությունը բոլորիդ սրտերի մեջ թող հաստատվի ընդմիշտ» (Հմմտ. Կոլ. Գ 5-10):

Առաքյալի կողոսացիներին ուղղված այդ հորդորը մի սրտառու է կոչ էր՝ հոգևոր կյանքը վերստին սերտացնելու և գորացնելու համար:

Այսօր, սիրելիներ, առաջին օրն է նոր տարվա, 2003 թվականը: Որպես ժամանակ՝ այն ինքն իր մեջ որևէ առանձնահատուկ բան չունի: Ինչպես 2002 թվականի դեկտեմբերի 31-ին երկրագնդի վրա ծագեց արևը, նույնպես և այսօր՝ հունվարի 1-ին էլ նույն արևը դարձյալ ծագեց աշխարհի վրա: Ժամանակ հասկացողությունը անսկիզբ ու անվախճան է, միշտ անփոփոխական: Մեր կյանքի ժամանակն է, որ անցնում է: Այն կարճ է հավիտենական ժամանակի մեջ:

Նոր տարվա առաջին օրը միայն կերտխումով և այլ զվարճություններով չանցկացնենք, հարկ է, որ նախ մեր հոգիները նորոգենք և մեր մեջ անցյալ տարվանից մնացած բոլոր տեսակի չարությունները, անկարգությունները, չար մտածումները, այդ ամենը դեն նետենք մեր վրայից և այս նոր տարվա առաջին օրը հագնենք նոր մարդը: Այս է նոր տարվա իրական իմաստը, նոր տարվա մեծ խորհրդի իմաստը: Զուր է, եթե նոր տարին տոնենք միայն կերտխումով: Նեթանոսներն էլ էին նույնը անում, բայց քրիստոնյաները պարտ է, որ նախ հին մարդը իրենց վրայից հանեն, նորոգվեն և նորոգյալ հոգիներով եկեղեցիներ զան ու Աստծուց խնդրեն՝ աշխարհին տալ երկարափն խաղաղություն, մարդկանց միջև հաս-տատվել հաճություն:

Նոր փարի. նոր օր է: Նոր կյանք է սկսվել երկրագնդի վրա ողջ մարդկության համար: Նոր փարվա յուրաքանչյուր օր լցնենք աստվածահաճ գործերով: Ինչ է բարեգործությունը, եթե ոչ օգնել կարողություններին, եիվանդներին, ձեռդագուրկ փոքրիկներին, հաշմանդամներին, ուստի ձեռք մեկնենք հանապազօրյա հացի, հագուստի և սննդի կարողություններին: Բոլորիս համար թող փխպար օրինակ լինի բարի սամարացին որպես զթասիրտ և ողորմած հոգի:

Այսօր փարին ունի նաև Ս. Ծննդյան հրեշտակային օրհնաբանության, խաղաղության պատգամը: Յուրաքանչյուր անձ կարիք ունի եիսուսավանդ խաղաղության, մարդ արարապարգամը: Յուրաքանչյուր անձ կարիք ունի եիսուսավանդ խաղաղության, մարդ արարապարգամը: Յուրաքանչյուր անձ կարիք ունի եիսուսավանդ խաղաղության, մարդ արարապարգամը: Յուրաքանչյուր անձ կարիք ունի եիսուսավանդ խաղաղության, մարդ արարապարգամը: Յուրաքանչյուր անձ կարիք ունի եիսուսավանդ խաղաղության, մարդ արարապարգամը:

Միրելի քույրեր և եղբայրներ, այս փոռական օրերին ողջունեցեք միմյանց ուրախության շնորհավորանքներով՝ շնորհավոր Նոր փարի և բարի փոռ:

Մաղթանք Հայ Եկեղեցուն.

Հայ Եկեղեցին 17 երկար ու ձիգ դարեր իր բովանդակ կյանքը նվիրաբերել է հայրենիքի ու ժողովրդի բարօրությանը, իր կյանքը նույնացրել իր ժողովրդի կյանքի հետ, նրա փառապանքների ու երազների հետ: Եկեղեցին, բանաստեղծի բառերով, եղել է մեր ողջ ազգի հոգու ծննդավայրը, և այս ուժն արդեն հայտնվել է մեր մեծանուն երախտավորների միջոցով՝ Ս. Գրիգոր Լուսավորչի, նրա որդիների ու թոռների՝ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Ս. Վարդանի, Ս. Ղևոնդ Երեցի, Ս. Գրիգոր Նարեկացու, Ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հայրիկի, Խորեն Ա Մուրադբեկյանի, Վազգեն Ա և Գարեգին Ա Երջանաճիշտարակ Հայրապետների միջոցով:

Այս փարի, սիրելի հավաքացյալներ, եիշտականության փարի է լինելու համայն հայության համար: Կարարվելու է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրման և օծման 1700-ամյակը: Ինչպես ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետն է իր ամպնոթյա շնորհավորական խոսքում ասում. «Ցնծում է Հայրապետիս հոգին, քանզի Ս. Ծննդյան նոր կյանքի լույսով օծուն հայոց կյանքում նշանակալի է նվիրական իրադարձությամբ՝ քրիստոսահիմն Ս. Էջմիածնի 1700-ամյա հոբելյանով»:

Վեհափառ Հայր, մաղթում ենք Ձեզ՝ գալիք երանելի ժամանակներում Ձեր Սուրբ Օծության մյուռնաբույր Աթոլ նորոգեք և օծեք հայի հոգու և սրտի արգասիքը եղող հայ ճարտարապետության գոհարները՝ Կարսի, Անիի և Աղթամարի եկեղեցիները, և թող զան բազում հայորդիներ Աուր Հաղորդության: Ինչպես որ Վահան Թեքեյանն է ասում.

«Եկեղեցին հայկական մեծ վարագոյր մ'է բանուած,

Որուն ելքն, սկիհին մէջ կ'իջնէ ինքը Աստուած,

Որուն առջն զլիսահակ կուգայ իմ ազգըս ամբողջ՝

Հաղորդուիլ անցեալին հազ ու գինով կենսատողը ...»:

Ավարտելով խոսքս, Վեհափառ Հայրապետ, թույլ տվեք ինձ Նոր փարվա և Ս. Ծննդյան երջանկաբեր աուր փոռերի առիթով սրբանք շնորհավորել Ձերոց Սրբությանը՝ մաղթելով Ձեզ երկար կյանք, քաջառողջություն և արդյունաշատ գործունեություն՝ ի փառս Աստծո և ի երջանկություն հայ ժողովրդի. ամեն:

**Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՊՈԶՄՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ**
(26 հունվարի 2003 թ.)

*Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը,
բայց սեր չունենամ, կեմանվեմ մի պղնձի, որ հնչում
է, կամ ծնծղաների, որ դողանքում են»:*

(Ա Կորնթ. ԺԳ 1)

Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին գրած թղթի մեջ երբ սիրո մասին կխոսի առաքյալը, աստվածային սերը բացատրելու համար նժարի մեկ ափին կզնն աստվածային սերը և մյուս ափի մեջ՝ մարդոց և հրեշտակներու լեզուները խոսելու կարողությունը, որը, սակայն, առանց սիրո կնճանկի ծնծղայի դողանքի և կամ է՝ պղինձի ծայնի:

Կշեռքի մյուս ափին կավելացնե առաջին մտահանգումի կողքին հերկյալը, որ եթե աշխարհի բոլոր գիտելիքները կարողանամ ամբարել և կյանքի բոլոր խորհուրդները կարողանամ իմանալ, մարգարեանալու շունչ ունենամ և հավաքը ունենամ մինչև իսկ լեռները շարժելու, սակայն սեր չունենամ ոչինչ եմ: Երրորդ պարագան կավելացնե սիրո նժարի մյուս ափին՝ ասելով. եթե իմ ամբողջ հարստությունն աղքատներին բաժնեմ և իմ մարմինն այրվելու փամ, ոչ մեկ օգուտ չեմ ունենա առանց սիրո: Ի՞նչ է այս սերը, սիրելի հավաքացյալներ:

Աստվածաշունչը մեզ ասում է, որ Աստված սեր է, և Աստծո սիրո արգասիքն իր Որդու մարմնանալն էր և աշխարհ գալը՝ մարդեղությունը, որ մի քանի շաբաթ առաջ տոնեցիք մեր եկեղեցու մեջ: Հիսուսի ծնունդը Աստծո սիրո լավագույն պտուղն էր, որովհետև Աստված Ինքը սեր է. Իր Որդին էլ սեր է անկասկած կերպով: Այս մասին Պողոս առաքյալն ասում է, թե սերը չի նախանձի, չի հպարտանա, չի գոռոզանա, իրենը չի փնտրի, ընկերոջ անկումի վրա չի ծիծաղի, այլ նրա հաջողությանը խնդակից կլինի, կուրախանա և, ինչպես առաքյալն է ասում՝ սերը ողորմած է, գթասիրտ է և աշխարհի լույսն է:

Այդպես է, սիրելի հավաքացյալներ, որովհետև իր Որդին սեր է, սիրո Պարկեր է, որ աշխարհ եկավ և Իր աշակերտներից երկուսին առաքեց Հայաստան, որպեսզի աստվածային լույսը ճառագի մեր երկրի մեջ: Իր աշակերտներին հաջորդեցին եպիսկոպոսներ, բայց Ս. Գրիգոր Լուսավորիչը եղավ միակ անձնավորությունը, որ կարողացավ այդ սերը երկնքից երկիր իջեցնել և այս սուրբ տաճարը հիմնվեց Տիրոջ ոսկի մուրճի երեք անգամ զարկով և հրահանգելով Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որ այստեղ՝ հեթանոսական ապրուշանի վրա, այդ, կառուցիր Իմ աղոթքի տունը:

Ավանդությունն ասում է, որ Նոյ նահապետը երբ Արարարի բարձունքից ջրհեղեղի ավարտին իջավ Այրարատյան աշխարհ, նա եկավ այստեղ՝ Վաղարշապատ քաղաք, որ գոյություն չուներ և հավանաբար միակ չոր հողն էր այստեղ, և այստեղ իր առաջին գոհաբանական աղոթքը մատուցեց Աստծուն: Այստեղ իր գոհը մատուցեց՝ շնորհակալություն հայտնելով Աստծուն, որ ջրհեղեղից զինք և ամբողջ իր ընտանիքը, կենդանական աշխարհով

մեկ տրապանի մեջ բովանդակելով, կարողացավ ազատի: Ավանդությունն ասում է, թե Նոյից հետո այս տեղը՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարի վայրը, գոհարան, աղոթարան դարձած է եեթանոս մեր նախնիների ժամանակ, և այդ իսկ պարճառով այստեղ արարուշան են կառուցել, որպեսզի այստեղ գոհոր մարտցվեն այն ժամանակվա չաստվածներին: Բայց Աստված խորախորհուրդ է, ամեն բան նախօրոք գիտե և իր խորհրդով անհաս և անհասկանալի, կկառուցե վայրեր, որտեղ ինքը ապագայում պիտի գա և բնակվի:

Այդպես էլ եղավ: Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ թագավորի՝ քրիստոնյա դառնալուց հետո, նրան մկրտելուց հետո, երբ Վաղարշապատ քաղաքի դաշտերի մեջ, հնձանեերի մոտ կաղոթեր գիշերները, ինչպես որ պարմիչն է ասում, թե կրուսացներ գիշերները աղոթեով, նրա աղոթքը միայն Հոփսիսյանց, Գայանյանց կույսերի և մյուս քրիստոնյա նահապետների հոգիների փրկության համար չէր, այլև ցանկությունը՝ տեսնելու աստվածային դեմքը Հիսուս Զրիստոսի: Եվ իր փափագը անկապար չմնաց:

Մի գիշեր երկնքի դռները բացվեցին, և Աստվածորդին հաշտականների խմբով և օրհներգությամբ, փողերով, շփորներով իջավ այս վայրը, հաստատեց այս եկեղեցին, որ 1700 տարիներ ի վեր Հայ եկեղեցու առաքելական, առաքելաշավիղ մեր եկեղեցու կենտրոնն է, և այստեղ դարեր շարունակ քրիստոնյա ուխտավորներ, հայ ժողովրդի զավակներ կամ օտարներ եկել են իրենց երկրպագությունն անելու, ինչպես Հիսուսի մատրի մեջ հղած ապարներ եկել են իրենց երկրպագությունն անելու, ինչպես Հիսուսի մատրի մեջ հղած ապարներ եկել են իրենց երկրպագելու Անտր առջև և իրենց ընծաները նվիրելու մանկացյալ տեն երեք մոգերը եկան երկրպագելու Անտր առջև և իրենց ընծաները նվիրելու մանկացյալ Փրկչին, այնպես էլ այստեղ եկան ուխտավոր մարդիկ և դարեր շարունակ, երևակայեցե՞ք տասնյոթ դար շարունակ իրենց ընծաներն են մարտցում մեր Տիրոջ Իջման Սուրբ Անդանի առջև:

Այսօր, երբ մեր Վեհափառ Հայրապետը հրահանգում է, որ 1700-ամյակը տոնվի այս տաճարի կառուցման, այս սրբատեղիի քրիստոնեացման, մենք խոնարհաբար գալիս ենք վերիջելու մեր անցյալի պարմությունը և փառք տալու Աստուծո, որ Գրիգոր Լուսավորչին իր ինքնությունը և հավատքը ցույց տվեց և տակավին ցույց է տալիս պարմության ողջ ընթացքում:

Մենք, որպես ժողովուրդ, պետք է հայարտ լինենք որպես քրիստոնյաներ, քրիստոնեական հայրություն՝ խոնարհության միջից ոչ թե արհամարհելով ուրիշներին, այլ հպարտ լինենք, որ ունենք եկեղեցական այսպիսի հարուստ ավանդույթ, այսպիսի ժառանգ, որ անկողապարելի է երկնավոր գանձի նման, ուր ո՛չ ուրիճները և ո՛չ էլ ցեղերը չեն կարող հասնել 1700 տարվա մեր պարմության ընթացքին: Ինչպիսի երդաններ, թշնամիների բանակներ եկել և անցել են այստեղից, բայց բոլորի կզակները շարովել են Աստծո կամքի առջև:

Կուգեմ, որ ձեր մեջ այս գիտակցությունն արժապարկովի, հպարտ լինեք, որ Ս. Էջմիածինը ունենք, և Աստված բազում 1700 տարիներ շնորհե, որպեսզի մենք Իր լույսի ճամփան կարողանանք քայլել այս կյանքում և փառք տալ Միածին Որդուն Աստուծո: Թող Սուրբ Հոգու շնորհները բոլորիս հետ լինեն այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(19 հունվարի 2003 թ.)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Սիրելի հավաքացյալ ժողովուրդ,

Հայ Եկեղեցին եկեղեցական փարին սկսում է Ս. Ծննդյան փոներով: Հայ Եկեղեցին է միայն, որ պահպանել է առաքելական ավանդությունը եւ Ս. Ծննդյան փոնակափարությունը: Քրիստոսի մկրտության փոնակափարության հեփ միասին ամեն փարի փոնում է հունվարի 6-ին: Սակայն ինչպես առաքելական շրջանում, այնպես էլ այսօր Ծննդյան օրերը մեկ օրվա մեջ չեն սահմանափակվում: Նրանք սկսվում են հունվարի 5-ին, որ հնում կոչվում էր Լույսի փոն, և այժմ մենք կափարում ենք ճրագալույցի Ս. Պատարագը եւ մինչև Անվանակոչության փոնը, այսինքն՝ մինչև հունվարի 13-ը, ամեն օր Ծննդյան փոներ են:

Այսօր առաջին կիրակին է Ծննդյան փոներին հաջորդող: Մեր եկեղեցական օրացույցի բազմաթիվ կիրակիներ ունեն իրենց հափուկ փոները: Մենք Հոգեգալստյան կիրակին ունենք՝ Հոգեգալստյան փոնը, Վարդավառի կիրակին, Ս. Աստվածածնի Վերափոխման կիրակին, Խաչվերացի կիրակին, Վարագա Ս. Խաչի կիրակին եւ այսպես շարունակ: Մնացած բոլոր կիրակիները, որոնք հափուկ փոներ չունեն, նվիրված են Ս. Հարության հիշատակին:

Այսօր, սակայն, և այս փարվա բոլոր կիրակիները մեզ համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եպիսկոպոսաց դաս, Մայր Աթոռի միաբան հայրեր, սարկավագներ, Հոգևոր Ճեմարանի ուսանողներ և դուք, սիրելի հավաքացյալ ժողովուրդ, մեր բոլորի համար այս փարվա կիրակիները առանձնահատուկ նշանակություն ունեն, որովհետև հայրապետական փոնությունում այս փարին հոչակվել է այս Տաճարի՝ Սուրբ Էջմիածնի մեր Մայր Տաճարի հոգեպանական փարի, որովհետև այս փարի լրանում է 1700-ամյակն այս Տաճարի շինության և օծման:

Դարձյալ հայրապետական կարգադրությամբ այս փարվա բոլոր կիրակի օրերին Մայր Տաճարում Ս. Պատարագ պնդք է մատուցեն եպիսկոպոսները, և այսպիսով աշխարհի վրա փարածված մեր բոլոր թեմերն իրենց առաջնորդներով հանդերձ և իրենց հավաքացյալ ժողովուրդով հաջորդաբար ուխտի պնդք է գան Մայր Աթոռ Ս. Էջմիածին և իրենց աղոթքը և ուխտը մատուցեն այս Սուրբ Սեղանի վրա:

Երբ Քրիստոսի Համբարձումից հետո Տիրոջ առաքյալները փարածվեցին՝ քարոզելու քրիստոնեությունը ամբողջ աշխարհով մեկ, փարքեր քաղաքներում նրանք հիմնեցին Եկեղեցիներ: Այսպես հիմնվեց Կորնթոսի Եկեղեցին, Հռոմի Եկեղեցին, Երուսաղեմի Եկեղեցին, Անտիոքի Եկեղեցին և բազմաթիվ ու բազմաթիվ ուրիշ Եկեղեցիներ: Եվ առաքյալները յուրաքանչյուր Եկեղեցու գլուխ ձեռնադրեցին մի եպիսկոպոսի:

Այսպիսով, երկու հարյուր փարի անց քրիստոնյա աշխարհում բազմաթիվ եպիսկոպոսներ կային իրենց Եկեղեցիներով: Սակայն առաջին օրվանից իսկ մինչև այսօր մենք այն

համագուման ունենք, որ այդ բոլոր Եկեղեցիներն առանձին կամ բազմաթիվ Եկեղեցիներ չեն, այլ այդ բոլոր Եկեղեցիները կազմում են մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի մեկ Եկեղեցին՝ իր բազմաթիվ տեղային ճյուղավորումներով: Եվ այսպես Քրիստոսի առաքյալներից երկուսը՝ Ս. Թադեոսը և Ս. Բարդուղիմեոսը, Հայաստան եկան, որոնք իրենց նահապարկությամբ հիմնեցին Հայաստանի Եկեղեցին, և այդ պարճառով է, որ մենք մեր Եկեղեցին կոչում ենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի:

Անցան դարեր, և երբ քրիստոնեությունը բազմաթիվ հալածանքների էր ենթարկվում ինչպես Հռոմեական կայսրության մեջ, այնպես էլ Հայաստանում, որովհետև հեթանոս երկիրներ էին, Աստված հիշեց Իր Եկեղեցին, որ հիմնել էր Հայոց աշխարհում, և Աստված երկիրներ էին, Աստված հիշեց Իր Եկեղեցին, որ հիմնել էր Հայոց աշխարհում, և Աստված այցելության եկավ մեզ: Նա նախ հաղթել առաքելությամբ մեր երկիր ուղարկեց մեր հավատքի Հորը՝ Ս. Գրիգոր Լուսավորչին, որ ձեզ ծանոթ պատմություններով դարձի բերեց հայոց արքային, դարձի բերեց հայոց արքունիքը և ողջ հայ ժողովրդին: Այդ պահից սկսվեց այս Տաճարի կառուցումը: Եվ եթե աշխարհում բազմաթիվ ավելի մեծ ու ավելի փառավոր տաճարներ կառուցվեցին անցնող 2000 տարիների ընթացքում, ապա այս Տաճարը առանձնահատուկ նշանակություն ունի ոչ միայն մեզ՝ հայ ժողովրդին և Հայ Եկեղեցու համար, այլ նաև ողջ քրիստոնյա աշխարհի, որովհետև այս Տաճարի հիմքը ոչ թե մարդը դրեց, այլ նույն ինքը՝ Հիսուս Քրիստոս:

Այն ժամանակ, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը աղոթում էր ինքնամոռաց ապրումով և փնտրում, Հիսուս հրեղեն մուրճը ձեռքին իջավ այստեղ, հարվածեց այս գեղին, այդ դուռը, որտեղ հիմա բարձրանում է Իջման Սուրբ Սեդակը, և որի շուրջ հավաքված եք դուք, և պարվիրեց, որ այստեղ կառուցեն Ս. Տաճարը՝ միաժամանակ լուսեղեն գծագրմամբ ցայց տալով այն ձևը, որով պեղք է այս Ս. Տաճարը կառուցվել: Եվ անմիջապես թագավորն իր ուսերին Մասյաց լեռներից հսկա քարեր բարձաձ բերում էր այստեղ, և ողջ ժողովուրդը լծվեց այս Տաճարի շինությանը, որն ավարտվեց 303 թվականին և այսօր լրանում է կառուցման և օծման 1700-ամյակը:

Ինչպես արդեն ասացի, առաքյալները բազմաթիվ Եկեղեցիներ հիմնեցին աշխարհում մեկ: Այդ Եկեղեցիները կանգուն են մինչև այսօր և այդ Եկեղեցիներից շատերը կրում են հենց այն քաղաքի անունը, որտեղ որ հիմնադրված են և ազգային փառքերակիչ նշանակություն չունեն, ինչպես օրինակ՝ Անտիոքի Եկեղեցին, Ալեքսանդրիայի Եկեղեցին: Մակայն հիմնվեցին նաև Եկեղեցիներ, որոնք ոչ թե քաղաքի անվան հետ էին կապված, այլ կապված էին ժողովուրդների անվան հետ, ինչպես, օրինակ, Հայոց Եկեղեցին, Վրաց Եկեղեցին, այնուհետև Բուլղար Եկեղեցին, Ռուսաց Եկեղեցին և այլն: Ազգային փառքերակում ունեցող Եկեղեցիների համար այնքան էական չէր, թե որտեղ էր գտնվում այդ ազգի գլխավոր տաճարը՝ Մայր Տաճարը: Եվ եթե Ռուս Եկեղեցու առաջին տաճարը գտնվում էր Կիևում, ապա այն այժմ գտնվում է Մոսկվայում, և այսպես բազմաթիվ օրինակներ կարելի է բերել:

Մեր ժողովուրդը, սակայն, միայն պատմական դժվարին պայմանների բերումով հարկադրաբար ստիպված եղավ հաշտվել այն մտքի հետ, որ հայրապետական Աթոռը Ս. Էջմիածնից ղեկավարելու է փառքեր քաղաքներ, այնպեղ, ուր որ գտնվում էր այն ժամանակվա քաղաքական իշխանությունը՝ Դվին, Անի, Արգինա, Ծամնդավ, Հռոմկլա, Սիս և այլն: Հայ ժողովուրդը կարողացավ հասնել այն գաղափարին, որ անգամ մի փոքր չի կարելի Մայր

Աթոռը և ազգը բաժանել իրարից: Եվ այս մտածողության արդյունքն էր, որ 1441 թ. Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը մեկ անգամ ընդմիջարկ վերադարձրեց և վերահաստատեց Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռն այսպեղ, այս Տաճարում, որ հիմնադրվել է Հիսուս Քրիստոսի ձեռամբ:

Երբ մենք եկեղեցի ենք ասում, փարբեր բաներ ենք հասկանում. եկեղեցի ասելով մենք հասկանում ենք քարաշեն մի կառույց, եկեղեցի ասելով մենք հասկանում ենք նաև հոգևորականների և հավատացյալների, մի ամբողջություն, մի միություն, այսինքն՝ այսպեղ այսօր գոյություն ունի և՛ քարեղեն կառույցը, և՛ ժողովուրդը՝ հոգևորական և աշխարհական միասին վերցրած: Կա նաև Հաղթական Եկեղեցի, այսինքն՝ այն սուրբերը, այն քրիստոնյաները, որոնք սուրբ կյանքով են ապրել, որոնք վախճանվել են և որոնք արժանացել են կամ պիտի արժանանան Աստծո արքայությանը:

Բ դարի նշանավոր հայերից Ս. Իգնատիոս Անրիոքացին ասում է, որ Եկեղեցին Աստծո և մարդու հարաբերությունն է, իսկ մեկ այլ նշանավոր հեղինակ, Բ դարի ամենանշանավոր աստվածաբան Ս. Իրենիոսը, որ Լիոն քաղաքի եպիսկոպոսն էր, ասում է. «Եկեղեցին՝ Հայր Աստծո և Քրիստոսի և Սուրբ Հոգու, այսինքն՝ Սուրբ Երրորդության ներկայությունն է»: Այսինքն բավական չէ, որ մենք մի քարեղեն կառույց կառուցենք և հավաքվենք այնպեղ և ասենք, որ մեր Եկեղեցին իրականացավ: Անհրաժեշտ է, որ այդ Եկեղեցում նաև Սուրբ Հոգին լինի, որ այդ Եկեղեցում մենք զգանք Աստծո ներկայությունը:

Եվ այդ է, որ առանձնացնում է Ս. Էջմիածնի այս Տաճարը, որպեղ 1700 փարի շարունակ Սուրբ Հոգին ներկա է եղել՝ հիմնադրման օրվանից մինչև այսօր: Եվ Սուրբ Հոգու այդ ներկայությունն է, որ մենք՝ ամեն մի հայ, որ մտնում է այս Տաճարից ներս, զգում և իր հետ փանում է իր փունը, քաղաքը և գյուղը, և իրենց հոգիներում հաստատված Սուրբ Հոգու այդ ներկայությունն է, որ երբ նրանք գնում են իրենց քաղաքի կամ գյուղի եկեղեցին, այն զգացողությունն են ունենում, թե իրենք գնում են Ս. Էջմիածին:

Սիրելի հավատացյալներ, ահա այս մտածումներով եկեք միասին աղոթենք առ Աստված, որ Տերը անսասանություն պարզևի այն Սուրբ Տաճարին, որ Ինքն Իր ձեռքով է հիմնել, որ Տերը անսասանություն պարզևի Հայրապետական այն Աթոռին, որն Իր առաքյալներն են իրենց աղյան գնով հաստատել, և մեր հավաքի Հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը վերակենդանացրել է:

Եվ թող Տերը երկար-երկար փարիների արևշատություն և բեղմնավոր գործունեություն պարզևի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ բազմել է առաքյալների և Լուսավորչի գահին և առաջնորդում է մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին այս դժվար օրերի մեջ դեպ փրկության նավահանգիստը՝ Երկնքի Արքայությունը:

«Շնորհք Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեւեհանս ամէն»:

Տ. ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏԻՐՈՋ ԱՆՎԱՆԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(13 հունվարի 2003 թ.)

Գոհություն և փառք Ամենաբարձրյալն Աստուծո, որ նվաստիս առիթը տվավ գրեցնելու Մայր Հայրենիք և Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ծննդյան այս տոնների առիթով, և այս առթիվ կուգեմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Ամենայն Հայոց Հայրապետին, որ հրավիրեց զիս Մայր Աթոռ՝ ներկա լինելու Ծննդյան տոնակարարություններուն: Նաև իմ եղբայրական պարտքն եմ համարում հայտնել իմ խորին շնորհակալությունները Հոգեշնորհ Տ. Արարկ վարդապետ Տիգրանյանին, որ հրավիրեց պարարագելու Անվանակոչության տոնին առիթով: Ինձ համար հոգեկան մեծ հրճվանք մըն է այսօր՝ 16 փարիներն ետք վերստին պարարագելու աստվածակառույց Ս. Էջմիածնի Ավագ Սեղանի վրա:

«Յաւուն Հօր եւ Որդոյ եւ Հօգոյն Սրբոյ. ամէն»:

«Եւ կոչեցաւ ամուն նորա Յիսուս» (Ղուկ. Բ 21). Հստ հրեական սովորության, երբ մեկը արու զավակ կուսենար, ութ օրեր ետք կտանեին զայն թւիաւորելու և ապա կանվանեին երեխային: Հստ այդ սովորության, Քրիստոսի ընտանիքը՝ հայրը՝ Հովսեփ, և Մայրը՝ Մարիամ, պահեցին այդ սովորությունը և ութ օրեր ետք, թւիաւորել հետո կոչեցին զԱյն Հիսուս, ինչպես հրեշտակները պատվիրել էին Հովսեփին ու Մարիամին:

Այսօր համայն քրիստոնյա աշխարհը կտոնէ Քրիստոսի Ծնունդը և կավերն բարի լուրը ամենուրեք, թե ծնավ խաղաղության Իշխանը, որ Իր հետ պիտի բերն խաղաղություն աշխարհին: Խաղաղության Իշխանը, որ եկավ տալու Իր խաղաղությունը, եթե մենք կփորձենք մեր ֆիզիկական աչքերով տեսնել, վստահ եմ մեզմե ամեն մեկու համար պիտի ողջվար ըլլա: Խաղաղության Իշխանի բարի լուրն ու խաղաղությունը պետք է տեսնենք մեր հոգու աչքերով, զայն ըմբռնենք մեր հոգու աչքերով և հավատքի գործությամբ:

Այսօր, երբ մենք կտոնախմբենք Անվանակոչության տոնը, որպես քրիստոնյաներ հղապարտությամբ կըսենք, թե մենք քրիստոնյա ենք և հպարտությամբ է, որ կտեսնենք այդ Անվանակոչության խորհուրդին մեջ Քրիստոսի ամբողջ եռությունը: Անվանակոչությունը ոչ թե պարզապես եղելություն մը էր կամ գրվածք մը և կամ դեպք մը, այլ, ընդհակառակը, որոշմն էր հավատքին: Ինչպես Պաղոս առաքյալ և իրենից հետո բոլոր քրիստոնյաներ երկբժշկեին, երբ հրաշքներ կգործեին, այդ բոլորը կկատարեին Քրիստոսի անունով:

Հիսուս Քրիստոսի անունով էր, որ իրենց բժշկությունները կկատարեին: Եթե մենք ուսումնասիրենք աշխարհի բոլոր կրոնները, եթե համեմատենք աշխարհի բոլոր կրոնները, պիտի տեսնենք, թե որնից տեղ չկա իրենց վարդապետի կամ Մեսիայի անունով բժշկություն մը, միայն ու միայն քրիստոնյաներու մոտ կա: Երբ մենք կբժշկենք, կբժշկենք Քրիստոսի անունով, Անվանակոչության խորհուրդով և կտեսնենք անոր մեջ Քրիստոսի գործությունը:

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, Նոր տարվա և Ս. Ծննդյան շեմին, երբ կսկսի մեր նոր տարին, երբ կտոնախմբենք Ջրիստոսի Հրաշափառ Ծնունդը, եկեք մեր հոգու աչքերով տեսնենք նորածին Մանուկը, մաքրենք մեր հոգիները և սկսինք նոր կյանք մը, և այդ ավելիսը թող ոչ թե ըլլա պարզապէս մեր շուրթերու վրա բառաբանություն, այլ ըլլա իմաստավոր, այլ ըլլա մեր կյանքը սկսող նոր երևույթ մը, երբ իրարու կշնորհավորենք՝ ըսելով. «Ջրիստոս ծնաւ և յայտնեցաւ, ձեզի, մեզի մեծ անտիս», այդ թող ըլլա մեր հոգու խորհրդողանկը: Երբ իրար կ'ավելորենք, ավելորենք հպարտությամբ, այն հպարտությամբ, որ վայել է քրիստոնյային, մաքրությամբ ու անկեղծությամբ: Այն ժամանակ է, որ Ջրիստոս մեր մեջ կ'ընկնի, և մենք կ'ըլլանք Ջրիստոսի իսկական զավակները:

Այսօր, մանավանդ երբ հին տոմարով մենք կ'տոնախմբենք նաև Նոր տարին, ի սրտե կշնորհավորենք ձեր բոլորի Նոր տարին և սաղմոսերգուի բառերով կ'խնդրենք Ամենաբարձր-յայն Աստուծմն, որ տա աշխարհին խաղաղություն՝ ավելի քան երբեք: Այսօր, երբ պնդութ-յուններու դեկավարներ, կորցրած իրենց հավատքը, կորցրած իրենց տեսիլքը, կ'պատ-րաստվին ոչնչացնելու աստվածաստեղծ մարդուն, ազդեցնք առ Աստված, որպեսզի դադ-րին հրանոթները, խաղաղություն տրիքն ամենուրեք, և խաղաղության աղավկին սավառնի ամենուրեք: Եվ Նոր տարվա ու Ս. Ծննդյան խորհրդով պատրաստվինք տեսնելու իսկա-կան Ջրիստոսը մեր կյանքի մեջ, ապրինք Ջրիստոսով և ըլլանք Ջրիստոսի արժանապոր-զավակները այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Տ. ԴԱՎԻԹ ԱՔԵՂԱ ԲԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (7 հունվարի 2003 թ.)

«Քրիստոս ծնաւ եւ յայրենեցաւ...»:

Դեռ երեկ այս ավերիսը մեր շուրթերին՝ ողջուն Կվեցինք միմյանց: Մանուկ Տիսուսին մեր ջերմ սրտերում առած՝ Կրոն շրապեցինք. և յուրաքանչյուր հարկի փակ փուն բերված մանկան շուրջ ընդանիքներ խմբվեցին: Ճնծացին մեր հոգիներն անսահման բերկրանքից, ու մոռացանք ամեն վիշտ...

Իսկ այսօր, այլ մտածումներով ու խոհերով ժողովված այս Սուրբ Խորանի առջև, սարկավազի փխրածայն եփդրն ենք լսում. «Վասն հանգուցեալ հոգուցն աղաչեսցուք գՓրկիչն մեր Քրիստոս, զի գետա ընդ արդարսն դասնսցէ եւ զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ...» (Ժամագիրք):

Կորցրած հարազատի հիշատակն անչափ փխրությամբ է լցրել ամեն հոգի: Ու յուրաքանչյուրս իր անձնական ցավը սրտում ծրարած՝ այստեղ է շրապել՝ Աստծո առջև սիրտը բանալու:

Գուցե անսահման է վիշտդ ու բառերն աղոթք չդարձած՝ խեղդվում են կոկորդումդ: Ծնո՞ղ ես կորցրել, թե՞ ինքնամոռաց սիրով սնած զավակիդ: Մակայն ինչո՞ւ եմ հարցնում. վիշտն է քեզ այստեղ բերել: Գիտեմ, չես հաշտվել մահվան հետ ու երբեք էլ չպիտի հաշտվես, քանի որ սիրելիի հիշատակն ամեն անգամ լուռ արելությամբ է լցնելու հոգիդ մահվան հանդեպ: Իսկ գուցե դառնացած ես նաև Աստծուց և մահն Աստծո հետ ես չլիթթում:

Ծով վշտից մթազնում է մարդկային միտքը...: Չես կարող այդքան փխրություն հոգուդ մեջ պահել: Ազատություն փուր սրտիդ ու լուռ արտասվիր: Արտասուքը սրբում է հոգին: Արտասվիր ու քինեք արտասուքիդ միջից այստեղ նայիր: Սուրբ Մեղանին հանգչող այս պարկերը քեզ պես արտասվալիք բազում դեմքեր է տեսել: Ոմանք գուր եմ հայցել նրանից, ոմանք՝ մխիթարություն, մյուսն էլ՝ դառը հանդիմանել իր սիրելիի համար: Իսկ դո՞ւ, դու ի՞նչ մտածումներով ես հայացքդ այստեղ հառել:

Մանուկ ու մայր. ծովածավալ զգացումներով է լցվում հոգիս: Մանուկ ու մայր, այս խորհուրդով է աշխարհն ապրում: Աստվածամայրն է՝ դեռ երեկ ծնված Տիսուսը գրկին: Նայում է քեզ ու լուռ ժպտում: Այստեղ նայելիս թվում է՝ ոչ ոք չի մեռնում, հավերժ կյանքն է այստեղից հորդում...:

Մակայն սևեռիր հայացքդ, ու կրեսնես, որ ժպիտի ելունում փխրություն է թևածում, փխրությունն այն մոր, որ իր նորածին մանկան սնարին Նրա կանխորոշ մահվան ցավով է մորմոքվում:

Բայց խաղա՞ղ ժպտում է Սուրբ Մայրը...

Դու էլ, կորցնելով սրտակից էակի, մոլորվել ես արտասուքի ծովում, փրկել հուսահատության քմահաճ ալիքներին: Մեծ է և քո՝ վիշտը, սակայն աչքերդ կրկին այստեղ բարձ-

րացրու: Մի՞թե Տիրամոր այս սուրբ հայացքը քեզ ոչինչ չի ասում: Նայիր ու կրեսնես մխիթարության լույսը նրա աչքերում: Ունկն դիր և կլսես. Աստվածամայրն է քեզ հեղ խոսում. «Լաց մի՛ լինիր. ահա իմ մանուկ Որդին, ա՛հ Նրան որպես սփոփանք քո բեկված սրտի, իբրև սպեղանի քո արտասուքի: Պահիր իմ մանկանը քո փառապած սրտում՝ իբրև սկիզբ նոր կյանքի, իբրև հարության հույս քո ննջեցյալի»:

Մի՛ շփալիր պապասխանել Տիրամոր աղերսին, այլ լուռ ազդեթի՜ր քո հոգու մտորում խանձարոտված Շիտուս մանկան առջև ծնկի գալով:

«Դու, որ աշխարհի նկար մեր փրկության համար, Քո առաջ քո ժողովրդի մեջ ու անասնաման սիրով գթա մեր ննջեցյալներին, շնորհիք սրբությամբ ապրել, քանզի մենք էլ պանդուխտ ենք այս անցավոր աշխարհում. ամեն»:

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ԱՂԱՄ ԶԱՎԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԵՐԱՆԵԼԻ ՕԳՈՍՏԻՆՈՍՆ ԸՆԴԴԵՄ ՆԻՑՇԵԻ

Անցյալ դարի վերջերին մարդկային մտածողության ուրույն և ինչ-որ առումով սարսափելի մի ոգոր այիջ ողողեց ողջ Եվրոպան և հետագայում իր ազդեցությամբ և կործանաբարությամբ ցնցեց աշխարհը: Այդ փիլիսոփայությունը, որն անբացատրելի ձգողություն ունեւորեց և ունի մարդկանց մի որոշ մասի գիտակցության վրա, իր ձգողականությամբ շատերին տարավ իր ետևից, բայց միաժամանակ սարսափով ընդունեցին Եվրոպայում նոր ուղղության՝ հիցշեականության ծնունդը, որի առաջնորդը դաժանություն էր քարոզում թույլեղության՝ հիցշեականության ծնունդը: Այդ ուղղության հեղինակը՝ գերմանացի պրոֆեսոր Ֆրիդրիխ Նիցշեն (1844 - 1900 թթ.), 15 տարուց ավելի տառապում էր հիվանդությամբ՝ տարուբերվելով մահվան և խելագարության միջև, և իր գործերի մեծ մասը նա գրել է այդ շրջանում:

Նրա գլխավոր գործերից մեկը կոչվում է «Բարուց և չարից այն կողմ», որտեղ նա համոզեւ է գալիս քրիստոնեության և ընդհանրապես կրոնի դեմ, անդրադառնում գերմանոր, տիրոջ և ծառայի քարոյականության խնդիրներին: Այս աշխատությունը մեզ համար հետաքրքրական է հատկապես նրանով, որ այստեղ Նիցշեն խոսում է քրիստոնեական եկեղեցու մեծագույն դեմքերից մեկի՝ Օգոստինոսի մասին՝ համարելով, որ նա ամենավիրավորական կերպով գրկված է վեհամեծությունից վարվելակերպի և կրքերի մեջ¹:

Օգոստինոսի մասին այսպիսի կարծիքի Նիցշեն հավանաբար հանգեւ էր ընթերցելով նրա «խոստովանությունները», որտեղ եկեղեցական այդ մեծ գործիչը պատմում է մինչև քրիստոնեության դառնալը իր բազում թուլությունների և մեղքերի մասին: Սակայն, ինչպես կտեսնեց տոռն, դատելով Օգոստինոսին, Նիցշեն ինչ-որ տեղ միևնույն ժամանակ դատում էր նաև ինքն իրեն և իր փիլիսոփայությունը: Այդ պատճառով էլ միմյանց զուգահեռելով Նիցշեի «Բարուց և չարից այն կողմ» աշխատությունը, որտեղ բացասական կարծիք կա Օգոստինոսի մասին, և Օգոստինոսի «խոստովանությունները», որի ընթերցումը հանգեցրել է նման կարծիքի, փորձեցեց ներկայացնել երկու հեղինակների տեսակետները:

ԻՆՉ Է ՄԱՐԴԸ, ՏԻՐՈՋ ԵՎ ԾԱՌԱՅԻ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նիցշեի տեսակետը. - Նիցշեն մարդկանց բաժանում է երկու խմբի՝ ուժեղների և թուլների: Կան մարդիկ, որոնք ի ծնե տեր են, ունեն տիրոջ հոգեբանություն և հետևաբար նրանց կարևոր գործը և նույնիսկ պարտականությունը իշխելն է: Նիցշեն մտածում էր, որ եթե նույնիսկ տիրոջ հոգեբանությամբ մարդկանց մոտ նրանց այդ առավելությունը շնորհ

¹ Фридрих Ницше, По ту сторону добра и зла, Минск, Москва, 2000, стр. 57 (Այստեղից՝ Նիցշե, ճշվ. աշխ.):

է, ապա այդ դեպքում ևս իշխելուց Ռաժարվելը կամ անձնորացումը կլինե՞ր շնորհի չարաշահում: «Այն մարդու, որը նախասահմանված է իշխելու համար, անձնորացումը կամ համեստ զիջողականությունը կլինե՞ր ոչ թե շնորհ, այլ շնորհի մսխում»²:

«Մարդը, որը նախասահմանված է...», - գրում է Նիցշեն: Բայց այստեղ հարց է առաջանում՝ ո՞ւմ կողմից է նախասահմանված: Եթե Աստծո, ապա Նիցշեն ժխտում է Աստծուն, եթե բնության, ապա այս փիլիսոփայական բնությունը համարում է անտարբեր և անմասնակից, իսկ կյանքը՝ բազմազանություն՝ ի հակադրություն բնության այդ անտարբերության: Իրենք ինչպե՞ս կարող է ինչ-որ բան նախասահմանել ամեն ինչի հանդեպ անտարբեր բնությունը:

Այսպիսով, գերմարդու՝ ում կողմից նախասահմանված լինելու հարցը Նիցշեի մոտ դեռ մնում է անպատասխան, սակայն, ինչպես հետո կտեսնենք, նա ինչ-որ չափով բացահայտում է այդ նախասահմանողին, ինչպես նաև այն աղբյուրը, որից ներշնչվում էր ինքը:

«Ինչ արդարացի է մեկի համար, բոլորովին *չի կարող* արդարացի լինել մեկ ուրիշի համար: Բոլորի համար մեկ բարոյականության պահանջը վնաս է հասցնում հենց բարձրագույն մարդկանց: Մարդու և մարդու միջև կա աստիճանների տարբերություն, հետևաբար տարբերություն կա նաև բարոյականության և բարոյականության միջև»³: Այսպես է կարծում Նիցշեն, և նրա այս խոսքերի մեջ արդեն նկատվում է բոլորքը քրիստոնեության դեմ, բողոք, որն աշխատության հետագա էջերում արդեն բացահայտ է և նույնիսկ հարձակողական:

Քրիստոնեությունը սիրո կրոն է, այն քարոզում է զիջողականություն, սեր, խոնարհություն, հեզություն: «Սովորեցեք ինձանից, որ հեզ եմ և սրտով խոնարհ», - ասում է Քրիստոս: Սրանք բաներ են, որոնց հետ երբեք չի կարող հաշտվել Նիցշեի գեղմարդը: Նա ձգտում է գերիշխանության, միմյնդեռ համընդհանուր այս բարոյականությունը կապում է նրա ձեռքերը, այս բարոյականությունը «վնաս է հասցնում բարձրագույն մարդկանց»:

Նիցշեն ընդհանրապես բողոքում է սահմանների դեմ, նրան զայրացնում է այն իրողությունը, որ քրիստոնեությունը դրել է հստակ սահմաններ, որոնցից այն կողմ գործելու համար, ըստ քրիստոնեության, մարդն ազատություն չունի: Նիցշեն ձգտում է անսահմանության իր հասկացողությամբ, և նույնիսկ աշխատության վերնագիրը կարծես մի յուրօրինակ բողոք է «քրիստոնեության սահմանների» դեմ: Նիցշեն իրեն դնում է այդ սահմաններից *այն կողմ*, և դեռ ափելի՛ն՝ այդ սահմաններից վեր: Սակայն մինչ Նիցշեն անսահմանություն է փնտրում «քրիստոնեության սահմաններից» *այն կողմ*, Օգոստինոսն անսահմանություն է գտնում «քրիստոնեության սահմանների» ներսում: Եվ պարզվում է, որ Նիցշեն չի հասկացել «քրիստոնեության սահմանների» և քրիստոնեության անսահմանությունը իրողությունը:

Իրոք, ի՞նչ ասել է «քրիստոնեության սահմաններ»: Քրիստոնեությունը տիեզերական կրոն է՝ տրված մարդկանց Աստծո կողմից, և եթե քրիստոնեությունն արգելում է որևէ բան կամ խրախուսում մի այլ բան, ապա դա չի նշանակում, որ քրիստոնեությունը սահմաններ է գծում: Այս պարագային արդեն նման մտածողությունն ու տրամաբանությունը սխալ է, որովհետև *քրիստոնեությունը ոչ թե սահմաններ է որոշում, այլ քրիստոնեությունը ցույց է*

² Նույն տեղում, էջ 134:

³ Նիցշե, Ոչվ. աշխ., էջ 143:

տալիս այն ճանապարհը, որով պետք է ընթանա մարդը: Որոշ համարձակության դեպքում ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար կարելի է, իբրև մույն երևույթների մեկնություն, համեմատություն կատարել Տիրոջ մարդկային մարմնի հետ, որը պարունակում է անպարունակելի: Հետևաբար այստեղ օգտագործված «քրիստոնեության սահմաններ» արտահայտությունը չափազանց պայմանական է:

Օգոստինոսի տեսակետը. - Մինչ Նիցեյն մարդկանց բաժանում է երկու մասի՝ իշխող գերմարդկանց և մյուսների, Օգոստինոսը մի մարդու մեջ է երկու բաժանումներ անում՝ հիմ մարդ և նոր մարդ: Օգոստինոսի ողջ «խոստովանությունների» ընթացքում երևում է, թե ինչպես է հիմ մարդը, որը հետո է Աստծուց, աստիճանաբար վերափոխվում և ընթանում դեպի Աստված:

Օգոստինոսի մոտ իշխելու և իշխվելու հարց ընդհանրապես չկա այն իմաստով, ինչ եմթադրում է Նիցեյն: Դեռ ընդհակառակը, Օգոստինոսի համար կա միայն մեկ բարոյականություն, և չկա տարբերություն «մարդու և մարդու միջև»: Մարդկային հարաբերություններում այս եկեղեցական մեծ գործչի համար իշխելը ընդհանրապես հարց չէ, և մույնիսկ անհասկանալի է իշխանության մասն ձգտումը:

Օգոստինոսի համար մարդը, ինչպիսին էլ որ նա լինի, արդար թե մեղավոր, առաջին թե վերջին, թույլ թե ուժեղ, մարդ է մեծատառով: «Ժուրաքանչյուր մարդու, քանի որ նա մարդ է, պետք է սիրել հանուն Աստծո»⁴:

Մարդը մարդու հանդեպ միայն մի պարտականություն ունի, այն է՝ սիրելու պարտականությունը: Այսպես է կարծում Օգոստինոսը, մինչդեռ Նիցեյնի մոտ խոսք անգամ չկա սիրելու մասին. մյուս մարդկանց նկատմամբ գերիշխանության ձգտումը և այդ գերիշխանությունը եմթադրում է բարձր կանգնածից մեքենա գտնվողի վրա մեծված չնչին արհամարհանք: Այսպիսի տարբեր մտածողությունները գալիս են մրանից, թե ինչպես են երկու հեղինակները հասկանում ճշմարտությունը, ըստ որի էլ կատարում են իրենց եզրահանգումները:

ԻՆՉ Է ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Նիցեյնի տեսակետը. - «Ի՞նչ է ճշմարտությունը» հարցին Նիցեյն պատասխանում է. «Ճշմարտությունը կին է»⁵: Բազում հարցեր կան, և ճշմարտությունը պետք է գործադրի իր ողջ ուժերը, որպեսզի հաղթահարի իր հորանքը՝ ձանձրույթը, եթե ստիպված լինի պատասխանել դրանց: «Բայց վերջիվերջո, չէ՞ որ ճշմարտությունը կին է, հետևաբար պետք չէ մրա հանդեպ բռնություն գործադրել»⁶, - ասում է Նիցեյն:

Հիրավի փիլիսոփայական խորհրդածություն ճշմարտության մասին: Որտեղի՞ց որոշեց Նիցեյն ճշմարտության սեռը: Իսկ գուցե Նիցեյն այս տեսակետը ոչ թե մոլորություն է, այլ ... ծաղրանք, ծաղրանք ճշմարտությանը: Ճշմարտությանը հակադրվում է սուտը, ինչպես լույսին՝ խավարը: Իսկ գուցե սուտ է նաև Նիցեյնի ողջ փիլիսոփայությունը: Ընդ-

⁴ St. Augustine's City of God and christian doctrine", volume II, edited by Philip Schaff, Michigan, 1983 ("City of God", XIV, 7, 1), p. 266.

⁵ Նիցեյն, Զվ. աղյ., էջ 4:

⁶ Նույն տեղում, էջ 134:

մարտության և ստի պայքարը մարդկային հոգիների համար է, իսկ թե ով է ստի հայրը, մեզ լավ գիտեմք:

Օգոստինոսի տեսակետը. - Հստ Օգոստինոսի, հավատը միակ անսուտ աղբյուրն է ճշմարտության և փրկության⁷:

Բոլոր ժամանակներում մարդիկ, նրանցից հատկապես փիլիսոփաները, ճշմարտություն են փնտրել, գրել են հսկայածավալ աշխատություններ իրենց փնտրողների արդյունքների մասին, սակայն իրական ճշմարտությունն այդպես էլ չեն գտել: Պատճառը միայն մեկն է՝ միմյև քրիստոնեությունը ճշմարտության վերաբերյալ բոլոր հարցադրումները սխալ են եղել:

Մարդկությունը դարերով ցանկացել է գտնել իրեն տանջող «ի՞նչ է ճշմարտությունը» հարցի պատասխանը: Սակայն ճշմարտությունը գտնվեց միայն քրիստոնեության միջոցով, որովհետև քրիստոնեությունը փոխեց սխալ հարցադրումները և դրեց բոլորովին նոր, անսպասելի հարցադրում, որով էլ հեշտությամբ գտնվեց մարդկությանը տանջող հարցի պատասխանը: Իսկ ի՞նչ արեց քրիստոնեությունը. քրիստոնեությունը ետ մղեց ճշմարտության մասին առարկայական պատկերացումները և ամձմավորեց այն:

Ըշմարտության վերաբերյալ հարցադրումը փոխվեց հետևյալ կերպ՝ «ի՞նչ է ճշմարտությունը» հարցի փոխարեն առաջ եկավ մի ավելի ուժեղ հարց՝ «Ո՞վ է ճշմարտությունը»: Եվ հենց այս ճշմարտությանը հասնելու համար էլ անհրաժեշտ է հավատը: Օգոստինոսի «Խոստովանություններից» իմանում ենք, որ իրեն տանջող բազում հարցերի պատասխանները մա ցանկացել է գտնել Յիսուսին և մյուս փիլիսոփաների աշխատությունների, մանիքեական աղանդի մեջ, սակայն իրական ճշմարտությունը գտել է քրիստոնեության մեջ: Եվ երբ Օգոստինոսը գտել է ճշմարտությունը, ընկել է մի թզենու տակ և լաց եղել⁸: Ահա այս ձևով ճշմարտությանը հասած Օգոստինոսը հետագայում գրելու էր իր «Խոստովանությունների» մեջ. «Զո օրենքը ճշմարտություն է (Սաղմ. 118,142) և Դու ճշմարտությունն ես» (Հովհ. ԺԴ 6)⁹, և Աստծուն կոչելու էր «Հույս իմ և ճշմարտություն իմ»¹⁰:

ՆԻՑՇԵԻ ՄԻ ԶԱՆԻ ՆԱԿԱՐՑԱՆԻ ԴՆԵՐԸ

Նիցշեն դատում է Օգոստինոսին՝ նրան գուրկ համարելով ամենայն վեհանքություններից: Բայց ըստ ինչի՞նչ է դատում Նիցշեն. ըստ իր փիլիսոփայության՞, թե՞ ըստ քրիստոնեության: Եթե ըստ քրիստոնեական ըմբռնումների, ապա քրիստոնեությունը մեծ տեղ է հատկացնում անգամ ամենահանցավոր մեղավորներին, իբրև փրկության կարող մոլորյալ ոչխարների: Բացի դրանից, Օգոստինոսը մեծագույն դեմք է քրիստոնեության ողջ պատմության մեջ:

«Օգոստինոսի հետ, իհարկե, ոչ մի մարդ հավասարվել չի կարող: Չափազանց մեծ է եղել այդ մարդը, չափազանց անընթրինակելի», - այսպես է գնահատել Օգոստինոսին

⁷ *Аврелий Августин, Исповеди (Приложение, Аврелий Августин. Жизнь, учение и его судьбы)*, стр. 326.

⁸ Օգոստինոս Երանելի, Խոստովանություններ, 8, XII, էջ 144:

⁹ Նույն տեղում, 4, IX, էջ 57:

¹⁰ Նույն տեղում, 13, XXIV, էջ 288:

Պետրարկան¹¹: Իսկ եթե Նիցշեն Օգոստինոսին դատում է ըստ իր փիլիսոփայության, ապա այստեղ չափազանց սխալվում է և նույնիսկ հակադրվում ինքն իրեն և իր փիլիսոփայությանը, քանի որ «Սոստոլվանություններում» համդես եկող դեռ քրիստոնյա չդարձած Օգոստինոսն իրենից ներկայացնում է եթե ոչ ամբողջապես, ապա գոնե աճող, պոտենցիալ գերմարդ, որը ձգտում է կյանքից վերցնելու այն ամենը, ինչն իրեն հետաքրքրում է:

Այս շրջանում նրա մեջ ավելի լավ կարող էր զարգանալ Նիցշեի գերմարդը, քան թե կրքերի մեջ վեհաձայնությունից զուրկ անհատը: Դեռ մանկուց զգացվում էր, որ Օգոստինոսը թույլ մարդ է, նա մեծ չափով այն էր, ինչ Նիցշեն համարում է «ի ծմե տիրոջ հոգեբանությամբ իշխելու համար ծնված մարդ», մինչդեռ իշխելու այդ ձգտումն Օգոստինոսն անվանում է հաղթող երևալու սին ցանկություն:

«Սաղերի մեջ պարտվելիս ես հաճախ խարդախությամբ էի ուզում կորզել հաղթանակը՝ դրդված հաղթող երևալու սին ցանկությունից: ... Ես ավելի շատ վիճում էի, քան զիջում: Եվ սա մանկական անմեղությունն է: Օ, ո՛չ, Տեր իմ, ո՛չ»¹²: Ահա թե ինչպիսին էր Օգոստինոսը դեռ մանկուց: Հետևաբար այսպես դատելով Օգոստինոսին՝ Նիցշեն ինչ-որ չափով դատում է նաև իր գերմարդուն, որով էլ և իր փիլիսոփայությանը:

Նիցշեն ասում է. «Ոչ թե ուժը, այլ բարձրագույն զգացումների տևականությունն է ստեղծում բարձրագույն մարդկանց»¹³: Նիցշեի այս աֆորիզմից կարելի է եզրակացնել, թե նա դեմ է ուժին, բարձրագույն մարդու համար թավական են բարձրագույն զգացումները: Սակայն այսպիսի կարծիք կարող է ծնվել սոսկ առաջին հայացքից: «Մեծահավատ կրոնները թիվնական պատճառն են, որ պահպանել են ավելի ցածր աստիճանի վրա գտնվող մարդկանց, չափից շատ քան են պահպանել այն բանից, ինչը պետք է ոչնչացնար»¹⁴.- ասում է Նիցշեն՝ քարոզելով թույլների և թշվառների ոչնչացում:

Նիցշեն Դոստոևսկուն համարում է իր ուսուցիչը¹⁵: Նրան հատկապես դուր էր գալիս Դոստոևսկու «Ուժի և պատիժը», որտեղ նկարագրվում է թույլի սպանությունը¹⁶: Բայց ինչու է աֆորիզմում Նիցշեն խոսում միայն բարձրագույն զգացումների մասին՝ անտեսելով ուժը: Պատճառն այն է, որ նա երկու տարբեր բաներ նկատի ուներ, ինչի մասին երբեք բացահայտ չէր ասում՝ բարձրագույն մարդ և գերմարդ: Եթե ուշադիր լինեմք, կտեսնենք, որ նրա շատ աֆորիզմներ տիպիկ ինքնակենսագրական են: Այդպիսին է նաև այս աֆորիզմը:

Բարձրագույն մարդը ինքը Նիցշեն է, որը գործ չունի ուժի հետ. նրանք բարձրագույն զգացումներն են, որոնցով ինքը բարձրագույն ուսմունք է ստեղծում գերմարդ ստեղծելու համար: Եվ այս «բարձրագույն» մարդը ծաղրանքով է վերաբերվում Օգոստինոսին, ինչին, տակայն, Օգոստինոսն իմաստությամբ պատասխանել էր դեռ դարեր առաջ իր «Սոստոլվանություններում». «Թող ծիծաղեն ինձ վրա հպարտները, որոնց Դու դեռ ծնկի չես բերել և շանթել հանում իրենց փրկության»:

¹¹ Ареопажити, стр. 335.

¹² Օգոստինոս Երանելի, Խոստովանություններ, 1, XIX, էջ 19:

¹³ Նիցշե, Օշվ. աշխ., էջ 71:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Доси Достоевского, М., 2000, стр. 237.

¹⁶ Նույն տեղում, էջ 240:

ԹՄԲԳՄՄԼՄԿՄԼ

ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱՆԿ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդո՞ւ և նրա ճակատագրի թեման Դոստոևսկու համար նախ և առաջ թեմա է ազատության մասին: Մարդու ճակատագիրը, նրա տառապալից թափառումները նրա ազատությամբ են որոշվում: Ազատությունը Դոստոևսկու աշխարհայեցության հենց կենտրոնում է գտնվում: Եվ նրա նվիրական պաթոսը՝ ազատության պաթոսն է: Ջարմանայի է, որ մինչև հիմա սա Դոստոևսկու վերաբերյալ բավարար չափով չի գիտակցվել: Բազում հատվածներ են մեջբերում «Գրողի օրագրից», որոնցում նա իբրև թե թշնամի է եղել հասարակական-քաղաքական ազատությանը, պահպանողական և մինչև իսկ հեղափոխական է եղել, և այս միանգամայն արդարեւն մոտեցումները խանգարում են ազատությունն իբրև Դոստոևսկու ամբողջ ստեղծագործության միջուկ, իբրև նրա աշխարհայեցությունն ըմբռնելու բանալի հասկանալուն:

Այն, ինչ Դոստոևսկու «դաժանություն»-ն էին համարում, կապված է ազատության նկատմամբ իր վերաբերմունքի հետ: Նա «դաժան» էր, որովհետև չէր ուզում մարդու վրայից վերցնել ազատության լուծը, չէր ուզում մարդուն զերծ պահել տառապանքից՝ նրա ազատագրվման գնով, մարդու վրա ազատների արժանավորությանը համապատասխանող հսկայական պատասխանատվություն էր դնում: Կարելի էր թեթևացնել մարդկային տանջանքները՝ խլելով մարդուց ազատությունը: Եվ Դոստոևսկին մինչև խորքն ուսումնասիրում է այդ ուղիները, այդ՝ առանց իր ոգու ազատության մարդու թեթևացման և կարգավորման ուղիները:

Դոստոևսկին, արդարև, հանճարեղ մտքեր ունի ազատության մասին, և պետք է դրանք բացահայտել: Ազատությունը նրա համար և՛ անտրոսպոլիցիա է, և՛ թնդիցիա, նրա մեջ պետք է փնտրել և՛ մարդու արդարացումը, և՛ Աստծու արդարացումը: Ողջ համաշխարհային գործընթացն ազատության թեմային վերաբերող առաջադրանք է, այդ թեմայի իրականացման հետ կապված ողբերգություն: Դոստոևսկին ուսումնասիրում է ազատության մեջ թողնված մարդու ճակատագիրը: Նրան միայն ազատության ճանապարհով ընթացած մարդն է հեղաքրքրում, մարդու վիճակը ազատության մեջ և ազատությունը՝ մարդու մեջ: Նրա բոլոր վեպերը ողբերգություններ են, մարդկային ազատության քննություն: Մարդն սկսում է նրանից, որ ըմբոստացած հայտարարում է իր ազատության մասին, պարտադրաբար է ամեն տեսակի տառապանքի, խեղճեղության, միայն թե իրեն ազատ զգա: Եվ միաժամանակ նա փնտրում է վերջնական, առավելագույն ազատությունը:

* Ներկայացվող թարգմանությունը մի հատված է Բերդյանի «Դոստոևսկու աշխարհայեցողությունը» գործից, րեն Н. Бердяев, Русская идея, Москва, 1999, էջ 282-297:

Երկու ազատություն գոյություն ունի. առաջին՝ նախասկզբնական ազատություն, և երկրորդ՝ հիմնական ազատություն: Այդ երկու ազատությունների միջև է ընկած մարդու ճանապարհը՝ փանջանքներով և փառապանքներով լի: Երկապուտե համապատկեր: Դեռևս Երանսե Օգոստինոսը պելագիականների դեմ իր պայքարում ուսուցանում էր երկու ազատությունների՝ *libertas minor*-ի և *libertas major*-ի մասին: Տարրական ազատությունը նրա համար նախասկզբնական, առաջին ազատությունն էր, որը բարու ընտրության ազատությունն է, այն կապված է մեղքի հնարավորության հետ: Գերազույց ազատությունը վերջնական, հիմնական ազատությունն էր՝ ազատություն Աստուծո մեջ, բարու մեջ: Երանելի Օգոստինոսը երկրորդ ազատության՝ *libertas major*-ի ջախջախում էր, և վերջիվերջ հասկեց նախասկզբնականության մասին ուսմունքին: Թեև եկեղեցական գիտակցության մեջ հաղթանակեց կիսապելագիականությունը, բայց Երանելի Օգոստինոսը կաթոլիկության վրա ազատության համար անբարենպաստ ազդեցություն գործեց: Նա հերթափոխների հալածանքին և նախապաշտի սանկցիա տվեց: Աներկբայելի է մնում, որ գոյություն ունի ոչ թե մի, այլ երկու ազատություն, առաջին և վերջին, չարի ու բարու ընտրության ազատություն և ազատություն՝ բարու մեջ, կամ իռացիոնալ ազատություն և բանականության մեջ եղող ազատություն: Սովորաբար միայն երկրորդ ազատությունն էր ճանաչում, բանական ազատությունը: Եվ ավերարանական «ճանաչե՛ք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ ազատ կդարձնի» խոսքերը երկրորդ ազատությանն են վերաբերում, ազատություն ի Զրիստոս: Երբ մենք առում ենք, որ մարդը պետք է իրեն ազատ կացուցանի ստորին տարերքներից, կրքերի իշխանությունից, պնդեք դադարի ինքն իր և շրջապատող աշխարհի ստորուկը լինելուց, ապա մենք նկատի ունենք երկրորդ ազատությունը:

Ոգու ազատության գլխավոր նվաճումը երկրորդ ազատությանն է վերաբերում: Առաջին Ադամի ազատությունը և երկրորդ Ադամի ազատությունը, ի Զրիստոս ազատությունը փարբեր ազատություններ են: Ըճմարությունը մարդուն ազատ է դարձնում, բայց մարդը պետք է ազատորեն ընդունի ճշմարտությունը, նա չի կարող բռնի կերպով, հարկադրաբար նրան հանգեցվել: Զրիստոս մարդուն վերջնական ազատությունն է տալիս, բայց մարդը պետք է ազատորեն ընդունի Զրիստոսին. «Դու մարդու ազատ սերը կամեցար, որ Զեզանով հմայված և գերված ազատորեն Զեզ հեղինի ևա, Զեզանով հմայված և գերված» (Մեծ Հավատաքննիչի խոսքերը):

Զրիստոսի այս ազատ ընդունման մեջ է քրիստոնեայի ողջ արժանավորությունը, հավատքի ակտի ամբողջ իմաստը, որն էլ ազատության ակտն է: Մարդու արժանավորությունը, նրա հավատքի արժանավորությունը երկու ազատության ճանաչում է ենթադրում. չարի ու բարու ազատություն և բարու մեջ եղող ազատություն, ազատություն ճշմարտության ընտրության մեջ և ազատություն ճշմարտության մեջ: Ազատությունը չի կարող նույնացվել բարու հետ, ճշմարտության հետ, կատարելության հետ: Ազատությունն իր ինքնագո բնությունն ունի, ազատությունն ազատություն է և ոչ թե բարիք: Եվ ազատության յուրաքանչյուր խառնում ու նույնացում բուն բարու և կատարելության հետ ազատության ժխտում է, հարկադրանքի և բռնության ճանապարհների ընդունում:

Հարկադրական բարին այլևս բարի չէ, այն չարի է վերածվում: Իսկ ազատ բարին, որը միակ բարին է, չարի ազատություն է ենթադրում: Մրանում է ազատության ողբերգությունը, որը մինչև խորքը ուսումնասիրեց և հասկացավ Դոստոևսկին: Մրա մեջ է թաքնված

քրիստոնեության խորհուրդը: Ողբերգական դիպելկտիկան է բացահայտվում: Բարին չի կարող հարկադիր լինել, չի կարելի հարկադրել դեպի բարին: Բարու ազատությունը չարի ազատությունն է ենթադրում: Իսկ չարի ազատությունը բուն ազատության ոչնչացմանն է տանում, չարի անհրաժեշտության վերածմանը: Բայց բարու անհրաժեշտությունն այլևս բարի չէ, քանզի բարին ազատություն է ենթադրում: Ազատության այս ողբերգական հիմնախնդիրը փանջել է քրիստոնեական միտքն իր ողջ պատմության ընթացքում: Նրա հետք են կապված Երանելի Օգոստինոսի վեճերը պելագիականության հետ, ազատության և շնորհի միջև հարաբերության մասին ուսմունքը, յանսենիզմի հարուցած վեճերը, օգոստինոսյան նախաստանության կողմը Լութերի շեղումները, կարծես թե ամեն փոսակի ազատություն ժխտող Կալվինի մտայն ուսմունքը:

Քրիստոնեական միտքը ճնշված է եղել երկու վրանգավորություններով, երկու պատրանքներով՝ ազատության չարիքով և հարկադրանքի բարիքով: Ազատությունը խորտակվում էր կամ նրանում դրսևորվող չարիքից, կամ ի բարին հարկադրումից: Վավարաբնությունն խարտկեները սոսկալի վկայություններն էին ազատության այդ ողբերգության, նույնիսկ Քրիստոսի լույսով լուսավորված քրիստոնեական գիտակցության համար այն վճռելու դժվարության մասին: Առաջին ազատության, հավատքի և ճշմարտության ընդունման մեջ ազատության ժխտումը պետք է տանի նախաստանության մասին ուսմունքին: Առանց ազատության մասնակցության ճշմարտությունն ինքն իրեն է հանգում:

Կաթոլիկական աշխարհը գայթակղվեց ազատությանը բախվելով, հակված էր ազատության ժխտմանը, հավատքի ազատության, խղճի ազատության ժխտմանը, բռնության՝ ազատության և բարու մեջ: Ուղղափառ աշխարհն այդքան գայթակղված չէր դրանով, բայց և նրանում էլ դեռևս ազատության մասին ճշմարտությունը լիովին բացահայտված չէր: Քանզի գոյություն ունի ոչ միայն ազատություն ճշմարտության մեջ, այլև՝ ճշմարտություն ազատության մասին: Արդյո՞ք չպետք է ազատության մասին հավերժական թեման փնտրել նրանում, որ Քրիստոս ոչ միայն ճշմարտություն է, որն ազատություն է շնորհում, այլև՝ ճշմարտություն ազատության մասին, ազատ ճշմարտություն, որ Քրիստոս ազատություն է, ազատ սեր: Ազատության ըմբռնման մեջ այսպիսի ներքաշվում են նյութական ու ձևական /ֆորմալ/ գործոնները: Առաջին ազատությունը, իբրև ֆորմալ ազատություն, փրամադիր են ժխտելու նրանք, ովքեր արդեն ճանաչում են ճշմարտությունը և ազատությունը՝ ճշմարտության մեջ: Երկրորդ ազատությունը հասկացվում է որպես նյութական ազատություն, իբրև ճշմարտությանն ուղղված ազատություն:

Քրիստոնեական գիտակցությունը կարծես թե չի համաձայնվում կանգնել ֆորմալ հայեցակետի վրա և խղճի ազատությունը, հավատքի ազատությունը պաշտպանել իբրև մարդու ֆորմալ իրավունք: Քրիստոնեությունը ճանաչում է ազատագրող ճշմարտությունը: Եվ այդ ճշմարտությունը բացառիկ է, այն իր կողքին չի հանդուրժում այլ ճշմարտություններ, չի հանդուրժում սուր: Բայց արդյո՞ք որևէ սխալ չի թաքնված այս անբասիր թվացող մտքերի ընթացքի մեջ: Միայն այն ենթադրության մեջ է թաքնված, թե խղճի ազատությունը, հավատքի ազատությունը, չարի և բարու ազատությունը կարելի է պաշտպանել բացառապես ֆորմալ հայեցակետից: Քրիստոնեության մեջ ազատությունը ոչ թե ֆորմալ, այլ նյութական ճշմարտություն է: Քրիստոսի ճշմարտությունն ինքն ազատության մասին ճշմարտություն է:

որոշ անգամ հոգով ծնված մարդու ազատությունը երևան եկավ, այլն՝ առաջին Ադամի ազատությունը, ոչ միայն բարու ազատությունը, այլև՝ չարի ազատությունը: Հունական միտքը միայն ռացիոնալ ազատությունն էր հնարավոր համարում: Քրիստոնեությունը նաև ազատության իռացիոնալ սկիզբն է երևան հանում: Իռացիոնալ սկիզբը կյանքի բովանդակության մեջ է բացահայտվում, և նրանում է թաքնված ազատության խորհուրդը: Հելլենական միտքը վախենում էր այդ իռացիոնալ բովանդակությունից իբրև անսահմանից՝ ապելլոն, իբրև նյութի, պայքարում էր նրա դեմ ձեռն սկզբունքով՝ մարցնելով սահման՝ պեոսս: Այդ պարտադրով հույն աշխարհն ինքնամիտի ձև, վերջնակեպ էր դիտում, հեռաստանները չէր տեսնում: Քրիստոնեական աշխարհի մարդն այլևս այդպես անվերջությունից, կյանքի անվերջ բովանդակությունից չի վախենում: Նրան անսահմանությունն է բացահայտվում, հեռաստաններն են լայն բացվում: Սրա հետ է կապված նոր քրիստոնեական աշխարհի մարդու ազատության հանդեպ մի ուրիշ վերաբերմունքը, քան՝ անտիկ մարդունը: Ազատությունը դիմակայում է ձեռն սկզբունքի, սահմանափակող վերջնակեպի բացառիկ տիրապետությանը: Ազատությունն անվերջություն է ենթադրում: Հույնի համար այն բացառապես քառսն էր: Քրիստոնեական աշխարհի մարդու համար անվերջությունը ոչ միայն քառս է, այլև՝ ազատություն: Մարդկային անվերջ ձգտումները միայն քրիստոնեական աշխարհում են հնարավոր: Ճառասուր պարմության քրիստոնեական շրջանի երևույթ է, նա անկառելի էր անտիկ աշխարհում: Ճառասուրյան անվերջ ձգտումներն առավել բնորոշ են քրիստոնեական Եվրոպայի համար: Միայն քրիստոնեական աշխարհում է հնարավոր Բայրոնը: Մանֆրեդը, Կայենը, Դոն-ժուանը միայն քրիստոնեական Եվրոպայում կարող էին երևան գալ: Այդ ընդվզող ազատությունը, այդ փոթորկոտ, խռովահույզ, սահման չճանաչող ձգտումները, կյանքի այդ իռացիոնալ բովանդակությունը երևույթներ են քրիստոնեական աշխարհի ներսում: Մարդկային անհատականության խռովությունն աշխարհակարգի դեմ, ընդդեմ ճակատագրի՝ ներքուստ քրիստոնեական երևույթ է: Հունական ողբերգությունը, ինչպես նաև հունական փիլիսոփայության գագաթներն ինքնամիտի անտիկ աշխարհի սահմաններից այն կողմ ճեղքման անխուսափելիությունն էին ցույց տալիս, նրանք դեպի նոր քրիստոնեական աշխարհն ուղղություն ունեին: Բայց հունական ողբերգության և հունական փիլիսոփայության մեջ դեռևս չէր բացահայտվել ֆառուստյան ոգին, այդ նոր, սարսափելի ազատությունը:

Ըմբռնարացող ազատությունը Դոստոևսկու հերոսների մեջ լարվածության ծայրահեղ տահմանների է հասնում: Դոստոևսկու հերոսները քրիստոնեական աշխարհի ներսում կոր պահն են նշանավորում մարդկային ճակատագրում, ավելի ուշ պահ, քան Ճառասուրը: Ճառասուրը դեռևս այդ ճանապարհի կեսին է կանգնած: Ռասկոլնիկովը, Սրապլոգինը, Կիրիլովը, Իվան Կարամազովն արդեն ճանապարհի վերջում են կանգնած: Ճառասուրից հետո դեռևս հնարավոր էր XIX դարը, որը ոգևորությամբ ճաշիճների չորացումով զբաղվեց, որին էլ վերջում հանգեց Ճառասուրը: Դոստոևսկու հերոսներից հետո անիմանալի XX դարն է բացվում, մեծ անհայտությունը, որն իրեն հայտնաբերում է իբրև մշակութային ճգնաժամ, իբրև համաշխարհային պարմության մի ամբողջ շրջանի ավարտ: Մարդկային ազատության փնտրությունը նոր փուլ է թևակոխում: Դոստոևսկու մոտ ազատությունը ոչ միայն քրիստոնեական, այլև՝ նոր ոգու երևույթ է: Այն բուն քրիստոնեության մեջ նոր ժամանակաշրջանի է պարկայնում: Սա ազատության արտակարգ տրանսցենդենտ ըմբռնողության շրջանից

Մարդկային ազատությունն իր վերջնական արտահայտությանն է հասնում գերազույն ազատության մեջ, ճշմարտության մեջ եղող ազատության մեջ: Այսպիսին է ազատության անխառնափնի դիալեկտիկան: Այն տանում է դեպի աստվածամարդկային ճանապարհ: Աստվածամարդության մեջ մարդկային ազատությունն Աստվածային ազատության հետ է միավորվում, մարդկային պարկերը՝ Աստվածային պարկերի: Այդ ճշմարտության լույսը ձեռք է բերվում ներքին փորձառությամբ, ազատության ներքին վերացումով: Վերադարձ չի

կարող լինել դեպի արտաքին օրենքի բացառիկ փորապնդություն, դեպի անհրաժեշտության և բռնադատության և՛ կյանք: Մտում է միայն խորտակված ազատության վերականգնումը՝ ճշմարտության, այսինքն՝ Քրիստոսի մեջ: Բայց Քրիստոս արտաքին օրենք չէ, կյանքի արտաքին կարգ չէ: Նրա թագավորությունն անչափակցելի է այս աշխարհի թագավորության հետ: Եվ Դոստոևսկին բարկությամբ մերկացնում է հարկադրանքի և բռնության կրոնի փանող քրիստոնեության բոլոր շեղումները: Ճշմարտության լույսը, լիակատար ազատության բարօրությունը չեն կարող դոսից ձեռք բերվել: Հենց Քրիստոս է վերջնական ազատությունը, ոչ այն անբովանդակ, ընդվզող, ինքնամեկուսացող ազատությունը, որը կործանում է մարդուն, ոչնչացնում նրա պարկերը, այլ՝ այն իմաստնալից ազատությունը, որը հաստատում է մարդու պարկերը հավիտենության մեջ: Այս ճշմարտության մասին պետք է վկայի Ռասկոլնիկովի և Ստավորոգինի, Կիրիլովի և Իվան Կարամազովի ճակատագիրը: Միայն ուղղորդված ազատությունը կործանեց նրանց: Բայց սա չի նշանակում, որ նրանց պետք էր հարկադրման, արտաքուստ կարգավորող օրենքի բացառիկ իշխանության փակ պահել: Նրանց կործանումը լուսաբեր է մեզ համար: Նրանց ողբերգությունն ազատությանը ձուլված օրենքն է:

Դոստոևսկին մի գաղափար ուներ, որ առանց մեղքի և չարի ազատության, առանց ազատության փորձության համաշխարհային ներդաշնակությունը չի կարող ընդունվել: Նա ընդվզում է ամեն տեսակ հարկադրական ներդաշնակության դեմ լինի դա կաթոլիկական, թեոկրատական կամ սոցիալիստական: Մարդու ազատությունը չի կարող ընդունվել հարկադրվող կարգի կողմից, իբրև դրա շնորհ: Մարդու ազատությունը պետք է նախորդի այսպիսի կարգին և այսպիսի ներդաշնակությանը: Ազատության միջով պետք է անցնի դեպի կարգ ու կանոն և ներդաշնակություն, դեպի մարդկանց համաշխարհային միություն փանող ճանապարհ:

Դոստոևսկու անսիրությունը կաթոլիկության և սոցիալիզմի հանդեպ, ինչպես հետո տեսանելի կլինի, կապված է հարկադրվող կարգ ու կանոնի և ներդաշնակության հետ հաշտվելու այդ անհնարինությանը: Մարդկային ոգու ազատությունը նա հակադրում է և՛ կաթոլիկությանը, և՛ սոցիալիզմին: Սրանում է ծաղրական և հետադիմական կերպարանքով ջնհարմենի բուստի իմաստը: Դոստոևսկին չի ընդունում ո՛չ այն դոգմա, որում դեռևս անկարելի է ոգու ազատությունը, ո՛չ այն դոգմա, որում այն արդեն հնարավոր չէ: Մարդը պետք է անցնի հարկադրվող աշխարհակարգից արտանկումի միջով, պետք է իր ոգու ազատության միջով անցկացնի աշխարհակարգը: Հավատքը, որի վրա Դոստոևսկին ցանկանում էր կազմակերպել հասարակական կարգը, պետք է ազատ հավատք լինի: Մարդկային խղճի ազատության վրա է հենվում այդ հավատքը: «Կասկածների հնոցի միջոցով իմ Օվսաննան ծնվեց», - գրում է Դոստոևսկին իր մասին: Եվ նա կցանկանար, որ ամեն հավատք կասկածների հնոցում թրծվեր:

Դոստոևսկին, հավանաբար, խղճի ազատության ամենակրթությամբ պաշտպանն է եղել, որպիսին միայն քրիստոնեական աշխարհն է ճանաչել: «Նրանց հավատքի ազատությունը ձեռք համար ամեն ինչից թանկ էր», - ասում է Մեծ Հավատքեցունիքը Քրիստոսին: Եվ նա կարող էր այդ ասել հենց Դոստոևսկու: «Դու մարդու ազատ սերը կամեցար»: «Հին՝ անդրդվելի օրենքի փոխարեն մարդն ինքն այտուեպես ազատ սրտով պետք է որոշեր՝ ո՞րն է բարին և ո՞րը՝ չարը, իր առջև միայն Քո պարկերն ուղեցույց ունենալով»: Քրիստոսին ուղղ-

խոսքերը. «Դու ես Ջրիստոս՝ Կենդանի Աստծու Որդին»: Դոստոնսկին զգաց, որ նրանց փրկությունը դա է: Նրանք պետք է կործանվեն, եթե իրենց մեջ ոգու ազատ գոյություն չգտնեն Ջրիստոսի մեջ ճանաչելու Աստծու Որդուն: Բայց եթե ճանաչեն, այդ դեպքում ընդհատակյա մարդու ազատությունն Աստծու որդիների ազատությանը կվերածվի: Ազատության ուսումնասիրության ուղին Դոստոնսկին սկսում է «ընդհատակյա մարդու» ազատությամբ: Այդ ազատությունն անսահման է ներկայաևում: Ընդհատակյա մարդն ուզում է անցնել մարդկային բնության սահմանները, նա ընկնում և փորձում է այդ սահմանները: Եթե մարդն այդքան ազատ է, ապա արդյո՞ք ամեն ինչ թույլատրելի չէ, արդյո՞ք ցանկացած ոճրագործություն չի թույլատրվում հանուն գեղագույն նպատակների, ընդհուպ մինչև հայրասպանություն, արդյո՞ք Մադոննական և Սոդոմական իդեալը համարժեք չեն, արդյո՞ք մարդը չպիտի ձգտի Աստված դառնալուն: Արդյո՞ք մարդը պարտավոր չէ ինքնակառնություն հռչակելու:

Դոստոնսկին զգաց, որ ընդհատակյա մարդու ազատության մեջ մահվան սերմն է դրված: Մարդկային բնության սահմաններն անցնող Ռասկոլնիկովի ազատությունը սեփական ոչնչության, փկարության և անազատության գիտակցությունն է ծնում: Սրավորոգինի ազատությունը բացարձակ անգործության է վերածվում, անտարբերության, անձնավորության հյուծումի և մարումի է վերածվում: Աստված դառնալ ցանկացող Կիրիլովի ազատությունն ավարտվում է սարսափելի, անպարտք կործանումով: Թերես այստեղ Կիրիլովն է առավել կարևորը: Կիրիլովն ինքնակառնությունն իբրև պարտք, իբրև սուրբ պարտականություն է ընդունում: Նա պետք է ինքնակառնություն հայտարարի, որպեսզի մարդը գեղագույն վիճակի հասնի: Եվ նա, կրքերից և հակումներից հրաժարված, մաքուր մարդ է, նրանում անշնորհական սրբության գծեր կան: Բայց նույնիսկ ամենամաքուր մարդը, որը մերժել է Աստծուն և կամեցել ինքն աստված դառնալ, կործանման է դատապարտված: Նա այլևս կորցնում է իր ազատությունը: Նա մոլագար է, նա ոգիների իշխանության տակ է, որոնց բնությունը ինքն էլ չի ճանաչում: Եվ Կիրիլովը մեզ ներկայացնում է իր մեջ կենտրոնացած հանդարտ դիվանագիտության և մոլագարության պարկերը: Նրա ոգու ազատության մեջ արդեն վերասերման հիվանդագին գործընթացներ են տեղի ունեցել: Ամենից քիչ նա ազատ ոգու տեր մարդ է: Մարդաստրվածության ճանապարհներին խորտակվում է մարդկային ազատությունը և կործանվում մարդը: Սա Դոստոնսկու հիմնական թեման է: Այսպես է կործանվում ազատությունը նաև Դոստոնսկու մյուս երկարված հեղափոխական կառնության ճանապարհներին բոլոր մոլորվածների մոտ: Սվիդրիգայլովի կամ Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի մեջ մենք արդեն անձնավորության այնպիսի քայքայման ենք հանդիպում, որի դեպքում ազատության մասին խոսք անգամ չի կարող լինել:

Նեշտասիրության անգուստ, անսահման ազատությունը մարդուն իր ստրուկն է դարձնում, զրկում ոգու ազատությունից: Դոստոնսկին մեծ վարպետ է չար կոքով կամ չար գաղափարով բռնվածության ազդեցության տակ անձնավորության վերասերումի և այլասերումի նկարագրության մեջ: Նա ուսումնասիրում է այդ բռնվածության գոյաբանական հետևանքները: Երբ սանձարձակ ազատությունը մոլագարության է վերածվում, այն կործանվում է, այն այլևս գոյություն չունի: Երբ մարդն սկսում է դիվորել, նա դեռևս ազատ չէ: Արդյո՞ք ազատ է Վերսիլովը՝ Դոստոնսկու ամենաազնիվ կերպարներից մեկը: Եկարեքի-նա Նիկոլանայի նկարմամբ նրա կիրքը մոլագարություն է: Այդ կիրքը մեխված է մեջը:

[illegible]

Նրանք, ովքեր գնացել են ինքնակամության և ինքնահաստատման ճանապարհներով, որոնք իրենց ազատությունն ընդդեմ Աստծու են ուղղել, չեն կարող պահպանել ազատությունը, նրանք անխուսափելիորեն նրա ուրնահարմանն են հանգում: Նրանք անխուսափելիորեն պետք է հրաժարվեն մարդկային ոգու անդրանկությունից, նրա անդրանիկ ազատությունից, նրանք անհրաժեշտության թագավորությանն են մտնում ազատությունը, նրանք մեծագույն բռնությունների են հասնում: Սա Դոստոևսկու ամենահանճարեղ կոա-հումներից մեկն է: «Անսահման ազատությունից ելնելով», - ասում է Շիգալովը, - «ես ավար-տում եմ անսահման դեսպոտիզմով»: Այդպիսին է միշտ եղել հեղափոխական ազատությ-յան ճանապարհը: Այդպես, ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ «անսահման ազատությունից» անցում է կատարվել դեպի «անսահման դեսպոտիզմ»: Ազատությունն իբրև կամայականություն և ինքնակամություն, անասլոված ազատությունը չի կարող «ան-սահման դեսպոտիզմ» չառաջացնել: Այդպիսի ազատությունն իր մեջ ամենամեծ բռնոթ-յունն է պարունակում: Այսպիսի ազատությունն իր մեջ ազատության երաշխիք չունի: Ինք-նակամության ընդվզումը կյանքի Իմաստի, ճշմարտության ժխտմանն է վանում: Կենդա-նի Իմաստն ու կենդանի ճշմարտությունը ենեզափոխվում են կյանքի ինքնակամ կարգա-վորումով, հասարակական մրջնանոցում մարդկային բարեկեցության ստեղծումով: Ազա-տության «անսահման դեսպոտիզմի» վատասերումի այս գործընթացը Դոստոևսկու աշ-խարհայեցողության մեջ շար կարևոր տեղ է զբաղեցնում:

Արտաքինից այնքան ազատասեր ռուս ձախ մտավորականության հեղափոխական գաղափարախոսության մեջ նա «անսահման դեսպոտիզմի» ենարավորությունն է մերկացնում: Նա շատ բան առաջինը տեսավ և ուրիշներից ավելի հեռուն տեսավ: Նա գիտեր, որ հեղափոխությունը, որը նա զգացել էր Ռուսաստանի ընդերքերյա, ենթահողային շերտում, ազատություն չի բերի, որ մարդկային ոգու լիակատար ստրկացմանն ուղղված շարժում է:

սկսվել: Արդեն «Նոթեր ընդհատակից» ստեղծագործության հերոսի ապշեցուցիչ մտքերում նշմարվում է այն, ինչ վերջնականապես դրսևորվում է Պ. Վերխովենսկու, Շիգալյովի, Մեծ Հավատարեների մեջ: Մղձավանջի նման Դոստոևսկուն ճնշում և հեղափոխում էր այն միտքը, որ Քրիստոսի ճշմարտությանը դավաճանած մարդկությունն իր ընդվզման և ինքնականության մեջ պետք է հանգի Շիգալյովի, Պ. Վերխովենսկու, Մեծ Հավատարեների «անսահման դեսպոտիզմի» համակարգին: Դա միևնույն համակարգն է: Նրանում, հանուն մարդկանց երջանկության, մարդկային ոգու ազատությունից երաժարում է տեղի ունենում: Հասարակական էվոլյուցիոն հակադրությունը էր ազատությանը: Եթե չկա ճշմարտություն, հասարակական երջանկության հարկադրական կազմակերպումից բացի ոչինչ չի մնում: Հեղափոխությունը ոչ թե հանուն ազատության է կատարվում, այլ՝ հանուն նույն սկզբունքների, հանուն որոնց բոցավառվել են հավատարեության խարույկները, հանուն «հազար միլիոն երջանիկ մանուկների»:

Մարդը չէր կարող պանել ոգու ազատության լուծը, նա զարհուրեց ազատության փառապալից ճանապարհից: Եվ նա հրաժարվում է ազատությունից, դավաճանում է ազատությանը, նրանից դեպի մարդկային երջանկության հարկադրական կարգավորում է փախչում: Ազատության այս ժխտումն սկսեց վերջինիս՝ իբրև ինքնակամության անսահման հաստատումից: Այսպիսին է ազատության ճակատագրական դիալեկտիկան: Բայց եթե կեղծ ազատությունն «անսահման դեսպոտիզմի», ազատության կատարյալ ոչնչացումի է վերածվում, ապա կեղծ հավասարությունն էլ չսոված անհավասարության, մեծամասնության նկատմամբ արտոնյալ փոքրամասնության բռնակալական գերիշխումի պետք է հանգեցնի:

Դոստոևսկին միշտ կարծել է, որ բացարձակ հավասարության գաղափարով բռնված հեղափոխական դեմոկրատիան և հեղափոխական սոցիալիզմն իրենց վերջնական սահմաններում պետք է հանգեցնեն մնացյալ մարդկության վրա ոչ մեծ կույտի գերիշխանությանը: Այդպիսին է Շիգալյովի համակարգը, նույնն է նաև Մեծ Հավատարեների համակարգը: Դոստոևսկին «Գորոխ օրագրում» մեկ անգամ չէ, որ վերադարձել է այս մտքին: Այդ միտքը փանցել է նրան, հանգիստ չի տվել: Ընդհարյալ ազատությունն ու ճշմարիտ հավասարությունը Քրիստոսի մեջ, Աստվածամարդության ճանապարհին են միայն հնարավոր: Հակաքրիստոսյան ինքնակամության ճանապարհին, մարդաստվածության ճանապարհին միայն չսոված բռնակալություն է սպասում: Համընդհանուր երջանկության, առանց Աստծու մարդկանց համընդհանուր միասնության գաղափարով բռնվածությունն իր մեջ մարդու կործանման, նրա ոգու ազատության ոչնչացման տարսափելի վտանգն է պարունակում: Այսպիսին են ազատության՝ իբրև ինքնակամության և ընդվզման իրական հետևանքները: Բայց ինքնակամությունն ու ընդվզումն ընդդեմ համաշխարհային իմաստի՝ մարդկային գիտակցության համար ազատության գաղափարի բուն մուտքն են արգելում:

Ոգու ազատությունն սկսում է գաղափարաբանորեն ժխտվել իբրև հավիտենական Իմաստից կտրված մարքի համար անհասանելի դարձած մի բան: «Էվկլիդեսյան միտք» արտահայտությունը, որը Դոստոևսկին սիրում է, անգոր է հաստ լինելու ազատության գաղափարին, այն անմարչելի է նրան՝ իբրև միանգամայն խռացիոնալ խորհուրդ: Աստծու դեմ «Էվկլիդեսյան մտքի» ընդվզումն ազատության ժխտման, ազատությունը չըմբռնելու հետ է կապված: Եթե չկա ազատություն՝ իբրև աշխարհաստեղծման վերջին խորհուրդ, ապա այս

Ազգապոլությունը չորրորդ չափման ճշմարտություն է, այն անհասանելի է երեք չափումների սահմաններում: «Էվկլիդեսյան միություն» անգործ է ազգապոլության վերաբերյալ նյութին լուծում տալ: Դոստոևսկու մոտ թուր ինքնակամություն ու ընդվզում հայտարարողներն ազգապոլության ժխտման են հանգում, որովհետև նրանց միպոլը նեղանում է, երեք չափումների սահմանների մեջ մտնում, փակում է նրանց համար արտաշխարհները: Ընդվզումն սկսվեց ազգապոլությունից, բայց ավարտվեց աշխարհը բացառապես անհրաժեշտության վրա կառուցելու փորձով: Դոստոևսկին ապշեցուցիչ դիպելկրիկական ուժով մարդկային գիտակ-

ցության համար, ընդվզող ռացիոնալիզմի և մարդկային կյանքի համար, ընդվզող հեղափոխականության ճակատագրական հետևանքներն է ուսումնասիրում: Անսահման ազատությունից սկզբնավորված ընդվզումը մտածողության մեջ՝ անսահման իշխանության և կյանքում անխուսափելիորեն անսահման դեսպոտիզմի է հասնում: Այդպես է շարադրում Դոստոևսկին իր հիմնալի թեոդիցիան, որը միաժամանակ անարատադիցիա էլ է: Միայն մի հավերժական ատարկություն կա Աստծու դեմ աշխարհում չարի գոյությունը: Դոստոևսկու համար այդ թեման հիմնականն է: Եվ նրա ողջ ստեղծագործությունն այդ ատարկումի պարասխանն է: Եվ ես այսպես պարադոքսալորեն կձևակերպեի այդ պարասխանը: *Է Մարված հենց այն պարսնառով, որ աշխարհում կա չարիք և տառապանք, չարի գոյությունը Աստծու լինելության ապացույցն է: Եթե աշխարհի բացառապես չարի և լավ լինելը, ապա Աստծու կարիքը չէր լինի, ապա աշխարհն այլևս աստված կլիներ: Է Մարված, որովհետև կա չար: Մա նշանակում է, որ Է Մարված, որովհետև ազատությունն է:* Եվ Դոստոևսկին Աստծու լինելությունը ազատության մարդկային ոգու ազատության միջոցով է ապացուցում: Ովքեր ժխտում են մարդկային ոգու ազատությունը, ժխտում են և Աստծուն, և ընդհակառակն:

Հարկադրաբար չարի և լավ աշխարհը, անխուսափելի անհրաժեշտության պարճառով ներդաշնակ աշխարհն անաստված աշխարհ կլիներ, կլիներ ռացիոնալ մեխանիզմ: Եվ ովքեր մերժում են Աստծուն և մարդկային ոգու ազատությունը, ձգտում են աշխարհն այդպիսի ռացիոնալ մեխանիզմի, այդպիսի հարկադրական ներդաշնակության վերածելու: Ազատության վերաբերյալ թեման Դոստոևսկին դիմամիկ և ոչ թե ստաբիլ է մեկնաբանում, նրա ազատությունը շարունակ դիալեկտիկական շարժման մեջ է գտնվում, նրանում ներքին հակասություններ են դրսևորվում, և այն մի փուլից մյուսն է անցնում: Ուստի, ստաբիլ մտածողության և ստաբիլ գիտակցության տեր մարդկանց համար դժվար է հասկանալ ազատության վերաբերյալ Դոստոևսկու մեծ հայտնությունները: Նրանք «այո» կամ «ոչ» են պահանջում այն ժամանակ, երբ այդպիսի պարասխաններ չեն կարող տրվել: Ազատությունը մարդու և աշխարհի ողբերգական ճակատագիրն է, հենց Աստծու՝ վիճակը և այն կեցության հենց կենտրոնում է գտնվում՝ իբրև նրա նախասկզբնական խորհուրդ: Մենք դեռ կտեսնենք, որ ազատության վերաբերյալ դիալեկտիկական Դոստոևսկու մոտ իր լրումին է հասնում «Մեծ Հավաքաբանիչի մասին լեգենդի մեջ», որում կենտրոնանում են բոլոր թեմաները, միավորված են բոլոր թելերը:

Ռուսերենից թարգմանեցին՝

ԳԵՎՈՐԳ ԱԲԵՂԱ ՄԱՐՈՅԱՆ
ԱՐԱՄ ՄԱՐԿԵՎԻՉ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸՆ ՈՐՊԵՍ Ե ԴԱՐԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՇՏՈՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Հորս՝ ակադեմիկոս Սեն Արնշատյանի
75-ամյակի առթիվ

Մատենագրական և մշակութային ժառանգության հայացման լայն շարժումը և դա-
րում մեկնողական, ջատագովական, հայրաբանական, պատմագիտական և վկայաբանա-
կան գրականության հետ մեկտեղ ընդգրկել էր նաև կանոնագրությունը և պաշտոնա-
գրությունը: Այսուհետև ստեղծումից և թարգմանական եռանդուն գործունեությունից զատ
Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևն իրենց աշակերտների օգնությամբ անմիջական
մասնակցությունը բերեցին պաշտոնագրության ձևավորմանն ու հայացմանը, որը մինչ այդ
տարվում էր հումարեն և ասորերեն: Դեռևս Ե. 20-30-ական թթ. հայերեն թարգմանվեցին
Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Երուսաղեմա-
ցու, Եփրեմ Ասորու և վաղ քրիստոնեության երևելի այլ հեղինակների ճառերը, աղոթք-
ներն ու քարոզները, կցորդները և այլ հոգևոր երգեր: Դրանց զուգահեռ ստեղծվում էին
ինքնուրույն մտանադիպ երկեր, որոնք սկզբնավորեցին ազգային դպրության ոսկեդար-
յան վերելքը:

Հայ երաժշտական միջնադարագիտության տեսանկյունից դեռևս չեն լուսաբանվել
Սահակ Պարթևի հեղինակած եկեղեցական կանոնները¹, որոնք կարևոր պատմական
վավերագիր են նաև Հայ Եկեղեցու պաշտոնագրության ուսումնասիրման համար՝ աղոթ-
վելով մեր մյուս երաժշտա-ձիսական մատյանների հայացման և կազմավորման գործըն-
թացին: Այդ կանոնները պատկերացում են տալիս թարգմանչաց ժամանակաշրջանի մի
շարք իրողությունների և տակավին խմորումներ ապրող հայոց ձիսակարգի վերաբերյալ:

Տվյալ կանոնների համադրությունը և դարի մեր պատմիչների երկասիրությունների և
այլ վավերագրերի հետ հստակեցնում է ոսկեդարյան հայ իրականությանն առնչվող և այդ
ժամանակի հասարակությանը հուզող երևույթների, այդ թվում՝ պաշտոնագրությանն ա-
ռաջադրվող պահանջները Եկեղեցու հովվապետի կողմից:

Կանոններն աչքի են ընկնում շրջահայացությամբ, լայն աստվածաբանական գիտա-
պաշարով: Օրենսգրքին հատուկ խիստ շարադրանքը շնչում է իմաստությամբ և քարոթ-
յամբ, սենտուն մախանձախնդրությամբ արժարժվող հարցերի նկատմամբ:

¹ Տե՛ս Կանոնագիրը Հայոց, հտ. Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, Հայկական ՍՍՌ
Գիտությունների Ակադեմիայի հրատ., 1964, էջ 368-379:

Ինչպես նշված է ԽԴ հոդվածում՝ «Այս սահմանադրություն կարգաց գրեցաւ Բրամանաւ երանելոյն Սահակայ մեծ Հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ մահատակէն՝ ի տեսունէն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն յունէ ի հայ»:

Կանոնների մի շարք պարբերություններ վերաբերում են ժամագրքի, Պատարագամատուցի, «Մաշտոց» ծիսարանի և Տոնացույցի կազմավորմանը:

Անդրադարձալով Սաղմոսարանի կիրառությանը, որը կազմում էր ժամագրքի ատաղձը, և որի հայացմանը մեծ նպաստ բերեց հենց ինքը՝ Սահակ Պարթևը, իր հեղինակած գիշերային ժամի չորս երգեցիկ քարոզներով և նրանց կից աղոթքներով² (որոնցով փաստորեն հիմք է դրվում հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագրքի ինքնուրույն ազգային նկարագրի ձևավորմանը), մեծ Հայրապետը գրել է. «Եւ պաշտօն սաղմոսեբոթեանն անխափան լիցի ի տուրնջեան եւ ի գիշերի, ըստ արիմակի մայրաքաղաքացի՝ հայրն Բովուապետի. զի ամենայն ումեք չէ արեւն եւ իշխանութիւն յապաղել զայն կարգ պաշտաման, կամ նորաձեւութիւնս ինչ առնել, այլ միշտ ի միմի յարամնալ»³: Կամ «Զամանն գլխաւոր քահանայն հանապազորդեալ յեկեղեցւոյն կացցէ, եւ այլ ընկերքն շաբաթուք առ մեա փոխանակաւ կացցեն, զի պաշտամունքն տուրնջեան եւ գիշերոյ մի՝ խափանեսցին, վասն զի այդ է գործ մշակութեան եւ մոյն պատիւ»⁴: «Բահանայք միաբան կատարեսցեն զպաշտաւնն, եւ զպատարագ ազապացն առանց Աւետարան կարդալոյ մի՝ իշխեսցեն քահանայք մատուցանել»⁵:

ԼՐ զլուխն անդրադառնում է ծիսակարգի և տոնակարգի այլևայլ հարցերին, այսպես. «Զպտուղս զմախնեաց կարգեսզս՝ եւ զամենայն ընծայս ուխտից զԶատկաց եւ ազապաց եւ զայլոց տամից՝ ժողովորդականք սիրով եւ լրջմտութեամբ հատուցեն յեկեղեցիս, որպէս արեւն է. զգուր եւ զմարմնոյ պատճառս կենդանութեան մի արգելեալ խափանեսցեն եւ խափանեսցին ի կենդանեաց ոգւոց: Իսկ եթէ ոք կամակարութեամբ ապստամբեալ յիրմէ քահանայէն և ի վանաց՝ արտաքոյ իւրոյ եկեղեցւոյն ի վանս ուրեք կամ յանապատս զպտուղս եւ զպատարագս մատուցէ՝ այնպիսին ինքն եւ ընդունալոյքն հետի չիցին յարհնութենէ և ի հաղորդութենէ ընկերաց հանդերձ ըմտանեալք, մինչեւ ապաշխարեսցէ եւ տուժեսցի յեկեղեցւոյ, վասն զի եղեւ պատուիրանազանց եւ աստուածամարտ»:

² Այդ մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Զարդի ժամը հայ հոգևոր երգաստեղծության մէջ», «Պատմա-քառասիրական հանդես», 1992, թիվ 1-2: Նույնը ներառւնք՝ A. S. Arevchatsian, La Proclamation melodisec dans le Chant Sacre Armenien, "Revue des Etudes Armeniennes", 24, 1993.

³ Մայրաքաղաք՝ եզրի կապակցությամբ տե՛ս Պ. Մուրադյան, Բնագրագիտական դիտարկումներ խորենացու Պատմության հեղինակային իսկազորի վերականգնման ուղղությամբ («Հայկազյան Հայագիտական Հանդես», ԻԱ, 2001, էջ 81), որ նկատել է, որ «այստեղ խոսքը ճիշտ խորենացու հիշատակած սպուդների (ակմիների՝ անհիճեցների) միաբանության՝ վանք-մայրաքաղաքի հովվապետ հոր մասին է: Սպուդները մույն ակմներն են, որոնց կարգին է դասուվ Կորյունը իր ուսուցչին՝ Մաշտոցին. «ուստի եւ Բրաման ելանէր՝ վայելուչ մեծարանքք գևուրքն՝ Ակումիտ աճուն կոչելոյ», տե՛ս Կորյուն, Վարդ Մաշտոցի, քննադիրը, ձեռագրական այլ ըմբռնվածներով, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Արեղյանի, Երևան, Հայպետ-հրատ, 1941, էջ 64-65:

⁴ Կանոնք, Գ:

⁵ Կանոնք, ԺԵ:

⁶ Նույն տեղում, էջ 383:

ատարիմն կոչեցաւ՝ զնոյն ուսուցանէր ի պատուիրելն իւրոյն Սատուդայ. «Իբրեւ զմասցես յինէն՝ Բանդիպեցցիս եկեղեցւոյ՝ պարու մարգարէից մարգարէացելոց»:

Այնուհետեւ դրսևորվում է Սահակ Պարթևի աստվածաբանական խորն իմացությունն ու հմտությունը, ճարտասանական իր ողջ վարպետությամբ, իբրև քարոզչի. «Տեսանես, զի ոչ եթէ զխորանն կոչէ եկեղեցի, յորում կայր արկղն կտակարանաց, եւ միւս խորանն, որ կոչէր սրբութիւն, այլ զհաւատացեալ ժողովորդն անտարանէ: Վասն այնորիկ եւս առաւել բարձրագոյն եւ առաքեալն Պաւլոս նորագոյնս իմն եւ յաւետ հրաշալիս, քանզի ցուցանէ զեկեղեցի անդրանկաց գրեցոց ոչ յերկրի. այլ յերկինս, որոց անուանք գրեալ են ի դպրութեան կենաց: Տեսէ՞ր զճշմարիտ հիմն եկեղեցւոյ, վասն որոյ Փրկիչն ասաց խնդալ զառաքեալսն, թէ «Խնդացէ՛ք զի անուանք ձեր գրեալ են ի դպրութեան կենաց» եւ զանապական, որոյ սկիզբն կալաւ շինելոյ յերկրի, որ անցանելոց է, եւ աւարտեցաւ ի կատարս երկնից բարձրութեան»:

Լէ հողավածի բովանդակությունը վերաբերում է եկեղեցու խորհրդին և նպատակին. «...զի՞նչ է եկեղեցի: Այլ ոչ եթէ արհամարհել ինչ ուսուցանեմք զշինուածովք պատուեալ զտեղիսն, որ անուանին ժողովրդանոցք, քանզի ի նոսա ժողովին քահանայք ու մանկւոնք ուխտի եւ պաշտամեայք Աստուծոյ՝ կատարել զաղաթս եւ զխնդրուածս, վասն որոյ եւ աղաթարանք կոչին եւ սրբարանք. եւ հաստատեալ կայ ի նոսա Տէրունական սեղանն, յորոյ վերայ զհացն եւ զգինին պատարագեմք, յարինակ կենդանարար մարմնոյ եւ արեանն Բրիստոսի, որ միշտ անծախապէս բաշխի ի մեզ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. եւ ի նոսա կայ ուղղեալ աւագան մկրտութեան, որով լուսաւորեայք վերստին ծննդեամբ եւ Հոգւովն Սրբով, դրոշմիմք ի յոյս կենացն յաւիտեանականաց. եւ հանապազ անդր զումարելով՝ լսեմք սաղմոսերգութիւնս եւ զպատգամս պատուիրանացն Աստուծոյ»:

Խ զլուխն ամբողջությամբ նվիրված է V դ. Հայոց եկեղեցու կողմից կանոնակարգված տոներին՝ դառնալով քննվող վավերագրի կարևորագույն մասերից մեկը. «Տաւն սրբոյն Յովհաննու Մկրտչի եւ վկայի, զոր մախակարգեաց առաքեալն եւ խոստովանողն Բրիստոսի եւ հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս Գրիգորիոս՝ ի վանս, զի ուխտադրութեան պահաւք հաստատեցաւ: (...) Եւ տաւն ամենայն մարտիրոսաց զոր մատուռն կոչեմք: Վարդավառին մատաղենիցն միայն պտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ ի ժողովրդականաց և յամուսնացելոց քահանայիցն յառաջին արմտեացն, այսինքն յընտրոցն, զի զեղծիցն կայք ցորենոյ եւ հնձանք զինոյ եւ յիւղոյ: (...) Տաւն սրբոյ Յայտնութեանն, եւ քառասնորդք նորա, եւ Տեառնընդառաջն, եւ Առաջատր պահոցն կատարումն: Տաւն միջնոց քառասնէրորդացն Զատիկն, ալր Ղազարու, մեծ հինգշաբաթի Զատիկն, յորում կենարարն մեր աւանդեաց աշակերտացն զխորհուրդս նորոյ ուխտիս: Երկուշաբթի Զատիկն ընծայիւք եւ հաճոյակատար աւտիւք դիր Զատիկն, տաւն Ամբաստնայոյ Տեառն յերկինս, տաւն Վախճանելոցն յելս հրոտից ամսոյ:» Ծարունակում է կաթողիկոսը. «Իսկ ամուսնացելոց քահանայիցն եղիցին տաւնք շաբաթն՝ Զատիկի, եւ Զատիկն սուրբ, եւ երկրորդ Զատիկն եւ յերկրորդ Զատիկէն ի վեր կիրակէքն ամենայն եւ Պենտեկոստն եւ տաւն սրբոյ Աստուածածնին եւ Վարդավառն: (...) Եւ տաւն Բարեկենդանին եւ Ողորոմեանն մեծ, որ թարգմանի քարեքանեալ ար» (կանոն ԽԳ):

⁷ Տե՛ս Ա. Արևշատյան, «Մաշտոց» ժողովածուն որպես Հայ միջնադարյան երաշտական Մշակույթի Հուշարձան, Երևան, Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1991, էջ 19-21, ուր զետեղել ենք Օրմուշեցեարեք ցուցակի բնական քմազիրը՝ կազմված Երևանի Մաշտոցյան Մատենադարանի թիվ 142, 179, 341, 577, 580, 582, 603, 744, 958, 1114, 1898, 2335, 2543, 2607, 3651, 4207 ձեռագրերի:

յետ սրբոյն Գրիգորի ԸԺԱ ամի մինչեւ ցայն վայր՝ Ռնովն վարէին: Արար սուրբ Սահակ եւ զԴ քարոզան զգիշերոյ եւ զնոցիւն աղաթան:

Իսկ զՀիմնարկէք ու զԵկեղեցւոյ արհմեք, եւ զՍրբել տաճարի, եւ ժամափարի, եւ սկի եւ մաղզմայի, եւ համդերծի սպասու եւ աւագան եւ Մկրտութիւն առնել, եւ խաչ արհմել եւ Պսակ դնել, եւ պահոց քարոզան եւ աղաթան, զայդ Մանդակունի է արարեալ, որ ԺԴ թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցաւ⁸:

Յուցակի մյուս խմբագրութիւնն այսպէս է ավարտվում. «Շարադրութիւն կարգաւորութեան սբ. ցուցակիս, զոր մակարեալ սբ. հարն Մաշտոցի ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, եւ ի պարծան մանկանց մորից, ի դաստիարակութիւն նոցա եւ յուսումն. եւ ի յաստատութիւն հաւատացելոց Ա. երրորդութեան: Այս ամենայն ի հրամանէ սրբոյն Սահակայ Պարթևի ձեռամբ Մովսէսի գրչի, մորոգեցաւ ի Հայք, ի փառս Աստուծոյ»⁹:

Ակնհայտ է խնդրո առարկա կանոնների և Օրհնութեաքեր ցուցակի միջև եղած կապը: Վերջինս քաղական մանրամասն տեղեկություններ է հաղորդում Սուրբ Սահակի լայնածավալ գործունեության մասին, որն ուղղված էր նախևառաջ Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգի ու պաշտոններգության կարգավորմանն ու բարելավմանը:

Իսկ ի՞նչ կնշանակեր նվիրվել կանոնագրությամբ: Դա նշանակում էր՝ տարբեր ծիսական կանոնների նաև երաժշտական ձևավորման մասին հոգալը և համապատասխան երգասացություններ հեղինակել-հնչեցնելը: Պատահական չէ, որ երկու վավերագրերում էլ հիշատակված են Ավագ շաբաթվա, մասնավորապես՝ Ղազարու հարության (կանոնք), Ավագ հինգշաբթի օրերը (կանոնք և Օրհնությունաքեր ցուցակ), Տոն Վախճանելոց, այսինքն՝ մեռելոցը (կանոնք և Օրհնությունաքեր ցուցակ), գիշերային ժամի չորս քարոզներն իրենց աղոթքներով (Օրհնությունաքեր ցուցակ) և այլն:

Այս համատեքստում Սահակ Պարթև կաթողիկոսը մեր առջև հանում է իբրև վիթխարի մի աճ՝ եկեղեցական խոշոր գործիչ, հայրապետ, ազգային գրի և դպրության ստեղծողներից մեկը, աստվածաբան, ծիսագետ, նաև՝ Մեսրոպ Մաշտոցի հետ միասին ազգային շարականերգության հիմնադիր: Նրա ներդրումը Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոններգության ձևավորման մեջ դժվար է գերազանահատել:

⁸ Նույն տեղում, էջ 19-21:

⁹ Նույն տեղում, էջ 21:

ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՆԱՅԵՐԷՆ ՉԵՌՈՎԵՐԻ ԿՈՐՍՈՒԱՅ ՆԱԲԵԱԾՈՒՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՆՐԱՏԱՐՈՒԾՄԱՆ ԽՆԴԻՐՈՂ(Նախնական հաղորդում. Լիմ անապատի 1282 թուականի
վերադառնալու Նոր Կտակարանի առիթով)

Տարիներ առաջ հաշուել էիք, որ չեն պահպանուել, մեզ չեն հասել կամ դեռևս ան-
յայտություն մէջ են բանասիրական գրականությունն եւ առօրեայ մամուլի մէջ 1915ից ա-
ռաջ Արեւմտեան Հայաստանի տարածքում արձանագրուած Հայերէն միջնադարեան մա-
տաւոր հաշուով 9.000ից ասելի ձեռագիր¹։ Անկասկած, եղեռնի ընթացքում մեր կրած
մշակութային կորուստների հաշուառման խնդրի տուժումով այս թիւն իրականում եղած
ձեռագրական հարստութեան սոսկ փոքր մասն է², սակայն սա հարցի միայն մի կողմն է,
ձեռագրական առումով կարելոր միւսն այն է, որ այսպիսի ձեռագրերի ունեցած նիւթի ար-
ժանագրուած՝ յարաբերականորէն փրկուած մասը շրջանառութեան եւ գործածութեան
մէջ դնելու համար առաջնային արժէք ունի հետեւեալը. պէտք է նախ կատարելապէս՝
հնարաւոր ամբողջականութեամբ եւ լաւ մտածուած սկզբունքներով հաշուառել Հայերէն
ձեռագրերի՝ հայկական եւ այլալեզու մամուլում, զանազան՝ յատկապէս տեղագրական
ուսումնասիրութիւնների մէջ գրառուած եւ, յատկապէս՝ անտիպ մնացած բոլոր, ընդհուպ
մինչեւ մէկ միաւորի նկարագրութիւնները։ Ապա անհրաժեշտ է աւանդական տեսքի,
մանրամասն անուանացանկերով օժտուած ծաւալուն հատորներով, նաեւ՝ փնտրտուքի
բազմադաշտ օժանդակ ծրագիր ունեցող նորագոյն՝ համակարգչային եղանակներով հրա-
տարակել բոլոր այն նկարագրութիւնները, որոնց հիմք ձեռագրերը չեն մտել ազգային
կամ պետական որեւէ հաստատութեան կայուն եւ տեւապէս ապահով պահպանուող հա-
ւաքածուի մէջ կամ էլ ակնհայտաբար կորսուած են։ Խնդիրն այսպէս դնելու տրամաբա-
նութիւնը հետեւեալն է. հաստատուն եւ ապահով հաւաքածուներում պահպանուող ձե-
ռագրերն այսօր նախ մատչելի են գիտութեանը, ապա՝ իրենց հասանելիք կարգով մի որ
նկարագրուելու են. սրան զուգահեռ, ծրագրուած աշխատանքով պէտք է ժողովել, մէկտե-
ղել եւ լաւագոյնս գործածելի դարձնել նաեւ ցրուածին ու կորսուածին վերաբերող յիշա-
տակները, նրանց ընձեռած հնարաւորութիւնները։

¹ Հիմնուել եմք մեծ մասամբ հետեւեալ արժէքատր աշխատութեամ վրայ՝ Սուրէն Բալանջեան, Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները. - «Էշմիածին», 1965, Ա-Դ., էջ 96-107, Ե-Է., էջ 133-44. 1966, Ը., էջ 27-37, Թ-Ժ., էջ 88-93. 1967, Ե., էջ 46-57, Զ., էջ 50-5 (ամսադրոյ). ուրուագծել է 1894-6, 1909, 1915 թթ. Վասպուրականում, Տարսուտ, Կարիմում, Կեսարիայում, Մա-
լաթիայում, Ամսկիւրիայում, Արմաշում, Սեբաստիայում ոչմշակուած եւ մասամբ փրկուած ձեռագրա-
կան հաւաքածուների պատկերը։

² Համեմատութեամ լաւ չափամիջ է 1915իմ Էշմիածնի մատենադարանի ունեցած ձեռագրերի
քանակը՝ 4460 միատր, որ այսօր Արա ժառանգորդ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում հա-
սել է 11105ի (սա Հագերէմ ամբողջական ձեռագրերի՝ հիմնական հաւաքածուի քանակն է, բոլոր
հաւաքածուները միասին 2002 թ. Դեկտեմբերի 31ի դրութեամբ ունեւ 17.054 միատր)։

Այս անելիքի մէջ կարեւոր է նաեւ արեւմտեան աճուրդներում վաճառուած եւ յաճախ վերավաճառուող ձեռագրերի նկարագրութիւնների հաշուառումը, որանք հիմնականում արեւմտահայութեան խնամքի հետ եղեռնից փրկուել եւ առաջին համաշխարհային պատերազմից յետոյ մտել են եւրոպական եւ ամերիկեան պետական ու անձնական հասարակութիւնների մէջ: Ահա ժամանակակից հաստատումը՝ «1915ի ազգային աղէտը ամայացնել է յետոյ մեր հազարաւոր եկեղեցիներն ու վանքերը, կողոպուտի ենթարկուել էին անոնց թանգարաններն ու գանձատուները, հարուստ՝ այլազան զարդ ու սպասներով ու թանկարժէք ձեռագիրներով, որոնց շատ քիչ թիւով մնացորդները միայն 1918ին ու 1922ին սկսան դուրս գալ Կ. Պոլսոյ, Եգիպտոսի, Եւրոպայի ու մասնաւորապէս Մ. Նահանգներու հրապարակներուն վրայ, իբր հնագիտական առարկաներ, ծախուելու համար պետական-ազգային մատենադարաններու եւ անհատ հաւաքողներու: Մեր նախնեաց մաքի եւ ձեռքի վաստակները, ցեղին վերապրողներուն պէս, վայրափառին կը թափառէին դրեթէ ամէն տեղ»³: Եւս մէկը. «Մեր են Անկիւրիոյ եւ Արմաշի ձեռագիրները... չունինք Կեսարիոյ եւ այլ վանքերի կամ մասնաւոր հաւաքածոների ձեռագիրների թիւը, ինչպէս օրինակ Տրդատ եպիսկոպոսի Ռատքածում էր, որից միայն մի կարեւոր ձեռագիր տեսանք Նիւ Եորքում՝ Մորգանի մատենադարանում: Մեր են Ագուլիսի Ս. Թովմա առաքելի վանքի ձեռագիրները, որոնք կողոպտուեցան Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, որոնցից մի քանի հատորներ միայն տեսանք Ամերիկայում: Երանի՜ թէ նրանք բոլորն էլ Ամերիկա հասած լինէին, եւ պետական հաստատութիւններին անցած, դոնէ չէին կորչել գիտութեան համար»⁴:

Փարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանի այս աւաղական թուարկմանը ուշք ենք դարձրել միայն վերջերս, մինչ այդ, տասնամեակներ առաջ արդէն հրատարակել ենք այդպիսի՝ 1903 թ. Ս. Պետրբուրգում հրդեհի ճարակ դարձած եւ անդարձ կորսուած ձեռագրական մի հաւաքածուի ցուցակը⁵, որտեղ (էջ 8) խոստացել եւ քայլ առ քայլ «հրատարակութեան ենք պատրաստում» նաեւ նոյն Մեսրոպ Մաքիստրոսի գործի մէջ առկայ «մասնաւոր անձանց եւ եկեղեցիների սեփականութիւն եղած» ու չպահպանուած ձեռագրերի ցուցակը:

Իսկ այժմ լիովին պատրաստ է եւ 2003 թ. առաջին ամիսներին լոյս է տեսնելու մեր պատրաստած նոյնպիսի մի այլ գործ՝ «Յուդակ Հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի չըջակայս նոցին, նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան», որ պարունակում է մամուլի մէջ ցրուած կամ անտիպ մնացած՝ Կեսարիայի, Զմիւռնիայի եւ նրանց չըջակայ հայաբնակ Գրըչեհիր, Էվէրէկ, Թալաս, Թաւուսուն, Պալակասի, Նիրզէ, Տարսիսի, Մուն-

³ Մայր ցուցակ Քայրէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր Ռատքումներու, Առաջին հատոր, Կազմեց՝ Արտաւազգ արքեպս. Սիւրմէեան՝ Կաթողիկոսական լիազօր պատուիրակ Եւրոպայի Ռայոց թեմից, Փարիզ, 1950, էջ Ա:

⁴ Փարեգին Ա. Կաթողիկոս [Յովսէփեան], Երեսնամեակաւ ձեռագրաց, հատոր Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), 48 մասնախմբութիւններով, ՌՆ - 1951, Տպարար Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Ամթիլիաս, էջ ԺԶ:

⁵ Տե՛ս Յուդակ Քայրէն ձեռագրաց Մկրտիչ Սամասարեանի, Կազմեց՝ Մեսրոպ Մաքիստրոս Տէր-Մովսիսեան (Պետրբուրգ, 1901 թ.), [Հեղինակի «Ընդհանուր ցուցակից հանեց], Նմբագրեց եւ ցանկերը պատրաստեց Թ. [=Ք.] Հ. [Տէր-]Վարդանեան, Վեմետիկ - Ս. Ղազար, 1981 (135 էջ, մկարագրուած է 121 ձեռագիր):

թիւ ցանկերից մէկի՝ «Յանկ է. «Խառն ժողովածու (1922-1925 թթ.)»ի «Թաւրիզի Առաջ-նորդարան» մասում¹¹ թուարկուած՝ 13. Գ. 1922 թ. Թաւրիզից էջմիածին ուղարկուած եւ 6206-7155 համարների միջեւ քայխուած 83 ձեռագրերի տուեալները համեմատելով Սմբատ Տէր-Աւետիսեանի դեռեւս 1904 թ. կազմած համառօտ ցուցակի¹² Հետ, պարզել ենք որ Տէր-Աւետիսեանի նկարագրած 124 ձեռագրերի զգալի մասը, բարեբախտաբար, այս 83ի մէջ էր, ուստի եւ այժմ Մաշտոցեան Մատենադարանում է. սակայն մի այլ՝ ո՛չ սակաւ քանակ էլ կորսուած է: Խնդրի քննութիւնն ընթացքի մէջ է, աշխատանքի աւարտից անմիջապէս յետոյ Հրապարակելու ենք թէ՛ նկարագրութիւնների եւ ձեռագրերի նոյնացումների արդիւնքը եւ թէ՛ չպահպանուած ձեռագրերի՝ Տէր-Աւետիսեանի նկարագրութիւնները:

Շատ աւելի բարդ ճակատագիր է վիճակուել Վասպուրական նահանգի թէ՛ ձեռագրական հաւաքածուներին եւ թէ՛ նրանց ցուցակագրութիւններին. Ժ. Գ. վերջի եւ Ի. Գ. սկզբի տարբեր տարիների այստեղ ձեռագրեր նկարագրել կամ նրանց յիշատակարաններն ընդօրինակել են Գարեգին եպս. Սրուանձտեանցը¹³, Ղեւոնդ վ. Փիրղալէմեանը¹⁴, Յովհաննէս (Օննիկ) Բարազամեանը¹⁵ եւ, ժամանակագրորէն վերջինը՝ Նրուանդ Հալայեանը¹⁶: Կրկին Օ. Եզանեանի ուսումնասիրութեամբ¹⁷ պարզուել է, որ 1915-1916 թթ. կազմակերպուած եղանակով, Հետագայում էլ պատահական ձեռքբերումների ձեռով Վասպուրականից Մաշտոցեան Մատենադարան է եկել 1473 ձեռագիր: Ե. Հալայեանի ցուցակի տպուած միակ պրակում կայ 480 ձեռագրի նկարագրութիւն. նրանցից Մաշտոցեան Մատենադարան է եկել 281ը¹⁸, իսկ մնացեալ 199ի «մեծագոյն մասը անդարձ կորել է»¹⁹: Ծա-

¹¹ Նոյն տեղում, էջ 123:

¹² Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակ Նմր 135՝ Սմբատ Տէր-Աւետիսեան. Ձեռագիրը Նախավկայի վանոց Դարաշաւքի Ս. Ստեփաննոսի, որ ի Գողթն, 1904 (209 թերթ, 36X22,3):

¹³ Գարեգին վ. Սրուանձտեանց, Թորոս աղջար, Հայաստանի ճամբորդ, Մասն Առաջին, Կ. Պոլիս, 1879. [Մասն երկրորդ], Կ. Պոլիս, 1884 (2 հատորի մէջ ունի Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերի ձեռագրերի 350 յիշատակարան):

¹⁴ Նօտարը Բայոց. Հայաքեալ եւ ի յոյս ամեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տօպեցուոյ՝ Վարագայ վանոց վանականի, Կ. Պոլիս, տպ. Նշան Պէրպէրեան, [1883], (ունի 1393-1467 թթ. յիշատակարաններ. այսուհետեւ՝ Նօտարը), Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեան, Յիշատակարանը կամ ճշխարք պատմութեան Բայոց, Բոս. Ա.- Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 6273, Բոս. Ա.- Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 4515:

¹⁵ Յովհաննէս Բարազամեան, Յուցակ Բայերէն ձեռագրաց Վասպուրականի (1906-1907 թթ.)- Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 6333 (121 թերթ, շատ համառօտ նկարագրել է եւ քաղել յիշատակարանները 475 ձեռագրի. Կտուց անպատի՝ 110, Լիմ անպատի՝ 170, Վարագայ վանքի՝ 195):

¹⁶ Յուցակ Բայերէն ձեռագրաց Վասպուրականի, Կազմեց Նրուանդ Հալայեան, Հրատարակութիւն Հայոց ազգագրական ընկերութեան, Պրակ Ա, Թիֆլիս. 1915. 6 էջ + 1048 սիւն (նկարագրել է 480 ձեռագիր. այսուհետեւ՝ Հալայեան, 1915):

¹⁷ Մանրատման տե՛ս Օ. Եզանեան, էջ 93-105:

¹⁸ Նոյն տեղում, էջ 101՝ թուարկում է կորսուած ձեռագրերի ցուցակային համարները, իսկ էջ 102՝ յայտնում է, որ 199ից Հմր 4՝ Լիմի Հմր 76 եւ Հմր 82՝ Լիմի 32 այժմ «Զիրութեան հաւաքածուի մէջ են, իսկ Հմր 33՝ Կտուցի Հմր 230՝ Ս. Պետրբուրգի Արեւելագիտութեան Քիմնարկի Հայերէն Բ 876 է: Միսիթարեան միաբանութեան առաջարկով խմբագրում, լրացնում եւ հրատարակութեան ենք

Լալայեանի տպուած պրակի շատ կարճ առաջաբանում ասուած է. «Ամբողջ աշխատութիւնը ներփակելու է առնուազը 2000 ձեռագիրների նկարագրութիւն»²³, սակայն զանազան վաւերագրեր²⁴ ուսումնասիրելով եկել ենք այն համոզման, որ նա նկարագրել է միայն 1525 միաւոր, իսկ այս 2000ն ասելով երեւի նկատի ունէր աշխատանքի արուելիք շարունակութիւնը, այսինքն՝ մտադիր էր վերագրելու Վասպուրական եւ նկարագրութիւնների քանակը հասցնել 2000ի, այլապէս՝ 2000 թիւը պէտք է համարենք 1525ի դէպի վեր արուած շատ մեծ կտրացում:

Արուած նկարագրութիւնների քանակը ճշգրտելուց եւ նրանց քաղման տեղերը պարզելուց յետոյ սկսել ենք որպէս «Ցուցակ Հայերէն ձեռագրաց Վասպուրականի» Բ. պրակ Հրատարակութեան պատրաստել կորսուած ձեռագրերի նկարագրութիւնները²⁵: Հմր 481-728 նկարագրութիւններն առնելով Լալայեանի պահպանուած ինքնագրից, իսկ Հմր 729-1525 ձեռագրերինը Մ. Տէր-Մովսիսեանի օրինակումներից, նկարագրութիւնները նախ համեմատում ենք տարբեր տարիների եւ տարբեր տեղերից Մատենադարան եկած վասպուրականեան ձեռագրերի հետ: Նկարագրութեան եւ ձեռագրի կատարեալ նոյնականութիւնը հաստատելուց յետոյ նշանակում ենք վերջինի ներկայ համարը, այսպիսիք հետագայում դարձնելու ենք Հին եւ նոր Համարների ծանօթագրուած զուգադիր աղիւսակներ: Երբեմն նոյնականութիւնն աներկբայ է լինում, սակայն լինում են արտաքին նկարագրական տարբերի՝ թերթաքանակի, չափսերի, կազմի տեսքի եւ այլ տարբերութիւններ, որոնք նոյնպէս արձանագրուած ենք՝ աղիւսակի վերածելու համար: Երբեմն էլ Լալայեանը տեսել եւ ընդօրինակել է յիշատակարաններ, որոնք մեզ հասած ձեռագրերի Հիմնականում վերջին թերթների ընկած լինելու պատճառով այժմ կորսուած են. բնականաբար, սրանք պէտք է Հրատարակենք՝ անհրաժեշտ պարզաբանումներով եւ Հին ու նոր Համարների նշանակումներով: Վերջում պէտք է ամբողջը համեմատենք Սրուտնձտեանցի, Փիրղալէմեանի եւ Բարադամեանի օրինակումների եւ քաղումների հետ եւ տպուելիք հատորի մէջ արտայայտենք վերջիններիս ունեցած աւելի միաւորները եւ տարբերութիւնները:

Այս աշխատանքը եւս ընթացքի մէջ է, տարատեսակ ստուգումները եւ համեմատութիւնները շարունակում ենք, սակայն այսօր արդէն կարող ենք ասել, որ Լալայեանի Վասպուրականի ձեռագրացուցակի 481-1525 համարների շարքից չպահպանուած կամ առայժմ գիտութեանն անյայտ ձեռագրերի քանակն անցնում է 450ը: Կրկին բնականաբար, վերը թուարկուած հաւաքածուների ցուցակների նման, սրանց նկարագրութիւնները եւս Հրատարակութեան ենք պատրաստում Հնաբաւոր չափով յարմարեցնելով տաշեանա-

²³ Լալայեան, 1915, էջ 5:

²⁴ Տե՛ս Մաշտոցաց Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ Հմր 8.- (Յանկ Բայերէն ձեռագրաց Վասպուրականի [Լալայեան ցուցակի անտիպ մասի], 47 գրուած թերթ՝ 21x14,5 սմ, գծումքերով տպարանային տեսք, 23 տող, ցանկը 92 գրուած էջ՝ 1p-47ա, ամէն մկարագրութիւնը թոյնով է քացուածքի երկու երեսի Բանդիպակաց տողերը՝ երկու էջի մէկակողմ տող: Հմմտ. Մեսրոպ արքեպս. Տէր-Մովսիսեան, Ընդհանուր ցուցակ Բայերէն ձեռագրաց.- Երեւանի Մաշտոցեան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ Հմր 133, 8/1, թթ. 115-122՝ «Եր. Լալայեան, Ցուցակ Վասպուրականի Բայոց ձեռագրերի (որից 1-480 համարները տպուած են 1915 թ., Թիֆլիզ)», որ անտիպ մնացած մկարագրութիւնների համառոտ ցանկն է՝ Համար ցուցակի եւ Բիճ Բաւաքածուի, ժամանակ գրչութեան կարգով (Ա. տ., էջ 111-4՝ տպուած հատորի ձեռագրերի ցանկն է):

²⁵ Առ այս համառոտ ծանուցումը տե՛ս վերը մշուած մեր գրքում՝ էջ 83:

Բնականաբար, ունեցանք մեծ կորուստ վերագտնողի հուզումն ու հաճոյքը, ապա, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մատենադարանի ընդարձակ՝ Մայր ցուցակի մէջ այս ձեռագրի կատարեալ նկարագրութեան հրապարակման ժամանակն անյայտ է²⁹, իսկ Աստուածաշնչի դրքերի բնագրերի նկատմամբ այսօր իսկ կայ բնական մեծ հետաքրքրութիւն³⁰, որոշեցինք օր առաջ հրապարակել եւ հայ աստուածաշնչագիտութեանը ներկայացնել վերագտնուած այս կորստի ընդարձակ նկարագրութիւնը: Զեռագիրն էջերի կամ թերթերի համարներ չունէր, թերթակայեցինք եւ դրանցեցինք Հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուի կարգային 11103 համարի ներքոյ:

Մեր նկարագրութիւնից (ձեռագրի երկաթագիր սկզբնատողերը նշանակում ենք գլխատառերով) յետոյ բերում ենք Հալայեանի նկարագրութեան արտաքին յատկանիշները ներկայացնող մասը (յիշատակարանները չենք կրկնում), ապա պարզաբանում ենք վերջինիս խնդրական կէտերը:

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌՆԱԳԻՐ

11103

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ (ՄԱՍՆ)

ՁԼԱ = 1282

ԳՐԻԶ ԵՒ ԾԱՂԿՈՂ՝ *Խաչիկ (Խաչատուր)*: ՍՍԱՑՈՂ՝ *Կարապետ քհյ (1301 թ.)*: ՆՈՐՈԳՈՂ-ԼՐԱՑՆՈՂ՝ *Մովսէս Սպարկեբոսցի (թ. 2բ-20բ, 183, 189-99)*: ՎԵՐԱԿԱԶՄՈՂ՝ *Սարգիս Եղեռացի (1634 թ., ի Լիմ անապատ)*:

ԹԵՐԹ՝ 199. չգրուած՝ 1ա-2ա: ՊՐԱԿ՝ 1-4 + 2-8 + 2-2-8 (2՝ 6, 2, 2, 2՝ 10). Ա-ԸՄՑ (Ը՝ 9): ՆԻԻԹ՝ Թուղթ. արեւելեան (լաթի). երկու տեսակ՝ Հինը եւ լրացմանը (համեմատաբար բարակ): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25x17,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (19-20,5-12), երկսին՝ 1բ-20բ (18,5-11,5. սեկմ՝ 1 սմ, մէկը՝ 18,5-5), միասին՝ թ. 191-9 (19x13): ԳԻՐ՝ բոլորգիր (բուն գրչինը), նոսրգիր (լրացմանը): ՏՈՂ՝ 19-20 (թ. 21-190), 28 (2բ-20բ), 23 (թ. 191-9): ԳԾՈՒՄՆԵՐ՝ ճշշումով (արտաքին լս.ներին ասեղի տողանիշ անցքեր): ԿԱԶՄ՝ տախտա-

²⁹ Տպուած միակ Ռատորը (Երեւան, 1984՝ տե՛ս ծ. 26, 6կարագրութիւն 300 ձեռագրի) պատրաստ էր դեռեւս 1974ին, այժմ կայ շուրջ 2700ի 6կարագրութիւն եւս:

³⁰ Օրիճակ, մեր քարեկամ Յովսէփ Ալեքսանեանը (ԱՄՆ) կազմում է Գործք առաքելոցի Ռամեմատական (diplomatic) բնագիրը: Զեռագիրն հին է եւ, քնակաճաբար, ունի ուշագրաւ ըմբոցցումներ. ճաշակ տալու համար բերում ենք Գործք ժ. 1-6 տմերի պատկերը (ուղղանկիւն փակագծերի մէջ մեր ձեռագրի ձեւերն են, ուղղագրական երկրորդական ձեւերը չենք ճշել, >՝ ճշանակում է բառի չգոյութիւն). 21բ-1 Այդ մի էր ի Կեսարիայ՝ ամուց Կոռնէլիոս [Կոռնելիոս]. Բարիւրապետ, ի գնդէ [գնդին] որ կոչէր իտալիացի [իտալացի]. 2 բարեպաշտաւ եւ երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ [տամբ] իւրով. առնէր ողորմութիւնս [ողորմութիւն] քաղումս ի ժողովդդեանց, եւ յաղաթս կայր առ Աստուած յամենայն ժամ: 3 [եւ] Ետեւ ի տեսլեան [տեսլեանց] յայտնապէս զհնճեորորդ ժամու աւուրք, զհրեշտակ Աստուծոյ զի մտաւէր առ ճա՝ եւ ասէր ցնա [> ցնա]. Կոռնէլիէ [Կոռնելիէ]: 4 Եւ ճա Բայեցեալ ընդ ճա՝ զարճութեաւ. եւ ասէ. Զի՞ է Տէր: Եւ [+ ճա] ասէ ցնա. Աղաթք քո՝ եւ ողորմութիւնք [ողորմութիւն] քո [> քո] եղին յիշատակաւ առաջի Աստուծոյ: 5 Եւ արդ յղեա արս ի [> ի] Յոպպէ՝ եւ կոչեա զՍիմոն գոմէ՝ որ կոչի Պետրոս, 6 ճա մտեալ է առ [է առ սրբազրուած ի տուն] Սիմոնի ումեմց յաղախորդի, որոյ է տունց մերծ [+ է] ի ծով:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 2ք-5ա ա. Յառաջաբան գրող Գործող առաքելոց - Որք միանգամ ճշմարիտ եւ կարեւոր աստուածամերձ... Համբերէին բազում եւ մեծամեծ վշտաց: ք. 5ք Գիր Գլխոց Գործող Առաքելոցն - ի Հարցն եւ ի վարդապետաց... մաւտ առ նոսին զներքնարաժիսն նշանակեացուք: Տունք ԺԳ.: գ. 5ք-8ա վասն [= Գլուխք] Գործող Առաքելոց - Ա. Վասն առ ի յարութենէ վարդապետութեանն Քրիստոսի եւ երեւելոյ աշակերտացն... Խ. Վասն վիճելոյ Պողոսի ընդ Հրեայան, որ էին ի Հռոմ. Տունք ՃՀԲ.: գ. 8ա ի գիրս Գործող առաքելոց ըմբռնութեամբ ԺԶ. - Ա. քնթերցուածն տունս ԽԱ. ... ԺԶ. Ընթերցուածն տունս ՃԴ., Գլուխք Խ., Վկայութիւնք Լ., Տունք ՄԾԺԶ.: Ե. 8ա-85ա Գործող առաքելոց - Ջրանն առաջին զոր արարի վասն ամենայնի, ո՛ր Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել... Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի, անխափան՝ ամենայն Համարձակութեամբ: Գործք Առաքելոցն:

Ծնթ. Սկզբից մինչեւ 20ք՝ Գործք Թ. 38 «աղայել՝ զի մի՛ դանգադեացի գալ առ նոսա», լրացնողի ձեռքով է, լրացման վերջը՝ «-եսցի գալ առ նոսայ» բուն գրչի ձեռքով կայ նաեւ՝ 21ա:

2. 85ա-6ք ա. Յառաջաբանութիւն է. թղթոցն կաթողիկէից. Գիր գլխոց իւրաքանչիւր թղթոցն կաթողիկէից [= Գլուխք Թղթոցն Յակոբայ] - Թուխտ Յակովբու. Ընթերցուած Ա. Յակովբոս Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի. Ա. Վասն Համբերութեան... [Զ. գ.] Խրատք առանձին եւ իւրաքանչիւր որոյն որոյն պատշաճ հաւատովք: Եղբա՛րք իմ, եթէ ոք եթէ սպասաւոր՝ պարտ է լինել ընդերին փրկութեան: Տունք ԻԵ.: Յակովբա Թուխտ գրեցաւ յերուսաղէմէ առ Հերբեցիսն ի սփիւռս: Ի Յակովբու Թղթիս Ընթերցուածք Բ., Ընթերցուածն Ա.՝ Տունս Ճ., Ընթերցուածն Բ.՝ Տունս ՃԻԵ.: Գլուխք Զ., Վկայութիւնք Դ., Տունք ՄԼԷ.: ք. 86ք-97ա Թուղթ Յակոբու է ի փառս Աստուծոյ // (87ա) - ԵԱԿՈՎԱԲՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ԵՒՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ. ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱԶԳԱՑ... զի որ դարձուցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեացէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեացէ զբազմութիւն մեղաց (այլ ձեռքով՝ «իւրոց»): Կատարեցաւ Թուղթ Յակոբայ առաքել // (97ա)ելոյ: Տունք ՄԼԷ.:

Ծնթ. Թղթի առաջին՝ 87ա ամբողջ էջը մէջընդմէջ՝ կարմիր եւ սեւ տողերով երկաթագիր է, ներառեալ՝ «...փորձութեանց» (Ա. 2):

3. 97ա ա. Գլուխք Առաքիմ Թղթոցն Պետրոսի. Տունք ԻԵ.: Եառաջին Թղթին Պետրոսի Ընթերցուածք Բ., Ընթերցուած Ա.՝ Տունս ԶԵ., Ընթերցուածն Բ.՝ Տունս ՃԽԷ.: Գլուխք ութ, Վկայութիւնք ԺԴ., Տունս ՄԺԶ.: ք. 97ա-107ք Թուղթ Պետրոսի [առաքիմ] - ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԵՒՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ընդերկոցն նժգեհից, որ ի սփիւռս Պոնդացւոց եւ Գաղատացւոց եւ Կապադոկացւոց... Ողջոյն տալիք միմեանց ի Համբոյր սրբութեան: Խաղաղութիւն ընդ ձեզ ամենեւեան, որ էք ի Քրիստոս Յիսուս. ամէն:

4. 108ա ա. Ի Պետրոսի յերկրորդ թղթիս Ընթերցուած Ա., գլուխ Դ., Վկայութիւնք Գ., տունք ՃԾԴ.: ք. 108ա-15ք Թուխտ Պետրոսի [երկրորդ] - ՇՄԱԻՈՆ ՊԵՏՐՈՍ ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց Հանգիտապատիւ մեզ Հասէջդ, հաւատոց յարդարութիւն Աստուծոյ... Աճեցէ՛ք շնորհաւք եւ գիտութեամբն Տեառն մերո եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. նմա փառք՝ եւ այժմ եւ յաւիտեանս. ամէն:

5. 115բ ա. Յառաջնում թղթից Յոհաննու Ընթերցուածք Բ., Ընթերցուած Ա.՝ Տուենս ձօն., Ընթերցուած Բ.՝ Տուենս ձևթ., Գլուխ ութ, Վկաութիւն Ա., Տուենս ՄԾԴ.: բ. 115բ-25բ Թուղթ Յոհաննոս առաջին - ՈՐ էՐԷ Ի ՍԿԶՐԱՆԷ, գործէ լուաքն... Որդեակք, պահեցէ՛ք զանձինս ի կռապաշտութենէ:

6. 125բ ա. Ընթերցուած Ա., Գլուխք Ա., Տուենս Լ.: բ. 125բ-7ա Թուղթ Բ. Յոհաննոս - ՅԵՐԻԾՈՒԷ ԱՌ ԸՆՏՐԵԱՅ ՎԻԼԻԵԱՅ... Ողջո՛յն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ: Շնորհք ընդ ձեզ:

Ծնթ. 125բ ստ. լսում, այլ ձեռքով, ԺԸ. դ-ի նոտրգիր՝ «Բովանդակն ՄԳ. Յոհաննոս յառաջին թուխտն ԽԵ. սէր ունի պատուական, Բ. Հրաժարական՝ Թէ ՄԻ՝ սիրէք զայնաբա, Զ. գրգալական, որ ասէ՝ Միրելիք»:

7. ա. 127ա Ընթերցուած Ա., Գլուխ Ա., Տուենս ԼԶ.: բ. 127ա-8բ Թուղթ Յովհաննոս Երրորդ - ՅԵՐԻԾՈՒԷ ԱՌ ԳԱՅԻՈՍ սիրելի... սիրելեաց մերոց իւրաքանչիւր յանուանէ:

8. 128բ ա. Յուդայի թղթիս Ընթերցուած Ա., Գլուխ Դ., Վկաութիւն Բ., Տուենս ԿԱ.: բ. 128բ-31բ Թուղթ Յուդայի եղբայր Յակոբոս - ՅՈՒԴԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՌԻԱՅ եւ եղբայր Յակովբայ... յառաջ քան զամենայն յաւիտեանս, եւ այժմ եւ ամենայն յաւիտեանս. ամէն: Միահամուռ թղթոց Կաթողիկէից տունք ՌՅՂԴ.:

9. 131բ-3բ Աղերս Եւրպաղեայ - ԱՄԵՆԱՅԷ ԻՐԻՔ ամենայն ուրեք ժամանակ է... զԱստուծոյ եւեթ մարդասիրութիւնն: Տուենս ԻԷ. Միահամուռս ամենայն Կաթողիկէիցն թղթոցն Ընթերցուածք Ժ., Վկաութիւն ԻԴ., Գլուխք ԼԱ., Տուենս ՌԺԴ., միանկամայն տունք ՌՅՂԴ.:

Ծնթ. Կաթողիկեայ թղթերի Առաջաբանը չկայ, միայն խորագիրն է (85ա), լրիւ ունի միայն Յակոբոս թղթի «Գլուխք»ը (85ա-6բ), տնատուններին վերաբերող մնացեալ տեղեկութիւնները, որ ըստ երեւոյթին նախասկեւագիական են, ամբողջութեամբ վերարտադրել ենք: Գործքի եւ թղթերի տնահամարները լուսանցքներում նշանակուած են կարմիր երկաթագործով, կրկին՝ կարմիր չըջանալիների եւ սակաւաթիւ լուսանցազարդերի մէջ կամ վերն ու վարը պատիւի նշանով, աւելի յաճախ՝ առանց որեւէ լրացուցիչ նշանի (վերջինս ձեւով է նաեւ յաջորդ՝ Յովհաննոս Աւետարանի մասը):

10. 135ա-98ա Աւետարան ըստ Յոհաննոս. Աւգենայ Յիսուս. - Ի ՍԿԶՐԱՆԷ էՐ ԱՆԷՆ... եւ ո՛չ աշխարհս բաւական էր տանել զգիրսն, որ եթէ գրեալ էին: 198աբ [Իրք կնոջն շնացելոյ] - Գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր... յայսմ հետէ մի՛ մեղանչեր:

Ծնթ. ա. Առաջին՝ 135ա ամբողջ էր մէջընդմէջ՝ կարմիր եւ սեւ տողերով երկաթագիր է, ներառեալ՝ «...նովա կեանք» (Ա. 4): Լրացնողի ձեռքով են գրուած թ. 183 ժԴ. 21 - ԺԵ. 2 («սիրէ զիս... որ բերէ պտուղ՝ սրբէ զնա») եւ թ. 189-99 ժԷ. 10ից («եւ որ ինչ իմ է, ամենայն քո է...») մինչեւ վերջ: «Իրք»ը «Իրք կնոջն» լս.ային խորագրով եւ բուն գրչի ձեռքով կայ նաեւ շարադրանքի մէջ՝ 160բ-1բ:

Ծնթ. բ. Զեռագրի Հին՝ բուն մասը ծայրէծայր սրբագրուած է գրչի ձեռքով բացթողումները լրացուած են լուսանցներում կամ տողամէջներին, աւելորդ տառերն ու բառերը՝ ջնջած: Հազուադէպ կան նաեւ նոտրգրով այլ ձեռքով արուած սրբագրութիւններ, որոնք մեծ մասամբ չեղուած են Աստուածաշնչի ընկալեալ բնագրից: Լուսանցներում կան գրչի (երբեմն՝ նաեւ այլ) ձեռքով արուած տոնացուցային նշումներ. 70բ՝ Գործք, ԻԴ. 1 «Մազկազարդ է, է. կիր[ակէ]», 90բ՝ Յակ. Բ. 14 «Շք. Յովաննոս դիր որ չմոռանաս», 99բ՝ Ա.

Պետր. Բ. 1 «Կիր[ակէ] Աշխարհամատր[ան]», 115բ՝ Ա. Յովհ. 1 «Երեսման խաչին աստ Հանդիպի», 125բ՝ Բ. Յովհ. Ա. 1 «Մաղկազարդ է, աւ. աւ. Դկ.», 132ա՝ Աղեքսի սկզբում «Հոգոյ դալըսանան եւ ի կատարել աւուրցն», 182բ՝ Յովհ. Ժ. 15 «Պենդէկոստ» եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ա. 66ա (ստ. լս.ին) Տէ՛ր իմ եւ յոյս, մեղա, անաւրիեցայ, ողորմեա՛յ անպիտան մեղուցելոյս, եւ քեզ փառք յաւիա[նանս]. ամէն:

բ. 68բ-9ա (ստ. լս.ին) Մեղա Աստուծոյ, կործանեաց զիս չարագործն թշնամին եւ կամի զիս որսալ, մեղա Աստուծոյ. // Քրիստոս, ողորմի՛ քո գրողին:

գ. 85ա Դա՛սք լուսերամից, վասն սիրոյն Քրիստոսի զմեղուցեալ գրիչս՝ զանարժան անպիտանս յիշեսջիք, եւ Աստուած յիշէ զյիշողք. ամէն:

դ. 87բ (ստ. լս.ին) Տէ՛ր, յոյս իմ, աւգնեա՛յ ինձ:

ե. 115բ Ողորմեա՛յ Քրիստոս Աստուած գրողի սորայ. ամէն:

զ. 131բ Ձնաչաւոր գրիչ յիշեսջիք, եւ Աստուած յիշողացք ողորմ[ի]. ամէն:

է. 133բ (գրչի) ՓԱՌՔ ՄԻԱՌՈՒՆ եւ անբաժանելի սուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն, որ արժանի արար դանպիտանս Հասանել ի վերջ գծիս: Յերես անգեալ աղաչեմ զգասս լուսերամից՝ յիշել զայնոսիկ, որ աւգնեցին մեզ ի գինս քարտիսին: Գրեցաւ ի թու՝ ՁԼԱ (1282), ձեռամբ անարժանիս եւ մեղապարտիս խաչկա: Եւ որք յիշեն՝ եւ նոցա ողորմեսցի Քրիստոս՝ յայն սոսկալի եւ սարսափելի ահեղ աւուրն աներեկի. ամէն: // (134ա) Վասն որոյ եւ:

Մնթ. Թիչ.ս չկայ ի՞ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ժ. Գ. դ., Կազմեց Ա. Ա. Մաթեոսեան, Երեւան, 1984, էջ 528-30 (1282 թ. մասն է, ուր կայ միայն երեք ձեռագրի յիշատակարան):

բ. 169ա (ստ. լս.ուսմ) Ձնաչիկ գրիչ յիշեա՛յ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

թ. 134ա (1301 թ., ստացողի, գրուած որպէս շարունակութիւն գրչի Գլխաւոր յիշի, անվարժ բոլորգիր) ԵՄ ԿԱՐԱՊԵՏ ՔԱԼԱՆԱ ԱՏացայ զգիրքս Գործոց առաքելոց՝ յիշատակ ինձ եւ Արարիս միակեցին եւ ծնողաց մերոց. եւ զՅունանէս աւետարանիչն մեզ բարեխաւս եւ աւգնական յաւուրն աներեկի. որք կարգայք եւ աւգտիք ի սմանէ՞ յիշեսջիք զմեզ ի մաքրափայլ յաղաւթս ձեր. եւ ինքն յոյսն մեր եւ ապաւէն Քրիստոս Աստուած, որ առատն է ի պարգեւս, աացէ իւրաքանչիւր զվարձս. եւ որք զմեզ յիշելոյ արժանի առնեն, յիշեալ լիցին ի տիեզերական ահեղ առնին եւ լսել զերանաւէտ ձայնն՝ եթէ. Եկա՛յք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք՝ պատրաստեալ իմ ձեզ զարքայութիւնն. ամէն: ԹԱՄԻ ՁՄ (1301): // (134բ. այլ անվարժ բոլորգիր) Աղաչեմք պաղատանաւք սրտիւք, Հոգով զորդիսդ լուսոյ, որք զԱւետարանս զայս երգէք կամ աւրինակէք, յիշեսջիք զԿարապետ աղքատ ոգի քահանայի եւ զծնողսն իմ Շախապետ եւ զԿառմագ՝ զփոխեալսն ի Քրիստոս: Արգ, յերես անգեալ աղաչեմ զամենիսեան՝ զԱստուած ողորմին սրտի մտաւք ասացէ՛ք, քանզի յոյժ փափաքանաւք ըստացայ զսայ ի Հայալ արգեանց իմոց՝ ի վայելումն

Մեթ. ա. Ասողանշակիր «պետն» վանկը, «եւ մեզ» դարձուածը նոյն ձեռքով լրացուած լսում եւ տողամիջին: Յիշ-ս «ՊՊԹ, Հմր 482» նշումով, իմա՝ Ե. Լալայեանի ցուցակի անտիպ մասից առնելով, տպուած է՝ ԺԷ. դ-ի յիշ-ք, Բ., էջ 558, Հմր 831, ուր կայ ծանոթութիւն՝ «Համառոտուած տե՛ս նաեւ Հմր 6333, էջ 46ր, յիշտ. Հմր 207», սակայն նշուած Հմր 207ը նոյն 1634 թ. է, այս յիշ-ի տեղեկութիւններով եւ շարահիւսական կադապարներով իսկ սրան շատ նման՝ նորոգման յիշ-ն մի Նարեկի, որ է՝ «26x16 եւ 6, Համակ բոր-բոս[ն]ած, թէեւ կարմրադեղով ծաղկած, մէջ մի էջը 22 տող, բուն յիշատակարանն ինկած եւ վերակազմութեանն է...»: Յիշ-ը գրուած է մեր ձեռագրի կազմող Սարգիս Եդեսացու ձեռքով եւ նրա անունից: Նշանակում է՝ 1634 թ. շուրջ Լիմ անապատում արւում էին հին՝ վնասուած ձեռագրերի նորոգման գուցէ եւ ծրագրուած աշխատանքներ:

Ժք. 199ր (ԺԷ. դ., նոտր, ծանկագիր) Սաի ագա յպղա անըսդ պղախլտ իաչա:

Ժգ. 134ա (1906 թ., մանուշակագոյն թանաքով, շղագիր) Յիշատակարաններս ընդգրի-նակեցի. Օ. Բարազամ[եան], 1906, Յուլիս 13:

ԳՐԶԱՓՈՐԶ 199ր, ԺԸ. դ-ի՝ «Տաղ ասացեալ առ սուրբ կոյսն», ապա՝ ընջած տաղի ձայնագրուած սկի՞զը երկու տող: 116բ-7ա՝ լուսանցներում մատրտով նշումներ, խզրզոց:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

«482

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ, ԹՈՒՂԹՔ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ, ԱԻԵՏԱՐԱՆ ԹՈՎՀԱՆՆՈՒ
Հին՝ Լիմ 91:

ԼԻՄ

ԶԼԱ

եւ ԶԾ = 1282 եւ 1301

ԳՐԻԶ՝ Խաչիկ, Մոփսէս Սպարկերտցի: ԾԱՂԿՈՂ՝ անյայտ: ԿԱԶՄՈՂ՝ Սարգիս Եգեսացի: ՍՏԱՅՈՂ՝ Կարապետ քչյ:

ԹԵՐԹ՝ 42 + 160 + 54 + 12 [= 268]: ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25x14: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նախնական բոլորագիր: ՏՈՂ՝ 20: ԿԱԶՄ՝ կաշեպատ:

ՄԱՆՐԱՆԿԱՐ՝ չուների: Խորան՝ չուների: Կիսախորան՝ 1 [Հատ]: Լուսանցազարդ՝ չուների: Սկզբնատառք՝ պարզ գլխագրեր:

ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկզբից 42 եւ վերջից 12 թերթ թափուած է եւ նորից գրուած նոտրագրով. Եովհաննու Աւետարանը առանձին է՝ միայն Գործք առաքելոցի Հետ կազմած, սրա յիշատակարանը թափուած է»:

ՊԱՐԶԱՐԱՆՈՒՄ ԽՆԴՐԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ.

ԹՈՒԱԿԱՆ իբրեւ գրչութեան երկրորդ թուական նշանակել է ստացման 1301ը՝ «ԶԼԱ եւ ԶԾ = 1282 եւ 1301», որ սխալ է:

ՏԵՂԻ 1634 թ. յիշատակարանի Համաձայն գրչութեան վայր է Համարել «Լիմ»-ը, որ լրացման վայրն է:

ԳՐԻԶ է Համարել նաեւ լրացնողին. մեր բնորոշումն աւելի ճշգրիտ է:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍԹԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԵՐԱՆԿԱՎԱՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Եռազգա վանքը Գեղարքունիքի գրչության իրեն կենտրոնացնող է: Վանական համալիրի ավերակները գտնվում են Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանի Ջորագյուղի արևմտյան մասում, բլրի վրա: Հնում վանքը և գյուղը նույնանուն են եղել: Եռազգա բնակավայրը հիշատակվում է 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին: Աստղիկ պատմիչի վկայությամբ, այն հիմնվել է Եռազգա վանքի հետ միասին¹: Գյուղի հմույթան վկան է մահմադարյան կողմի լեռնագագաթի վաղ միջնադարյան ամրոցը:

Վանքը գործել է մինչև 17-րդ դարավերջը: Այժմ վանական համալիրից մնացել է ավերակ Պողոս-Պետրոս եկեղեցի²: Այն եռախորան է՝ չորս ավանդատով, որը Սևանի ավազանում մնամատիկ կառույցներից հնագույններից է: Եկեղեցին կառուցվել է Գեղամա հայկազուն իշխան Վասակ Գաբրուտի տիկնոջ՝ Մարիամ Բագրատունու միջոցներով: Գեղարքունիքի տիրուհին այն կառուցել է Սևանավանքի Ս. Աստվածածին և Ս. Առաքելոց եկեղեցիների շինությունից հետո (871 թ.). «Օհնէ Մարիամ զՍևանայ եկեղեցիսն և յետոյ զՊողոսագայիս», - վկայում է Օրբելյան տան պատմիչը:

Ըստ Օրբելյանի, Պողոս-Պետրոս եկեղեցին մեկն էր այն 40 եկեղեցիներից, որ ուխտել էր կառուցել Մարիամ իշխանուհին՝ իր ամուսնու՝ վաղամեծիկ իշխան Վասակ Գաբրուտի հիշատակին: Բացի դրանից, նորակառույց եկեղեցուն իշխանուհին նվիրում է հազարացիներից 60 հազար դրամով գնած Եռազգա գյուղը՝ միաժամանակ ազատելով գյուղացիներին «ամենայն հարկաց»³:

Պողոս-Պետրոս եկեղեցուն Այուցյաց տիրուհու միջոցներով կարգվում է միաբանություն՝ «կրօնատարաց դասս բազմահոյն ջահանայից», թողնելով այս ամենը հաստատող «արձանագրություն մի»: Այժմ այդ վիճագրից լույս թեկորներ են մնացել կիսավեր եկեղեցու վրա⁴: Նույն այս պատճառով վատ է պահպանվել հիմնարկերի արձանագրությունը, չկա տարեթիվը: Ուսումնասիրողները գտնում են, որ տաճարի շինարարությունը պետք է որ եղած լինի 877-886 թվականների ընթացքում, ավելի հնարավոր է, սակայն, 885 թվականը՝ Աշոտ թագավորի ռմման տարին⁵:

¹ Ստ. Աստղիկ, Պատմություն տիեզերական, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 259: Այսուհետև՝ «Պատմություն տիեզերական»:

² Դիվան հայ վիճագրության, պր. 4, կազմ: Ս. Բաբխուդարյան, Երևան, 1973, էջ 241: Այսուհետև՝ Դիվան հայ վիճագրության, պր. 4:

³ Նույն տեղում, էջ 241:

⁴ Ստ. Օրբելյան, Պատմություն մահմադին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 174-175: Այսուհետև՝ Պատմություն մահմադին:

⁵ Ս. Խնայակյան, Հայ ճարտարապետության Այուցիքի դարձը, Երևան, 1960, էջ 43: Ա. Մանուշարյան, Բնությունը Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 117:

ամիս երկու օրում ավարտում է Հովհաննու Ավետարանը. «ի թվականիս Հայոց Ռժի (1671), յապրիլի ժէ (17)»¹⁴:

Ձեռագիր օրինակելը Հայրապետի գործունեության հիմնական քննազավառն էր, ուստի սովորությունն է ունեցել ընդօրինակելիս Մարկոսի և Մատթեոսի Ավետարանների մի քանի օրինակ ընդօրինակել, մանավանդ, երբ իր տրամադրության տակ ունեցել է ընտիր գաղափար օրինակ: Ասեմք, ընդօրինակելիս միանգամից երեքական օրինակ Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններ է ավարտել, մյուս անգամ՝ Ղուկասի և Հովհաննու Ավետարանների երեքական օրինակ:

Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով, ունի գլխացանկ, նախադրություն, համաքարթառ, նաև՝ ցրվացանկ: Նկարազարդ է՝ չորս ավետարանիչների պատկերներով, ունի և լուսանցազարդեր, գլխազարդեր: Ձեռագրի ծաղկողն ինքը գրիչն է. ընդօրինակելիս Հայրապետ երեցը գլխազարդերը և քնագրի ընդօրինակությունը միաժամանակ չի արել, ինչպես սովորաբար արվում էր: Նա գլխազարդերի տեղը քաջ է թողել և էջի կողմնային ու միջին լուսանցքներում մանրատառ շղագրով գրել է գլխազարդի տառը՝ հետագայում զարդագրելու և գլխագրելու համար:

Այս ձևը նպատակահարմար է նաև այն դեպքում, երբ գրիչը ծաղկող չէ և ընդօրինակածը ծաղկողին է տալիս զարդագրելու առանց գաղափար օրինակի: Հայրապետ երեցը միաժամանակ նաև ծաղկող էր ու ինքն էր զարդագրում (դարձյալ առանց գաղափար օրինակից օգտվելու): Ավետարանի ընդօրինակությունն ավարտելուց հետո՝ կազմելիս, կտրվում էին թերթերի կողմնային լուսանցքները, կողմնային եզրերը, որոնց հետ նաև՝ մանրատառերը: Ձեռագրում նկատվում է նաև թերթերի մկրատումներ, որոնց պատճառը կա՛մ միևնույն թերթի կրկին գրած և կա՛մ էլ էջի սխալագիր լինելն է:

Մատյանը Հայրապետ երեցն ավարտել է «ի թվականիս Հայոց Ռժի (1671), ի ապրիլի ժէ (17), ի հայրապետութեան տեառն Յակոբայ և ի թագաւորութեանն կարմրազոյնի ազգից Պարսից, որ անուանի Ղզըլպաշ Ծաֆ Սիլովմանն վերաձայնի: Գրեցաւ ի գաւառիս Գեղամա, ի գեօղն որ կոչի Եղաքա, առ դրան Սուրբ Աթանակիմէ և Սուրբ Օղակաթի, և Սուրբ Ծիրանաւորիս և այլոց սրբոց, որ աստ կան հաւաքեալ»¹⁵: Ավետարանը իլիկավանցի տանուտեր Հովհաննեսը ստացել է ի հիշատակ իր ծնողների՝ հորը՝ Պետրոսի, մորը՝ Մարգարտի, և կենակցի՝ Սիրամարգի, ու նվիրել իլիկավանքի «Սուրբ եկեղեցուն»¹⁶:

Հայրապետ գրիչը մորից երկու տարվա ընթացքում ավարտել է մի Ավետարան, որի ընդօրինակումը սկսել է 1675 թ.: Առաջին երկու Ավետարանները (Մատթեոսի և Մարկոսի)՝ «ի թվին ՌժիԴ (1675), ս[ն]պտեմբերի է (7)»¹⁷, իսկ Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները՝ «ի թվականիս Հայոց հազար ժի և Զ (1677) ամի և մայիսի ԻԸ (28)»¹⁸:

¹⁴ Նույն տեղում, էջ 261բ-262ա:

¹⁵ Նույն տեղում, էջ 262ա:

¹⁶ Նույն տեղում, էջ 263ա: 1783 թ. ձեռագիրը դարձել է կարմեցի Ավետիքի սեփականությունը, և այն նվիրել է Հովհաննույնին (127ա):

¹⁷ Մատեմարարան, ձեռ. 335, էջ 123բ:

¹⁸ Նույն տեղում, էջ 262ա:

Ինչպես երևում է ձեռագրից, գրիչը արագագիտ է, որը շտապելու կամ «անբարի ժամանակի» հետևանք է. ինչպես հաճախ հիշում են իրենք: Դրա համար էլ երբեմն թույլ է տվել սխալներ, անճշտություններ, ջնջել ու նորից է գրել, երբեմն էլ ամբողջական մախադասություններ է սխալ գրել ու մաքրել, երբեմն միևնույն էջը երկու անգամ է գրել, կամ սխալները մի էջում այնքան շատ են եղել, որ մկրատել է:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս ձեռագրի ծաղկողը Հայրապետ գրիչն է: Ձեռագիրն ունի չորս ավետարանիչների պատկերները, խորաններ, լուսանցազարդեր, զարդագիր ունի չորս ավետարանիչների տառը մանրագիր գրվել է երկու կողմնային լուսանցքներում, այնպես, որ կազմելուց հետո չի նկատվել: Ձեռագրի ընդօրինակման այս սկզբունքը նկատվում է նաև ավելի ուշ, այլ գրիչների արած ընդօրինակություններում:

Ինչպես տեսանք, Հայրապետ գրչի համար սովորույթ է եղել նախօրոք Մատթեոսի և Մարկոսի մի քանի Ավետարաններ արտագրել՝ հետագայում ավարտուն դարձնելու համար: Ավետարանը գրիչը նորից ավարտել է երկու տարում. «Ի դառն ժամանակի, ի գաւառիս Գեղամա, ի գեղս, որ կոչի Շաղվաքա, ի դուռն Սուրբ Աթանասի և Սուրբ Ծողակաթի, և Սուրբ Պետրոսի և Սուրբ Ծիրանատրիս»¹⁹:

Ձեռագիրը դարձել է Մկրտիչի և նրա կնոջ՝ Թեազեմի սեփականությունը: Ստացողներն այն միմյուր են ի հիշատակ իրենց ծնողների՝ Հատի և Վարդխաթունի Կեչառիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցում, որի ապաստվոր Սարգիս կրոնավորը երդվել է լավ պահպանել Ավետարանը, «ամրութեամբ պահել թէ ջրէ և թէ կրակէ և ամենայն պատահմանէ պահել»²⁰:

Ծողագա վանքում է ընդօրինակված Հայրապետ գրչի երկու ձեռագիր ևս: Դրանք խորհրդատեսոր են, որոնցից մեկը ընդօրինակվել է 1676 թ.: Այն նկարագարող է, ունի լուսանցազարդեր և զինագարդներ: Գրված է մագաղաթի վրա, քուրդգրով, երկայնում: Ավարտվում է այս հիշատակարանով.

Հայկականն թվականի հազար հարիւր

Քսան և հիմզ երրորդի. (1676 թ.) մարտ ամսոյ, օրն մէկի...²¹

Չափածո այս հիշատակարանից իմանում ենք, որ գրիչը Սյունյաց աշխարհի Բնունիք գյուղից է և իր ամբողջ կյանքն անց է կացրել Ծողագա վանքում:

Որ եմ երկրէն ի Սունացի,

Զգեղոցն կոչեմ Բնունեցի:

Վայ Ռ (1000) քերան ինձ դարիպի:

Կացարանս իմ Գեղամա,

¹⁹ Կույմ տեղում, էջ 262բ:

²⁰ Կույմ տեղում, էջ 263ա: Ձեռագիրը հետագայում, 1723 թ., գերի է ընկնում և նույն թվականին փրկվում Հարությունի ձեռքով ու վերադարձվում վանք:

²¹ Մատենադարան, ձեռ. 7796, էջ 23ա սկզբից թերի է:

Գեղև, որ կոչի Օաղվաքայի,
Ընդ Ռովանեա Սուրբ Աթամագինա
Եւ Սուրբ Պետրոսի, Շողակաթի²²:

Հայրապետ գրչի մասին կենսագրական տեղեկությունները միայն այս չափածո հիշատակարանների մեջ եղածն են: Ձեռագրի մանրամկարները ևս Բնունեցունեն:

Երկրորդ Խորհրդատետրը Հայրապետ երեցն ընդօրինակել է Մարտիրոսի համար: Գրված է բոլորգրով, կամարներով ավարտվող այուների մեջ: Ամեն գլուխ սկսվում է զարդագրով, որի դիմաց քուսական լուսանցազարդեր են և քերտվբներ: Ձեռագիրն ավարտվում է նույն չափածո հիշատակարանով, ինչ-որ մախորդ Խորհրդատետրում եղածը, փոխված է միայն ընդօրինակության ավարտի թվականը:

Հազար հարիւր քսան և ութերորդի (1679 թ.)

Մարտ ամսոյ քսան և վեցի²³:

Ստացող Մարտիրոսը «սուրբ խորհրդի տետրակս» ստացել է ի հիշատակ իր և իր կենակից Նազուխանի, ման իր ծնողների՝ Սարգսի և Մարեանի, «և առ ի -Քրիստոս փոխեցեալ» որդիների՝ Անանիի, Թաթոսի և Անտոնի²⁴:

Գրիչ և ծաղկող Հայրապետ Բնունեցի երեցի ընդօրինակած ձեռագրերից մեզ հասած մատյանները թեև փոքրաթիվ (չորսն) են, սակայն նրա գրչական գործունեության առնչված տասը տարվա վկայությունն են: Նա աղագագիր էր, որի ապացույցներն են ման ձեռագիր ընդօրինակելու ուրույն եղանակները: Որպեսզի ժամանակը լավ օգտագործի, մախորոք բաց է թողել գլխազարդերի ու զարդագրերի տեղերը յուրաքանչյուր էջում՝ լուսանցքներում մանրատառ նշելով այդ գլխազարդին համապատասխանող տառը: Դրանք լրացրել է ձեռագիրն ավարտելուց հետո, այլ գույնի թանաքով ու գրչով: Նույն նպատակին է ծառայել ման ամեն մի թերթից մի քանի օրինակ միաժամանակ արտագրելը, որով խնայվում էր գրակալին գաղափար օրինակն ամրացնելու ու փոխելու վրա ծախսվող ժամանակը:

Հայրապետ Բնունեցին, որը և՛ գրիչ էր, և՛ ծաղկող, այն էլ՝ բավական հմուտ, հավատարմացած էր, որ իր ընդօրինակություններն անպայման ստացողներ կունենան, դրա համար էլ մի տարում մի քանի Ավետարան էր ընդօրինակում՝ միաժամանակ: Այսպիսի վաստակաշատ արագագիր ու վարժ գրչից ենթադրվում է, որ բավականին շատ ձեռագրեր պետք է լինեին, և մեզ հասած չորս ձեռագիրն անշուշտ շատ քիչ է, որը բացատրվում է հայ ձեռագրական աշխարհի անթվարկելի կորուստներով:

²² Նույն տեղում, էջ 23բ: Ձեռագիրը պատկանել է Թիֆլիսի Հայ ազգագրական ընկերությանը (1ա):

²³ Մատենադարան, ձեռ. 6408, էջ 23բ:

²⁴ Նույն տեղում, էջ 24ա:

ԱՐԱՄԱՅԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԻ (XII-XIV
ԴԴ) ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԴԴԱՐԱՆՔՈՒՄ

1177 թվականին, վրաց Գեորգի թագավորի դեմ Օրբելյան իշխանների ապստամբության ժամանակ, Զաքարյան տոհմի ավագը՝ Սարգիսը, գորավիզ է դառնում վրաց թագավորին՝ ճնշելով ապստամբությունը: Դրանից հետո Զաքարյանները բացարձակ վստահություն են սկսում վայելել վրացական արքունիքում¹:

Հասնելով բարձր դիրքի և ստանալով վրաց թագավորների աջակցությունը, Զաքարյանները ոչ միայն վերականգնեցին Քալական պետականությունը իրենց ազատագրած տարածքներում, այլև ջանք ու եռանդ չխնայեցին՝ կարգավորելու երկրի քայքայված տնտեսությունը, նաև՝ մեծապես զարկ տալով մշակութային կյանքի աշխուժացմանը²:

Նյութական և հոգևոր հուշարձանների ստեղծման թվով, գուցե և դրանց նշանակությամբ, XIII դ. և XIV դ. առաջին կեսը, կարելի է ասել, ամնախաղեպ էին, նույնիսկ՝ ուրույն մի «ուկե փուլ»:

Պայմանավորված ֆեոդալական զարգացած հարաբերությունների, քաղաքական կյանքի, արհեստների և առևտրի անսովոր աշխուժացմամբ և մանավանդ, որը շատ կարելի է, աշխարհիկ մտածողության տարածմամբ, նոր բովանդակություն և մկարագիր է ստանում ճարտարապետական կառույցների գեղարվեստական հարդարանքը: Փոխվում են թեմաների ընտրության և դրանց մեկնաբանման խնդիրները: Գնալով դրանցում ավելի համարձակորեն են ներառվում կյանքի և իրականության տարրերն ու տպավորությունները:

Զաքարյանների ջանքերով վերակառուցվում են Ամին, Լոռին, Սամահին, Հաղբառը, Հաղարծինը: Կառուցվում են Գոշավանքը, Կեչառիսը, Հառիճավանքը, Մակարավանքը և էլի ուրիշ կենտրոններ: Նոր երևույթ էր և այն, որ եկեղեցական ճարտարապետությունը զարգանում էր՝ սերտորեն կապված աշխարհիկ շինությունների հետ: Դա էր Ռիմք տվել Նիկողայոս Մառին՝ շեշտելու Ամին ճարտարապետության յուրահատուկ, գուտ քաղաքային ոճը³:

Ինչպես ասացինք, գեղագիտական նոր պահանջներից համաձայն՝ փոփոխություններ են կատարվում քանդակագործության, առաջին հերթին՝ թեմատիկ պատկերների մեկնա-

¹ Այդ մասին համաձայնորեն շարադրված է «Հայ ժողովրդի պատմության» թագմահատորյակի 3-րդ գրքում (Երևան, 1976, էջ 523-597):

² Այդ նույն ժամանակաշրջանում կատարվում են վրացական մշակույթի, մամավանդ եկեղեցաշինական ծավալում աշխատանքներ՝ Փիտարեռի տաճարը (1213-1222 թթ.), Իկորթայի եկեղեցին (13 դ.), Գեղաթիի գլխավոր տաճարը (13 դ.) և այլն:

³ Ե. Բ. Մար, Асс. М. — Л., 1934, с. 35: Մատենագիտական աղբյուրներն ու վիժակն աղանազությունները վկայում են Ամինում եղած թագմատեսակ շինությունների, արհեստանոցների, ձիթհանքերի, ջրաղացների, մատուռների ու շտեմարանների մասին:

քանության մեջ: Ասվածը հավաստելու համար քաղդաստեց տարբեր ժամանակների պատկանող երկու հուշարձան. Տիրամայրը Մանկան հետ պատկերը՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում (նկար 1)⁴ կառուցված 915-921 թթ. Գագիկ Արծրունու կողմից. և Բուրթել իշխանի հիմնարկած Ամաղուի Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցում (նկար 2) (1339 թ.)⁵:



նկար 1



նկար 2

Աղթամարում⁵ այս պատկերը զբաղեցնում է հարավային պատի կենտրոնական հատվածը: Այն մերկայացնում է X-XI դդ. հայտնի պատկերագրական մի սխեմա (ճան Բյուզանդական աշխարհում ընդունված), որտեղ հիմնական խնդիրը մարդկության Փրկչի ծննդյան խորհրդի շեշտումն է:

Աշխատանքի կատարման ժամ ու տեխնիկական առանձնահատկությունները համապատասխանում են հարթապատկերային-պայմանական ձևերին: Պատկերի կանոնականությունը չի փոխվում մույնիսկ մամրամասների հետաքրքրական զարդափոխանք: Լակոնիկ մեկնաբանված դեմքը և արտահայտիչ աչքերն ուղղված են դիտողին: Այդ քանդակին մայելիս մտաբերում ես Ներսես Լամբրոնացու (1153-1198 թթ.) խոսքերը. «... զոր օրինակ թե ախորժե ոք զծագրութեամբ դեղոցն [գույներով] պատկեր նկարագրել զպէսպէս երանգս դեղոցն ի կիր ածէ. և ջանա ուշի իմաստիցն զմա՝ ի տիպ, ի հասակ կենդանացն յօրինել, զի հաճելի և ցանկալի, որպէսզի կենդանի թուեսցի տեսողացն անկենդան: Իսկ մարդ կենդանի՝ որ հոգւով մարմինն, ոչ այսոցիկ ճշգրտութեամբ երանգոց կարօտի՝ առ ի հրատարակել զիւրն կենդանութիւն, այլ քառական է միայն հոգին մերգործող շարժումն անդամոցն՝ զայս հռչակել: Արդ ուր հոգին է կենդանարար, ձևք և միջք մարմնա-

⁴ Երկհարկանի կառույցի վերին հարկի բարավորի վրա Քրիստոսի բարձրաքանդակն է՝ կողքերին՝ Պողոս և Պետրոս առաքյալները: Առաջին հարկի՝ դամբարանի մուտքի բարավորի վրա Տիրամայր հիշյալ հարթաքանդակն է՝ կողքերին պահապան հրեշտակները:

⁵ Տե՛ս Aghiamar, Milano, 1974, pl. 33, 34: Կարելի է հիշատակել նաև Ղարսի Ս. Առաքելոց եկեղեցու (1930-1940 թթ.) թմբուկի վրայի ֆիգուրատիվ քանդակները:

կանց նմա առ ինչ պիտոյանա»⁶:

Աղթամարի սխեման նույնությամբ կամ նմանությամբ հանդիպում է թե՛ X-XI⁷ և թե՛ հետագա դարերի տարբեր հուշարձաններում⁸:

Աղթամարի ավելի արխայիկ, ճգնողական կերպարի փոխարեն Նորավանքում և՛ Աստվածամայրը, և՛ Մանուկն իրենց բովանդակությամբ, կեցվածքով ու ներքին շարժմամբ թողնում են միանգամայն այլ՝ կենդանի ու զգայական տպավորություն⁹: Տիրամոր մամբ թողնում են միանգամայն այլ՝ կենդանի ու զգայական տպավորություն: Տիրամոր գլխի մեղմ թեքվածությունը աջ, ձեռքերի գործվագույթ նուրբ դիրքը մատնում են մարդկային հոգու հուզական ապրումները, նույնիսկ՝ ներքին անհամապատասխանությունը:

Տպավորությունն ավելի է ընգծվում կատարման վարպետությամբ՝ մրբացված ձևերի, լույսի ստվերային մեղմ անցումների և ծավալային պատրանք ստեղծելու շնորհիվ: Նորավանքի կապակցությամբ արդեն կարելի է մտաբերել Ներսես Լամբրոնացուց շուրջ 200 տարի հետո ապրած Գրիգոր Տաթևացու (1346-1409 թթ.) ասածը. «Գիտելի է, - գրում է Տաթևացին, - զի յերից է պատկերին գեղեցկություն, որով նմանի ի նախատիպ: Նախ չափատր ձևը: Երկրորդ՝ հաւասար մասունք: Երրորդ՝ յարմար շուք»¹⁰:

Տաթևացին քարտզում է, որ մարդը ներդաշնակ պետք է լինի իր բոլոր կողմերով՝ թե՛ մարմնական և թե՛ հոգեկան: Եթե բնությունը գեղեցիկ է իր բազմազանությամբ, - գրում է Տաթևացին, - ապա մարդը՝ մարմնի անդամների համամասնությամբ. «Որպես բոլոր մարդն ամենայն անդամօք գեղեցիկ է և կենդանի. և թե մի յանդամոյ պականի, եղէ զազիր»¹¹:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Տաթևացու մոտ նկատելի են նոր ժամանակների գեղարվեստական ըմբռնումները: Այդ ոգով է կատարված ոչ միայն Նորավանքի նշված աշխատանքը, այլ նաև XIII-XIV դդ. մի շարք քանդակներ. նկատի ունենք Վերնաշեն գյուղի Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցու բարավորի Տիրամոր¹², Գեղարդից ոչ շատ հեռու գտնվող Աղջոց Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան ճակատի Պողոս և Պետրոս առաքյալների¹³, նույն Նորավանքի 1261-1321 թթ. ավանդատան բարավորի վրայի կոմպոզիցիան¹⁴, Էջնի իշխանի և նրա որդու՝ Ամիր Հասանի հարթաքանդակները Սպիտակա-

⁶ Տե՛ս ներսեսի Լամբրոնացու Ատենաբանություն. «Գրիգորի Կաթողիկոսի տղայ կոչեցելոյ ժամականի», Վննետիկ, 1865, էջ 188-190:

⁷ Տե՛ս Վննետիկի Մխիթարյանների «Աղթամարայրի» ամվամվող Ավետարանի (1007 թ.) համամասն պատկերը, Հ. Շամաշյան, Հայկական մանրանկարչություն, Վննետիկ, 1970, էջ 96:

⁸ Տե՛ս Ոկարիչ Սիմեոն Արժիշեցու (Երևանի Մատենադարան ձեռ. N 4867-ի (1297 թ.) պատկերը. (Հր. Հակոբյան, Հայկական մանրանկարչություն, Վասպուրական, Երևան, 1978, էջ 4):

⁹ Տե՛ս Amaghu Noravank, Milano, 1985, pl. 29.

¹⁰ Տե՛ս Հր. Հակոբյան, Գրիգոր Տաթևացին արվեստի մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1973, N 4, էջ 108-109):

¹¹ Գրիգոր Տաթևացի. Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 296: Ասեմք նաև, որ Տաթևացու մոտ հոգին և մարմինը համոզես են զայն միասնաբար. այդ միասնության մեջ է նա տեսնում գեղեցկության և միասնության գրավականը:

¹² Н. Степанян, А. Чакмакчян, Декоративное искусство средневековой Армении, Ленинград, 1971, рис. 113:

¹³ Н. Степанян, А. Чакмакчян, Ծղվ. աշխ. Ոկ. 109:

¹⁴ Н. Степанян, А. Чакмакчян, Ծղվ. աշխ. Ոկ. 101:

վոր եկեղեցում և այլն¹⁵:

Մշակվածության ու ոճական սկզբունքների առումով կարելի է հիշել նույնիսկ Բյուզանդական մի քանի հուշարձաններ¹⁶: Վերջիններս, սակայն, չնայած կատարման բարձր վարպետությանը, որքան էլ զարմանալի թվա, չունեն թե՛ Նորավանքի և թե՛ Վերնաշենի Տիրամոր քանդակների կենդանի զգայական շունչը: Այդ առումով համարձակվում ենք, որոշ վերապահությամբ հանդերձ, զուգահեռներ անցկացնել Իտալիայի վաղ վերածնության քանդակագործության հետ¹⁷:

Հայ արվեստի պատմության մեջ, բացառությամբ թերևս Աղթամարի Ա. Խաչ եկեղեցու, քանդակագործությունն այնպիսի լայն ընդգրկում չի ստացել, ինչպիսին դա եղավ XIII-XIV դարերում, Ջաջարյանների տիրապետության ժամանակաշրջանում: Առաջին հերթին, որպես նոր երևույթ, գեղարվեստական շքեղ ու ակնհայտ տեսք են ստանում եկեղեցիների թմբուկները, Հառիճ (1201 թ.), Ամիի Ա. Գրիգոր Լուսավորիչ (1215 թ.), Գեղարդ (13 դ.), Հաղարծին (13 դ.), Հովհաննավանք (13 դ.), Եղվարդի զանգակատունը (1301 թ.), Նորավանք (13 դ.) և այլն: Դրանց շուրջկողմյա մակերեսները ծածկող կամարակապ դեկորատիվ սյուները, թեմատիկ և օրմամբնտալ զարդերի հետ միասին, ստեղծում են ճարտարապետական զանգվածի ու քանդակի սքանչելի մի դաշնություն, որոնք իրենց տեսքով ու թովանդակությամբ առիցնում են դիտողին՝ նրա հավատո հայացքը տանելով դեպի վեր, դեպի Աստվածային գեղեցկություն:

XIII-XIV դդ. եկեղեցական ճարտարապետության մյուս ուշագրավ հատկանիշը կենտրոնական ճակատների գեղարվեստական շքեղ զարդարանքն է. Նորավանք (նկար 3), Ամիի Ա. Գրիգոր (Տիգրան Հոռենց), Կեչառիս, Հառիճ, Գոշավանք, Արենի, Մակարավանք, Եղվարդ: Այս եկեղեցիներում տեսնում ենք մուտքերն ամփոփող մի քանի շերտ լայն շրջանակներ, որոնց վրայի թուսական ու երկրաչափական համաչափ զարդերը հիշեցնում են արևելյան գորգերի հարուստ զարդանախշերը:

Դրանց ճակատային խուլ մակերեսներն աշխուժացվում են սլացիկ խորշերով, դեկորատիվ նուրբ սյուներով ու կամարներով, մեծ խաչապատկերներն ու հիշատակագրություններն ամփոփող գեղեցիկ շրջանակներով: Ըսկատային մակերեսներն ավելի տպավորիչ են դառնում, երբ կենտրոնա-



նկար 3

¹⁵ Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1971, ՈՎ. 57. նաև ՈՎ. 58՝ Ամիր Հասանը որսի պահին:

¹⁶ H. C. Evans and W.D. Wixom, Art and Culture of the middle Byzantine Era, A.D. 843-1261, New York, 1966, pl. 191 (Աստվածամայր օրմնտո), pl. 307 (Տիրամայրը մանկան հետ), pl. 324 (Հիսուս Քրիստոս) և այլն:

¹⁷ Եկատի ունենք Անդրեա Պիզանոյի (1290-1348 թթ.) Ֆլորենցիայի Սուրբ Լավրենտ Դե Ֆլորեն եկեղեցու զանգակատան հարթաքանդակները (տե՛ս История искусства зарубежных стран, т. 2, М., 1963, рис. 166):

ՏԵՍԱԿԵՏ

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆԹԱՆ

ԳԱԳԱ ԲԵՐԴԸ

Մինչև XVIII դարի վերջը Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները ռազմատեմյեցեղերի և աշխարհակալ հզոր տերությունների արյունալի ընդհարումների ու անվերջացալի ասպատակությունների թատերաբեմ էին: Թաթար-մոնղոլների անողորմ բռնություններից հետո մերկայիս Տավուշի մարզը գրեթե հայաթափվեց: Իսկ երբ երկրի տիրոջ կյանքն ընդհատվեց, ապա մոռացումի փոշով պատվեցին շատ տեղավայրերի ու շինությունների հայկական անունները, որոնց մեծ մասը սկսեց կոչվել մոնղոլներից փոխարինած խաշնարած թուրքմեն, ապա XVI դարում այստեղ բնակեցված դազախ, շամշադիլ, զուլքյադար, թորչալլու և այրումլու թուրքական ցեղերի կնքած անուններով:

Այսպես մոռացության մատնվեց նաև Բագրատունյաց Գագիկ Ա (989-1020 թթ.) թագավորի կառուցած նշանավոր Գագ կամ Գագա բերդը, որի տեղը փաստորեն հայտնի չէր մինչև վերջերս¹, չնայած իշխող տեսակետ կա, որ այն գտնվում է «Ճախկին Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղից մոտ 7 կմ հեռավորության վրա»², իբրև թե Գագ կոչվող լեռան վրա, որն այժմ թուրքերեն կոչվում է Գյոք: Նաև ասվում է, որ պահպանվել են պաշտպանական պարիսպների ավերակները, և բերդի մոտ քարձրացող սարի գագաթին է գտնվում Սուրբ Սարգիս եկեղեցին, որի կառուցումը կապում են Մեսրոպ Մաշտոցի անվան հետ:

«Տեղանունների քառարան»-ի Գագկա բերդին նվիրված բառափոխվածում, դժբախտաբար, անտեսված են հնավայրը հավանաբար առաջինն ուսումնասիրած Մակար Բարխուդարյանցի հաղորդած կարևոր մանրամասները. «Բավական ամուր է բերդս, ափսոս, որ ջուր չունի իր մէջ, վասն որոյ փորում են մի քանի վիմափոր աւազաններ, որ բազմիցս լի են լինում անձրևաջրերով: Համարեա թէ 20-ից աւելի վիմափոր այրեր կան յառկապէս պատրաստուած, որք ի հմումն գուցէ ծառայած են իբրև զօրամոց, յորոց մի քանիսն ունին երդիկներ»³ (Հետագա բոլոր ընդգծումները մերն են - Ռ. Ս.):

Մ. Բարխուդարյանցը, սակայն, նման կարևոր տեղեկություն հաղորդելով, ցավոք, իր նշանավոր աշխատության մեջ սխալ է մերկայացնում Գագա դաշտի սահմանները, որը, ըստ նրա, սկսվելով Կուր և Խրամ գետերի միախառնման անկյունից՝ Կոտրած կամրջից (Կարմիր կամուրջ), ձգվում է մինչև Աղստև գետը և թեքվելով հարավ՝ «սեղմվելով վերջանում է Նոր-Պիպիս (մերկայիս Բերքաբեր - Ռ. Ս.) գիւղի մօտ»:


Այսպիսով անտեսվել է Վարդան Արևելցու չափազանց կարևոր և ստույգ հաղորդումն այն մասին, որ Գագա դաշտում են Սուրբ Սարգիսը, Մշկավանքը, Մակարավանքը, Կայան և Կայծոց բերդերը⁴: Կողբ և Աղստև գետերը հիշատակվող տարածքի եզրեր ընդու-

¹ - Հայտնաբերվել է Գագա բերդը, «Հայոց աշխարհ» (օրաթերթ), Երևան, 10 դեկտեմբերի 1997 թ.:

² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների քառարան, Բ. 1, Երևան, 1986, էջ 765:

³ Մակար Բարխուդարյանց, Արցախ, Բագու, էջ 396:

⁴ Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Փարիզ, 1960, էջ 34:



Գագա բերդի տեղագրությունը (գծագրումը՝ Ռեդիմակի)

Հայտնի է, որ Զաքարյանների և Վահրամյանների իշխանության ժամանակներում (XII-XIII դդ.) Գագա բերդը եղել է ոչ միայն մշամավոր ամրոց, այլև՝ մեծ բնակավայր, որպիսին չի մշտնապես կարծեցյալ Գագա բերդի մնացորդում: Եվ այնքան հարուստ կյանքով է ապրել, որ մրա բնակիչները մոռնալով գորապետ Մուշր Գույի գերությունից ուղեւորներին դառնական ոսկով փրկագներ են խորանաշատի առաջնորդ Վանակյան վարդապետիմ⁵ և մոռնալական հրոսակներից փախչելով այստեղ ապաստան են գտել շրջակա գավառների հազարավոր բնակիչներ:

Կրկնմե, որ կարծեցյալ Գագա բերդն այնքան էլ մեծ բնակավայրի տպավորություն չի թողնում: Եվ դժվար է հավատալ, որ Կուրի դաշտավայրից հարձակվող թշնամիներից հալածված խաղաղ հայ մարդիկ փախել են դեպի «սրի բերան»՝ հարթավայրի եզրին գտնվող ջրագուրկ բնակավայր և ոչ թե դեպի Գագա դաշտի հարավկողմյան լեռները, որոնց քարափների ծերպերին, խոր ձորերում, մութ անտառներում, գուցե մահ այնտեղ հառնող հզոր բերդում կամ մրան կից մարդաշատ գյուղաքաղաքում շատերը կարող էին փրկություն գտնել, մահ՝ խմելու ջրով:

Ուրեմն այնտեղ՝ գավառի մախալեռնային գոտում պիտի գտնվել Վահրամյանների իշխանացիստ Գագա բերդը: Ուստի մեր որոնումների ընթացքում առաջնորդվեցինք համագույցալ Բագրատ Ուլուքաբյանի տեսակետով: Հեմվելով Կիրակոս Գանձակեցու, Վար-

⁵ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 181:

դամ վարդապետի, Մ. Հովհաննիսյանի հաղորդած տեղեկությունների վրա, մա գրում է, թե Գագա բերդի «Աստուգ տեղադրությունը հայտնի չէ: Հավանորեն գտնվել է Աղստև գետի ձախ ափին, Գագա դաշտի հարավային կողմում»⁶:

Իսկ Գագա բերդի՝ Կոթի գյուղի մոտ լինելու տեսակետը գալիս է XIX դարի հետազոտողներից, որոնք պարզապես ճիշտ չեն ընկալել XIII դարի մեծ գիտնական Վարդան տողաներից, որոնք պարզապես ճիշտ չեն ընկալել XIII դարի մեծ գիտնական Վարդան Արևելցու հաղորդումը Գագա գավառի և Գագա բերդի մասին: Պատմիչը հայտնում է, որ թաթար-մոնղոլները Հայաստանի վրա հարձակվել են վիճակահանությամբ, ուստի յուրաքանչյուր հրամանատար իր զորքերը տարել է իրեն բաժին ընկած գավառի ու դոյակի վրա, թվարկելով Մուլար մոյիճի կատարած գրավումները, պատմիչը նշում է. «գճաուշ, գկաճաբէթ, գՏերունականն, գԵրգեվանքն, գՄաճնաբերդ» որ էր Կիրիկեանց Անխարթանայ, գՆոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորագինն, և գՔաւագինն անմարտնչելի ամրոց, և գԳագ անուանի բերդ, և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն Սրբոյն Սարգսի գորավարին, օրհնեալ ի Սրբոյն Մեսրոպայ Վարդապետէն և Թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած»⁷:

Ինչպես տեսնում ենք, պատմիչը բժախնդիր հերթականությամբ է թվարկում Վահրամ իշխանից Մուլար մոյիճի գրաված բերդերի ու գավառների անունները: Խնդրո առարկա տարածքում մոնղոլ գորավարը մախ գրավել է Գագա դաշտի հարթության մեջ հառնող Քավագին (կամ Գավարգին) անմատչելի ժայռ-ամրոցը, ապա Գագ անվանի բերդը: Այստեղ, ամշուշտ, կենտրոնական դիրք է գրավել Գագա դաշտը, որի «գլխին»՝ այսինքն ծայրամասի կատարին, վեր է խոյանում «լայնանիստ և երկայնատարած» դաշտին մայրող Սուրբ Սարգիս եկեղեցին, որն օրհնել է Մաշտոցը: Եվ ոչ մի խոսք այն մասին, թե Գագա բերդը գտնվել է Սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ, կամ՝ ընդհակառակը: Պարզապես Վարդան Արևելցու ասածը սխալ է հասկացվել, մանավանդ որ երկար ժամանակ չի իմացվել Կոթի գյուղի մերձակայքի հնավայրի ինչ լինելը և Գագա բերդի որտեղ գտնվելը:

Ներկայիս Տավուշի մարզի Ոսկեպար գյուղից 7-8 կմ արևմուտք, համանուն լեռնաշղթայի սկզբնամասի ստորոտին, Ոսկեպար գետի ձախափնյա սարավանդին, 8-10 հեկտարի վրա, տարածվում է մի հնավայր: Դեռ հեռվից այնելուին գրավում են որմնաձեգավոր հզոր բերդապարիսպներն ու նրանից ներս կանգուն աղյուսապատ երկհարկանի շինությունը, որի շրջակայքում նշմարվում են երկրաշարժի՝ «g, թե» պայթեցումներից կործանված կառույցների փլատակներ:

Պարսպից դուրս, դեպի Ոսկեպարի լեռնաշղթայի ստորոտ, դարավանդների վրա տարածվում է բերդին կից ավերակ բնակավայրը, որը չափերի շնորհիվ գյուղաքաղաք պիտի կոչվե: Բերդի հատակագիծը նման է արևելքից արևմուտք ուղղված սեպի, որի գլխամասը թաղկացած է իրարից 45 մետր հեռավորությամբ զուգահեռաբար հյուսիսից հարավ ձգվող կրկնապարիսպներից: Դրանցից արտաքինի հարավային ամկյունից, գետի խոր հատակից գրեթե ուղղահայաց ելնող ափեզրով աղեղվում է 8-12 մ բարձրությամբ պարիսպը, որը մի քանի տեղում ավերված է: Ծարվածքով սա շատ նման է Կայան բերդին:

⁶ Հայկական սովետական հանրագիտարան, Բ. 2, Երևան, 1976, էջ 636:

⁷ Հաւանումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վնենիկ, 1862, էջ 144-145:

Արտաքին կրկնապարսպի հյուսիսային ծայրից սկիզբ առնող բերդապատը, որը միջնաբերդն ամջատել է կից գյուղաքաղաքից, ինչ-որ արհավիրքից սաստիկ ավերվել, երկար ձգվող քարակույտի է վերածվել: Սրա միջնամասում եղել է միակ դարպասը: Բերդից մերս, հյուսիս-արևելյան կողմում, արևելք-արևմուտք ուղղությամբ վեր են բարձրանում, մեր կարծիքով, իշխանական պալատի պահպանված երկու հատվածները, որոնց միջանկյալում եղել է մեծ սրահ: 30X5.5 մ ուղղանկյուն հատակագծով այդ շինությունը, ի տարբերություն պարիսպների, կերտված է թռծված կարմիր աղյուսներից, որոնք կապակցված են կիրավազի շաղախով:

Առավել հետաքրքրություն է ներկայացնում կառույցի արևելյան՝ երկհարկանի հատվածը: Մեր կարծիքով՝ առաջին հարկը բերդի (գավառի) իշխանին ծառայել է սեղանատուն, իսկ երկրորդը՝ մեջարան: Դրանց հետևում գտնվող ավերված մեծ սրահում երկրամասի տները հավանաբար հյուրեր է ընդունել և աշխատել: Անանուն ճարտարապետն աղյուսե պատերից վեր, տանիքի եզրերով ձգվող քաղալտե քիվերի վրա, թողել է իր վարպետության կնիքը՝ հիացմունքի արժանի բաղձրարվեստ զարդաքանդակներ:

Պատը ներսից ծեփված է եղել և զարդարված՝ որմնանախշերով: Երկհարկանի հատվածի հարավային պատին կից, դրա սագաշեն տանիքի շարունակության տակ, եղել է մի այլ, այժմ լիովին ավերված շինություն, որի ծեփից պահպանվել են գունավոր սրբապատկերներ: Կասկած չկա, որ սա եղել է բերդի եկեղեցին: Ասել է, թե գավառիս աշխարհիկ ու հոգևոր կառավարիչներն ապրել են հարևանությամբ, և դրա կարիքը ծանր ժամանակներում, անշուշտ, շատ է զգացել ժողովրդի հոգևոր հովիվը:

Պալատի և հյուսիսային բերդապարսպի միջև ձագարածն ջրավազանն է, որը կարող էր խաղող պահերիմ լցվել մոտակայքից հոսող առվի զուլալ ջրով և լեռնաշղթայի ստորոտի աղբյուրից՝ կավե խողովակներով: Ուստի ջրավազանից հագարավոր մարդիկ կարող էին հագեցնել իրենց ծառավը:

Հարավային պարսպի երկայնքով ու բերդի արևմտյան հատվածում կան ավերված ու կիսավեր շինություններ, որոնց մշանակությունը կարող է պարզվել միայն պեղելուց հետո: Այստեղից երևում է Կուրի աջափնյակի անցողարձերը հսկող Գավարգին (Քավագին) ժայռ-ամրոցը, որը կրակի ու ծխի ազդանշանով կապ է ունեցել մահ Նոր բերդի, Կայծոռ բերդի և Գանձաքարի Բուդուր ամրոցի հետ:

Հնավայրի սահմաններում կան գեղեզմանոցներ և այլ շինություններ: Նորահայտ բերդը ժամանակի պահանջներին համեմատ բարեկարգ ճանապարհով, Ոսկեպար գետի ձախափնյակով, միացած է եղել Գավարգինի ստորոտով անցնող Դվին-Տփղիս և Տփղիս-Գանձակ քարավանային ճանապարհներին: Հնավայրի արևելյան կողմից մեկ այլ ճանապարհ հիմնականից թեքվել է դեպի Մշկավանք, Կողբի ձորահովիտ: Իսկ բերդից 4 կմ մեքենա դեռ կանգուն միակամար «Ջորու» կամրջով ճանապարհի մի կարևոր ճյուղն անցել է Ոսկեպար գետի աջափնյակ և ավերակ մի քանի գյուղի միջով բարձրացել արևելյան կողմի լեռնաշղթան և իջել հաջորդ ձորահովտին (Կիրանցի) իշխած Մահկանաքերդի Արծրունիների Կունեն գյուղաքաղաքը*:

* Ներկայումս կոչվում է Առաքելոց հնավայրի անունով:

Այս ամենն ավելի են ընդգծում Ոսկեպարի ձորում մեր ուշադրությանն արժանացած հնավայրի դերն ու ճշմանկությունը՝ անցյալի հերոսական ու եղբրական անցողիկների շարքում: Ուստի համոզված ենք, որ սա է Վարդան Արևելցու ասած Գագ անվանի բերդը⁸: Այդ դեպքում օրինական հարց է առաջանում, մի՞թե հնարավոր է, որ մինչև այժմ այն վրիպած լինի մեր հնագետների ուշադրությունից:

Կարող է լինել մեկ բացատրություն: Ընդհանուր առմամբ, բերդը գտնվել է նախկին Նոյեմբերյանի շրջանի վարչական տարածքում, սակայն նրան մերձեցնելու միակ ուղու վրա մինչև 1972 թիվը Հայաստանի սահմանից մերս հայտնված Ադրբեջանի Ղազախի շրջանի Յուխարի Ասկիպարա գյուղը հայկական ամենամոտ Ոսկեպար գյուղին պարզապես մեկուսացրած է պահել հնավայրից:

Թաթարները բերդը կոչել են Ղալաքենդ (Բերդագյուղ): Դրա տեղն իմացել են ոսկեպառնիք, սակայն մտածել են, թե թաթարական է, ասկիպարցիները՝ հակառակը: Եվ այսպես, Գագա բերդը մնացել է աշխարհի մոռացված անկյունում՝ չուսումնասիրված, անհայտության ու անորոշության մեջ:

«Ոչ մեկի չպատկանելու» պատճառով այս գյուղերի համար այն վերջին տասնամյակներում ծառայել է որպես «աղյուսահանք», որի շինությունների թրծված կարմիր աղյուսներին բազմաթիվ փոքր են կառուցվել: Մնում է տալ մեկ այլ հարցի պատասխան: Եթե Ոսկեպարի ձորի միջնամասի դժվարամատչելի սարավանդի վրա գտնվող ամրոցը Գագա բերդն է, ապա ի՞նչ է այդ հովտի հյուսիս-արևելյան, Գագա դաշտի ներքնամասում, Սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ գտնվող վիմափոր ալյուրե հնավայրը, որի մ սխալմամբ վերագրվել է Գագա բերդի դերը: Վերջինիս ինչ լինելը փորձենք իմանալ հայ պատմիչների հաղորդած տեղեկություններով:

Եղիշեի Պատմությունից հայտնի է, որ Վարդանանց ապստամբության սկզբում Վարդան Մամիկոնյանը Կուր գետի աջափնյա դաշտում, խաղիսաղ քաղաքի մոտ, պարտության մատնեց պարսիկներին, չնայած Վարդանի գալու մասին Սեբուխտին նախապես հայտնել էր Վասակ Սյունին:

Դեպքերի ժամանակակից պատմիչն ասում է. «Այս բանը գրեց ու հասկացրեց մարգալան, որի անունը Սեբուխտ էր: Իսկ նա, երբ լսեց Վասակից այդ բոլոր խրախուսանքները և ստուգելով համոզվեց, որ Հայոց սպարապետը սակավաթիվ զորով է գալիս նրա վրա, այլևս չմնաց Ընդհանուր կողմերում, այլ հավաքեց իր ամբողջ բազմաթիվ զորքը և շտապով անցավ Կուր անունով մեծ գետը և հանդիպեց նրան Վրաց սահմաններին մոտիկ Խաղիսաղ քաղաքի հանդեպ, որ Աղվանների թագավորների ձմեռանոցն էր⁹: Ղազար Փարպեցին և Մովսես Կաղանկատվացին, անդրադարձնալով Խաղիսաղի ճակատամարտին, կրկնել են Եղիշեին:

Սակայն Մովսես Կաղանկատվացին խաղիսաղ քաղաքի տեղադրությունն ավելի է ճշտել հոգների V դարում Հայաստանի վրա ձեռնարկած արշավանքի առթիվ շարադրանքում: «Այդ ժամանակներում ... թագավորն իր զորքերն ու ... բանակը միացրեց, հավաքեց նաև հոգների բոլոր զորքերը և անցավ Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուտիք գավա-

⁸ Մեր տեսակետն առայժմ մնում է առկախված: Հնավայր այնպիսի գիտնականները չեն ասել իրենց թեք կամ դեմ խոսքը:

⁹ Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1971, էջ 77-78:

ռում: Իր բանակը բերեց, բնակեցրեց խաղխաղ քաղաքի մոտ: Այստեղ երեք զորավար-
ներ ընտրելով՝ ճշմանկեց մեծ բանակի հրամանատարներ ու մրամց հրամանատարությ-
յան տակ խմբավորեց տասնմեկ զորքերի բազմությունը, և հրամայեց երեք մասի բաժա-
նել, հարձակվել Աղվանքի, Հայաստանի ու Վրաստանի վրա: Իսկ զորքի երրորդ մասը,
գտակի սկզբին հասնելով Արցախ, հարձակվում է Մեծ Կվյաքի վրա»⁹:

Այսպիսով խաղխաղ քաղաքը գտնվել է Անդրկովկասի կենտրոնում, Արցախից բա-
վականին հեռու, և դա համընկնում է Վրաց թագավորության հարավ-արևելյան սահ-
մանների ամենամոտ տարածքին:

Իսկ պատմական աշխարհագրությունից հայտնի է, որ այդ դարերում Ուտիքի և Վրաս-
տանի սահմանն անցնում էր Կուր և Խրամ գետերի հունով, որոնց միախառնման անկյու-
նում էր գտնվում Հումարակերտ ամրոցը՝ խաղխաղին ամենամոտ կետը: Դրանք իրարից
հեռու էին 25 կիլոմետր: Իսկ Գագա բերդի տեղը ստույգ չմնացած Ղևոնդ Ալիշանն ու Մա-
կար Բարխուդարյանը խաղխաղ քաղաքը տեղադրել են Գանձակի կողմերում, Զակամ
գետի մեջքին հոսանքի շրջանում, Վրաստանի սահմանի ամենամոտ կետից՝ Հումարա-
կերտից 75-80 կմ հեռավորության վրա, որը եղիշեի վկայության անտեսումն է:

Ուտի պիտի ընդունել, որ Սուրբ Սարգիս եկեղեցու մոտ գտնված հնավայրն է եղել
Հայաստանի և Աղվանքի թագավորների ձմեռային քաղաքը, որի կենսագործունեության
համար խիստ նպաստավոր էին աշխարհագրական դիրքը, բնությունն ու ձմռանը մեղմ
կլիման: Հավանաբար շոգ ամռանն այստեղ շատ քիչ մարդ է մնացել: Իսկ սեպտեմբերի
կեսերին, երկար ընդմիջումից հետո, երբ սկսվել են կենարար ամօրները, կարճ ժամանա-
կում անդաստանները պատվել են փարթան կանաչով, և զովություն է իջել երկրին, թա-
գավորն իր մերձավորներով ուստան քաղաքից խաղխաղ է եկել, որը գտնվում էր Անդր-
կովկասի կենտրոնում՝ Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի սահմանների գրեթե կցա-
նվածքում: Բազմաքանակ մայիսներն ու հոտերը մինչև գարուն, Գուգարաց սարեր ամառ-
նարոտի տեղափոխվելը, արածել են գրեթե ձյուն չտեսնող տաք հովիտներում:

Երկրամասի ամտառներն ու գետերը որսառատ էին: Խմելու ջրի հարցը զով եղանա-
կին կարելի էր լուծել ձմեռանոցային քաղաքից արևելք, մոտակայքից հոսող Ոսկեպար
գետից, կամ աջակողմյան ձորի (մերկային Կոթի գյուղի) բնական աղբյուրներից: Գտնվե-
լով Ոսկեպար լեռնաշղթայի հեռավոր ծայրամասի հարավային ստորոտին, խաղխաղը
պաշտպանված է եղել ձմռանը հյուսիսից փչող վտանգավոր քամուց, որը XIX-XX դարե-
րում կոչում էին «դարայազ»:

Մոտակա հարթության մեջ, ձորերում ու սարերի վրա ռազմախաղեր անցկացնելու լավ
հնարավորություններ են ունեցել թագավորի դրանիկ գումդն ու բերդապառ զորքը, որոնց
զորանոց են ծառայել վիճափոր այրերը: Հայոց մայրաքաղաքի հետ խաղխաղը կապված
է եղել Արտաշատ-Տփղիս քարավանային ճանապարհով, որից ձմեռային քաղաքը զըտ-
նվել է 3 կիլոմետրի վրա:

Միով բանիվ, մենք նորից ենք պնդում, որ X-XIII դարերին վերագրվող Գագա բերդը
չկա Սուրբ Սարգիս եկեղեցուն հարևան հարթավայրում, այն գտնվում է Ոսկեպար գետի
միջին հոսանքի շրջանում, իսկ Սուրբ Սարգսի մոյր եղել է Խաղխաղ ձմեռային քաղաքը:

⁹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 73:

⁵ Կարապետ Եղեանց, Ա. Էջմիածնի Մայր Աթոռի եւ Ռուսաց կառավարութեամ յարաբերութիւնների ծագումը, Թիֆլիզ, 1904, էջ 41:

երդում տալիս: Ի տարբերություն մախոդ առաջնորդների, որոնք մշամակվում կամ հետ էին կանչվում կաթողիկոսի կոնդակով, Աշտարակեցուն պաշտոնաձև կարող էր ամել մի-միայն կայսրը: Հետագայում, 1836 թ. մարտի 11-ին, այդ կարգը ամրագրվեց Նիկոլայ I կայսեր հրամանագրով վավերացված «Պոլոժենիե»-ում: «ԿայսերաՌաստատ» թեմակալը շուտով բարեկամանում է Կովկասի կառավարչապետ Նիկոլայ Ռոտիշչևի, այլադասանքիստոնյաների գործերը վարող մախարառ իշխան Գուլիցի-նի և բարձրաստիճան այլ ամ-ձանց հետ:

Ինչպես նկատել է բազմավաստակ պատմաբան Լեոն, «Մտնելով Թիֆլիս առաջնորդական պաշտոնով. Ներսեսը հեմք առաջին քայլերից սկսում է այնպիսի գործունեություն, որ դառնում է ոչ միայն Վրաստանի, այլև ամբողջ ռուսական Այսրկովկասի հայության առաջնորդ և կառավարիչ: Թիֆլիսի հայ գաղութը այդ ժամանակից է սկսում ձեռք բերել դեկավարող, հրահանգող և ուղղություն տվող կենտրոնի մշամակություն»⁶:

Վիրահայոց թեմն այդ ժամանակ խիստ անբարեկարգ վիճակում էր. եկեղեցիները թալանված ու աղքատ, մեծահարուստները փորձում էին իրենց կամքին ենթարկել ոչ միայն քահանաներին, այլև արքեպիսկոպոս-առաջնորդներին:

Ջեռմամուխ լինելով եկեղեցական բարեկարգությունների՝ Ներսես Աշտարակեցին ամխոտափելիորեն շրջափում է տեղի հայոց վերնախավի շահերը և հանդիպում՝ գնալով ուժեղացող մի դիմադրության, որն Այ. Երիցյանի քնորոշմամբ դառնում է «ոչ պակաս քան Դաիթ Դանիելեան շփոթը»⁷:

Թեմակալի հակառակորդներն էին՝ տեղի ազնվականները, ամենամշամակոր հայերը և մի քանի ավագ քահանաներ: Կաթողիկոսն իր հղած կոնդակներով հաշտություն ու խաղաղություն էր քարոզում: Մասնավորապես համատում էին փոքրաթիվ, բայց Թիֆլիսում մեծ ազդեցություն ունեցող Բեհրության իշխանները:

Հակառակորդների դեմ պայքարում Աշտարակեցին դիմում է մշամակոր գործիչ, Պետերբուրգում բարձր դիրքի հասած (деятельнейшим старостой советских) Հարություն Արարատյանի պաշտպանությանը: Այդ առնչությամբ պրոֆ. Վ. Պարսամյանը գրում է. «Թիֆլիսի մի շարք ազդեցիկ հայերի հետ ունեցած իր վեճերի կապակցությամբ, 1815-1816 թթ. քանիցս դիմում է իր գերագծիվ հայրենակցի օգնությանը»⁸: Եռամյա պայքարում (Գուլիցի-նի, Ռոտիշչևի և ռուս այլ բարձրաստիճան պաշտոնյաների աջակցությամբ) հաղթում է բարեկարգիչը՝ Ներսես Աշտարակեցին:

Աշտարակեցու կարևոր բարեկարգություններից էր թեմի վիճակագրության անցկացումը, որն ուներ մեծ քաղաքական և ազգային մշամակություն: Տակավին 1801 թվականին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կ. Կոռիմզը Վիրահայոց առաջնորդ Հովհաննես Գեղարդակի ձիսկոպոսից պահանջել էր վիճակագրական տեղեկություններ, ինչն այդ ժամանակ անկարելի էր հավաքել թեմի խիստ անբարեկարգության պատճառով:

⁶ Լեո, Հայոց պատմություն, մորագույն շրջան, մասն 2-րդ, ձեռագրի իրավունքով, Երևան, 1927, էջ 38:

⁷ Երիցյան Այ., Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 74:

⁸ Պարսամյան Վ. Ա., Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 12-13:

Կայաներ հրամանով Գոլիցինը դիմում է նորահաստատ Ներսես Աշտարակեցուն՝ պահանջելով վերջապես կազմել վիրահայտց եկեղեցական վիճակագրությունը։ Աշխատանքների ընթացքում արքեպիսկոպոսն ստիպված էր այցելել եկեղեցիներ և ամձամբ հաշվառել սրբազան ամոթները, քահանաների թիվը (նրանց չափից շատ լինելը ժամանակին մկատել է մահ կովկասի կառավարչապետը), ծխերը, թեմապատկան գույքն ու եկամուտները և այլն։

կանոնները և այլն:

Այս վիճակագրությունը կազմելու շնորհաբերում էքստեն Աշտարակեցին վերստին բախվում է իշխանների ու տեղի մի շարք ջախջախների հետ և դարձյալ դիմակայում մեծ պլում է իշխանների ու տեղի մի շարք ջախջախների հետ և դարձյալ դիմակայում մեծ

դժվարություններ: Հա ստիպված թերի է թողնում Թիֆլիսի վիճակագրությունը և 1816 թվարկություններ: Հա ստիպված թերի է թողնում Թիֆլիսի վիճակագրությունը և 1816 թվարկություններ: Հա ստիպված թերի է թողնում Թիֆլիսի վիճակագրությունը և 1816 թվարկություններ:

Թվականի գարնանը գրեթե փախչում Գորի քաղաք՝ այդտեղ կատարելու մույն գործը: Թվականի գարնանը գրեթե փախչում Գորի քաղաք՝ այդտեղ կատարելու մույն գործը:

Նախքան այնտեղ գնալը, թեմակալը դիմում է կաթողիկոսին և, մերկայացնելով ստեղծված վիճակը, իր հետագա գործունեության վերաբերյալ համապատասխան հրահանգ խնդրում:

Հրահանգվածը, ընդհանուր առմամբ, հարմար էր նրան, որտեղ եղավ:

Խնդրում եմ ձեռնարկել Ձեր հարցը։

Այսպիսով՝ ամօրժմ էիմ մաս Աշտարակեցու Ռակոտակորդների այն պնդումները, թե թեմակալը, Ռեմվելով ռուսական իշխանությունների վրա և շահարկելով իր համեմատական ինքնուրույնությունը հայրապետից՝ գործում է զրմդէմ կամաց կաթողիկոսի:

Ամերածեշտ է մշել, որ Ներսես Աշտարակեցիմ ի սկզբանե եղել է կաթողիկոսի Ռավատարիմ գործակիցը: Նկատի ունենալով Եփրեմ Կաթողիկոսիմ՝ Մ. Մսերյամքը գրում է. «Սկսաւ վարել զպաշտօմ իւր, ումելով գլխատր գործակից իւրեան զՆերսէս եպիսկոպոս»¹⁰:

Քանի որ թեմում քահանաներն ամիսամեայտ շատ էին, քան Ռարկավոր էր, չցանկանալով սակայն մրանց գրկել իրենց իրավունքներից և հոգևոր սպասավորություն կատարելուց, այս խնդրի լուծման համար Ներսես Աշտարակեցին ողջախոհ և շրջափայլ ուղի է ընտրում. որոշում է երկար տարիներ ոչ ոքի չձեռնադրել, որպեսզի բնական ընթացքով նվազի հոգևորականների թիվը: Իր ճանակներից մեկում մա այս մասին մշում է, որ 1814-1822 թվականներին միայն մեկ հոգու է ձեռնադրել, այն էլ՝ վարդապետ:

Էջմիածնից գալով Թիֆլիս՝ Ներսես Աշտարակեցին չի դադարում մտախոհվել Արարատյան աշխարհի մասին: Դրա վառ ապացույցը Աշտարակեցուն Ռտիշչևի տված այն հարցի պատասխանն է, թե ինչ շքամշան կցանկանար ստանալ կառավարությունից, թե-

⁹ Երեցյալմ Աւ., Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կողկապի Ռաջ XIX դարում, մասն Ա, Թիֆլիս 1894, էջ 96-97:

¹⁰ Մանր Բազիսարոս Մանրեանց, Պատմութիւն Կաթողիկոսաց Ըջնիանցի, ի Սիւմոնէ սիւն Զոպիւանցէս Ը 1763-1831, Մոսկուա, 1876, էջ 77-78:

մակալը պատասխանում է, որ իրեն հարկավոր է Մայր Աթոռի իրական պաշտպանությունը¹¹: Այդուհանդերձ կառավարչապետը, ցարին հղած իր զեկուցագրում (1816 թ. փետրվարի 14-ին) գովեստի խոսքեր գրելով Ներսես Աշտարակեցու մասին, նշել է նրա եռանդն ու նվիրվածությունը ռուսներին, որ մինչև երկրամասի հոգևոր առաջնորդ նշանակվելը բազմիցս ապացուցել է այդ. Երևանյան արշավանքի ժամանակ (1804 թ.) ըստ ամենայնի զգնելով ռուսական զորքին, ջանք չի խնայել հոգալու պարենի պակասը: Ռուիշչևը թվարկում է Արբազանի այլ արժանիքներ ևս՝ նշելով հատկապես նրա քերմեռանդ ծառայությունը իր հոսի՝ խնդրելով ցարին վերաճանաչել առաջնորդին արժանացնել կառավարական պարգևի¹²:

1816 թ. հուլիսի 15-ին Ալեքսանդր I-ը ստորագրում է Ներսես Աշտարակեցուն Ս. Ամենայնի առաջին աստիճանի քանոնադրով պարգևատրելու վերաբերյալ հրովարտակը¹³:

Հաշվի առնելով 1804-1813 թթ. ռուս-պարսկական և 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմներում Պարսկաստանի և Թուրքիայի քաղաքական ու ռազմական լուրջ պարտությունը՝ Աշտարակեցին Հայաստանի ազատագրման հույսը կապում է ռուսական արքունիքի հետ:

Ռուսաստանի հայոց թեմակալ Հովհաննես արքեպիսկոպոսին հղած մամակում Ներսես Աշտարակեցին խնդրում է ջանք ու եռանդ չխնայել Էջմիածնի ազատության համար, և եթե առայժմ ամենար է այդ, ապա «գոնե վասն Աթոռոյն մի խնայեսցէ աստուածամեան հօր Կայսրին զիւր հօր թեւոց հովանաւորութիւնն յատուկ դաշնակցութեամբ զյատուկ հրամանագիր զիւր վասն ապահովագրութեան Աթոռոյն և աթոռայնոց առաքեալ առ շահն և առ շահգատայն»¹⁴:

Ներսես Աշտարակեցին քաջատեղյակ էր Մայր Աթոռի անցուղարձին և շարունակում էր իր խորհուրդներով ու առաջարկություններով աջակցել կաթողիկոսին: Այսպես՝ տակավին 1816 թ. հուլիսի 8-ին Եփրեմ Ա Ջորագեղցուն ուղարկած գրությունով հայտնում է Կովկասի կառավարչապետ և զինավոր զորահրամանատար, Պարսկաստանում արտակարգ դեսպանորդ գեներալ Երմոլովի՝ 1817 թ. ապրիլին Պարսկաստան կատարելիք դիվանագիտական այցի մասին և խորհուրդ տալիս Էջմիածնում պատշաճ ընդունելություն կազմակերպել. «Նոր կուսակալն առանց կարծեաց զայ այդր ի գնալն առ շահն և արժան է ունել վասն մորա զարծանաւոր մախաբիութիւն վասն ընդունելութեան ըստ տեղոյն, ըստ կերակրոյն...»¹⁵:

Նախքան արտակարգ դեսպանորդի մեկնելը՝ Աշտարակեցին հանդիպում է նրան, մամրամասն ճերկայացնում Մայր Աթոռի դրությունն ու պարսկական բռնությունները: Խնդրում է Երմոլովին միջնորդել պարսից շահի և բարձրաստիճան պաշտոնյաների մոտ՝ հայոց ծանր վիճակը թեթևացնելու համար:

¹¹ Մաշտոցի ամփ. Մատեմադարան, Կաթողիկոսական դիվան, Այ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վապ. 106:

¹² Մաշտոցի ամփ. Մատեմադարան, Կաթողիկոսական դիվան, Այ. Երիցյանի արխիվ, թղթ. 158, վապ. 141 ա, բ:

¹³ ЦГИА СССР, ф. 840, оп. 5, е. з. 381, л. 19.

¹⁴ Մաշտոցի ամփ. Մատեմադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 բ, վապ. 55:

¹⁵ Մաշտոցի ամփ. Մատեմադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 բ, վապ. 1014:

1817 թ. մայիսի 2-ին Երմոլովի ղեկավարությամբ Պարսկաստան մեկնող 200 հոգուց բաղկացած ուսական պատվիրակությունը ժամանում է Էջմիածին և արժանանում ջերմ հյուրընկալության: Այդ կապակցությամբ Երմոլովի անձնական քարտուղար Ալեքսանդր խոտաբաշյանը գրում է. «...իրավի յոթ պատուով և վայելչապես ընկալաւ զմեզ սրբազնա-գոյն վեհմ, և եթէ իմքն գերազանց դեսպանմ՝ մոյնպէս և ամենայն ընկերակիցք իմ, այն-քան քատագով և գոհունակ եղեմ՝ մինչև ոչ կարեն բացայայտել ձեզ զգացողութիւն իւրեանց: Այսպիսի բարեյաջող առիթ բաւականութեամբ մեծաւորի իմոյ, գիտէ սրբազնութիւն ձեռ ըստ ազգասիրութեամբ իմոյ՝ որքան ախորժելի էր ինձ»¹⁶:

Ներսէս Աշտարակեցի մամականգրական կապեր ունէր և որոշ բանակցություններ էր վարում մահապարհից ղեկավար շրջանների հետ: Այս առումով ուշագրավ է 1823 թ. մոյն-մեռին Էջմիածնի ծանր վիճակը թեթևացնելու հույսով գահաժառանգ և Ատրպատականի մահաճապետ Աբաս-Միրզայի մոտ Տաթևի Մարտիրոս արքեպիսկոպոսին ուղարկելը¹⁷:

Այսպիսով, վիրահայոց թեմական գործերի բարեկարգմանը զուգընթաց Ներսէս Աշտարակեցու հոգածության կենտրոնում էր Արևելյան Հայաստանի ազատագրումը և Ա. Էջմիածնի վիճակը:

¹⁶ Մաշտոցի ամսվ. Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 ք, վավ. 1375, ք. 26:

¹⁷ Մաշտոցի ամսվ. Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 795:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԱՍՏԱՎՈՐՆԵՐԸ

ԽԱՂԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳՈՒՐԳԵՆ ԻԴԻԼՅԱՆ

Բազմավաստակ գիտնական, մանկավարժ ու հոգեբան, ամվանի մեթոդիստ ու դասագրքերի հեղինակ պրոֆեսոր Գուրգեն Մեսրոպի (Արշակի) Լիլյանը ծնվել է 1885 թ. դեկտեմբերի 25-ին մախկին Ղազախի շրջանի Քարվանսարա գյուղում (այժմ՝ Իջևան քաղաք), գյուղական քահանայի ընտանիքում: 1892 թ. ընդունվել է տեղի ծխական դպրոց, որտեղ սովորել է 4 տարի:

Ուսմանը մեծ կարևորություն տվող նրա հայրը 11 տարեկան որդուն տանում է սովորելու Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որտեղ տղան ուսանում է միայն 2 տարի. նյութական անբարենպաստ պայմաններն ուսումնաստեմը պատանուն հարկադրում են նստ դառնալ: Որդու ապագան շատ է մտահոգում հորը:

1898 թ. սեպտեմբերին Տեր Մեսրոպը մի արտառուչ մամակ է գրում Խրիմյան Հայրիկին և թախանձագին խնդրում իր որդուն ընդունել Էջմիածնի Գևորգյան ճեմարան: Ինչպես մամակում է ասվում. «Վեհափա՛ն Տեր, որ ամենքի համար բարեհոգի հայր եք և «Հայոց Հայրիկ», աղերսում եմ՝ այդ հայրական խնամքը և շնորհքը իմ որդուս վրա ևս տարածել, որ վստահ եմ, թե ժամանակին ազգին պիտանի զավակ կդառնա»¹:

Քանի որ Գուրգենը Ներսիսյան դպրոցում սովորել էր 2 տարի, վեհափառը նրան ընդունում է ճեմարանի երրորդ լսարան: Լիլյանը քաջալավ գնահատականով ճեմարանն ավարտում է 1903 թ. ամռանը:

Դասախոսների վկայությամբ, դեռևս ուսանողական տարիներից Լիլյանն առանձնահատուկ հետաքրքրություն է տածել մանկավարժության և առարկաների դասավանդման մեթոդների ու եղանակների մկատմամբ: Այն դարձնելով իր կյանքի գլխավոր գործը, ստեղծեց բազմաթիվ մեթոդա-մանկավարժական դասագրքեր ու ձեռնարկներ:

Ամվանի հոգեբան-մանկավարժ, պրոֆեսոր Միշա Մազմանյանը նրա, որպես մանկավարժության տեսաբանի, մասին գրում է. «Պրոֆ. Գ. Լիլյանը հայ մանկավարժական առաջավոր մտքի կարկառուն ներկայացուցիչներից էր. նա մեծ էրոտիցիա (խորագիտակություն), բազմակողմանի գիտելիքներ ու հետաքրքրություններ ունեցող և միաժամանակ մանկավարժական էքսպերիմենտի (գիտափորձի) մորազույց մեթոդներից քաջ տիրապետող, մեր իրականության պայմաններում այդ տեսակետից եզակի մի գիտնական էր»²:

1904 թ. Լիլյանը մանկավարժական բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնում է Գերմանիա, ընդունվում Եմայի համալսարան, ապա տեղափոխվում Լայպցիգ:

¹ Լ. Գ. Ալեքսանյան, Գուրգեն Լիլյան, Երևանի համալս. հրատ., 1973 թ., էջ 6:

² Հայ մանկավարժներ, գիրք Բ (կազմեց և խմբագրեց՝ պրոֆ. Ա. Օավարչյան), Երևան, 1961, էջ 607:

Այս երկու համալսարաններում, որոնք մանկավարժական գիտության խոշոր կենտրոններ էին, ՀՀիլյանը հաղորդակից է լինում արևմտաեվրոպական մանկավարժական և հոգեբանական առաջավոր գիտություններից, այնուհետև գնում է Օվեցյարիա, ընդունվում Բեռլին համալսարան³ փիլիսոփայություն ուսումնասիրելու:

Եվրոպայում սովորելու 5 տարիները հեշտությամբ չեն անցնում մշտական սուղ պայմանների մեջ գտնվող երիտասարդի համար. ընտանիքի օգնությունը չնչին էր. նրան օգնության ձեռք էին մեկնում մանկապարտեզը, քեռին և էլի ուրիշ ազգականներ: Կամքի ուժով ու ուսումը կիսատ չթողնելու համառությունը հաղթահարում են բոլոր դժվարությունները. և ուսումնաստեմէ երիտասարդը 1909 թ. փետրվարին մեծ հաջողությամբ համեմուն է Բեռլին համալսարանի ավարտական քննությունները, գերմաներեն լեզվով պաշտպանում դոկտորական թեզ և ստանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան:

Բեռլին համալսարանում ավանդույթ կար՝ բոլոր շրջանավարտները դիպլոմ ստանալուց առաջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին երդում էին տալիս, որ իրենց ստացած գիտելիքները կգործադրեն հոգուտ մարդկային բարօրության: Նույն կերպ երդվում է ման երիտասարդ հայ դոկտորը. «Երդվում եմ իմ պրոֆեսորների առջև, որ այն գիտելիքներն ու գիտական աշխատանքի մեթոդները, որ ձեռք բերեցի այս համալսարանում, երբեք չեմ օգտագործի հողի մպատակներով ու անձնական մեղ շահերի համար, այլ միայն՝ հոգուտ մարդկության բարօրության ու առաջադիմության»³:

Նվիրական այս խորհրդով ու գիտական մեծ պատրաստվածությամբ ՀՀիլյան գիտնական-մանկավարժը վերադարձավ հայրենիք և ավելի քան 30 տարի անձնվիրաբար մվիրվեց հարազատ ժողովրդի մատաղ սերունդի կրթության ու դաստիարակության լուսավոր ու շնորհակալ գործին, այն սկսելով իր սիրելի կրթօջախից, որտեղ գիտելիքներ էր ստացել և որտեղ ձևավորվել էր որպես մարդ-ամհատ: ՀՀիլյանը ճեմարանում իր մանկավարժական գործունեությունն սկսում է 1909-1910 թթ. ուսումնական տարվանից:

Քանի որ ճեմարանը հոգևորականներից բացի պատրաստում էր ման ուսուցիչներ, այդ մպատակով էլ ՀՀիլյանն իր դասախոս ընկերների հետ սկսեց վերականգնել դասավանդվող առարկաների ծրագրերն ու դասագրքերը՝ դասավանդման գործում մեծ տեղ տալով ուսուցման դիդակտիկական մեթոդին ու սկզբունքներին:

Նա փոփոխություններ մտցրեց ման ուսումնական ծրագրերում՝ ավելի մեծ տեղ տալով մանկավարժությանը, հոգեբանությանը և լեզուների դասավանդման մեթոդիկային: Նորացնելով ու թարմացնելով ծրագրերը՝ մա ուսուցումը սերտորեն կապեց կյանքի հետ, մեծ տեղ հատկացնելով գործնական պարապմունքներին:

Իր ժամանակակիցների ու անվանի մանկավարժների վկայությամբ երիտասարդ մանկավարժ-հոգեբանը հեղաշրջում կատարեց մանկավարժության մեջ. «Նա փաստորեն առաջին հայ գիտնականն էր, որ գրում է Ա. Օավարշյանը, որ դեռ երիտասարդական տարիներից հատուկ ավունով ցույց տվեց դասավանդման գործում լայն տարածում գտած այն վնասակար ֆորմալիզմը, որի հիմքում ընկած էին Հերթարտ-Թիլլերյան աստիճանները...

³ Լ. Գ. Ալեքսանյան, մշվ. աշխ., էջ 8:

Նա ազատվեց նեղ էմպիրիզմից և համարձակորեն մտաջ գործեց գիտական հոգեբանության լայն ճամապարհը⁴:

Բացի ուսուցանվող առարկաների ծրագրերի թարմացումից, Էդիլյանն ուսուցման համակարգում մի շարք նորությունների սկզբնավորողը եղավ:

1. Առաջին հերթին նա կարևորեց դասղեկի գործունեությունը: Էդիլյանն իրավացիորեն ապացուցում էր, որ ճեմարանի լուրաքանչյուր դասարան-լսարան պետք է ունենա իր դասղեկը, որը ոչ միայն ամփոփաբար պետք է զբաղվի սաների կրթությամբ, այլև դաստիարակությամբ հարցերով: Նա մանկավարժներ Արասխանյանի և Տիգրանյանի հետ կազմում է դասղեկի աշխատանքների կոմիտեի ծրագրեր ու պլաններ, որտեղ մախատեսվում են էքսկուրսիաներ, համոթներ, ցերեկույթներ, թատերական, ասմունքի և արվեստի այլ ճյուղերին վերաբերող ինքնագործ խմբեր, ինչպես նաև զանազան թեմաներով զեկուցումներ ու լրատվության (ինֆորմացիայի) ժամեր:

Դասղեկի հարցն այսօր ևս կարևոր խնդիր է, և ճեմարանի տեսչությունը պետք է նկատի ունենա ու վերականգնի այդ կարևոր ավանդույթը:

2. Էդիլյանն առաջադրում էր նաև ուսուցչական միությունների ստեղծումը, որի նպատակը պետք է լիներ քննել ու հաստատել առարկայական և դասղեկական ծրագրերը, զբաղվել ուսանողների կրթադաստիարակչական ու կարգապահական հարցերով:

3. Էդիլյանն առաջարկում էր ուսումնական պլաններում մախատեսել նաև գյուղատնտեսական առարկաներ, որպեսզի ճեմարանն ավարտած ուսանողը կարողանա զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, նպաստի երկրի շենացմանը:

4. Պահանջ էր դրվում ճեմարանին կից ստեղծել նաև բազային դպրոց, որտեղ ճեմարանի մանկավարժական քաժմի սաները պետք է անցկացնեին իրենց մանկավարժական պրակտիկան: Էդիլյանն ինքն էր վարում այդ պրակտիկան և իր սաներին՝ ապագա ուսուցիչներին, սովորեցնում էր դասավանդման մեթոդներն ու պահանջները, որի համար Մ. Արեղյանի, Ս. Կանայանի հետ մշակել էր հատուկ ծրագիր:

Ճեմարանում, մանկավարժական աշխատանքին զուգընթաց, Էդիլյանը շարունակում էր նաև իր գիտական գործունեությունը, աշխատակցելով «Արարատ» համոթին, բազմաթիվ հոդվածներ է տպագրում՝ մվիրված ուսուցման դիդակտիկական սկզբունքներին, առարկաների դասավանդման մեթոդներին: Նրա մույնաբնույթ աշխատություններից 1913-1914 թթ. լույս տեսան «Դասավանդման ձևեր», «Դասավանդման խնդիրներ», «Ուսուցիչներ պատրաստելու խնդիրը», «Գիտության և դպրոցական պարամունքների խնդիրները», «Դպրոցական կյանք», «Գաղափարները դպրոցում», «Մանկավարժական գրականությունը և կյանքը» և մի շարք այլ գործեր:

Այս տարիներին հայերենով լույս տեսավ նաև նրա դոկտորական դիսերտացիան՝ «Հնամենատություն Հերթարտ-Յիլլերյան ձևական աստիճանների», որը դեռևս 1909 թ. լույս էր տեսել գերմաներեն: Իսկ ի՞նչ էր այդ ուսմունքի էությունը, որը խիստ քննադատության ենթարկեց Էդիլյանը: Գերմանացի ժամանակի հայտնի մանկավարժ Հերթարտը և նրա աշակերտ Յիլլերը մշակել էին ուսուցման մի մեթոդ, ըստ որի դպրոցում դասա-

⁴ Հայ մանկավարժներ, գիրք A, էջ 607-608:

վանդվող բոլոր առարկաները պետք է ուսուցանվեին միևնույն եղանակով՝ պահպանելով վառագույն քոլոր առարկաները պետք է ուսուցանվեին միևնույն եղանակով՝ պահպանելով ուսուցման 5 աստիճանները: Այս ուսումնառում անտեսվում էին սովորողների տարիքային առանձնահատկությունները և ուսուցչին զրկում ստեղծագործական աշխատանքից:

Դասավանդման այդ տաղտկալի միօրինակությունը մանկավարժության մեջ տարի-ներ շարունակ իշխող ազդեցություն ուներ ոչ միայն Գերմանիայում: Այն տիրապետող էր նաև Հայաստանում, որի կողմնակիցներն էին Գերմանիայում կրթությունը ստացած մանկավարժներ Ս. Մանդիմյանն ու Տեր-Միրաքյանը: Էդիլյանի Քամար դժվար էր նրանց համոզել հրաժարվել «ուսուցչին մեքենա դարձնող» այդ մոտեցումից: Ի վերջո, հաղթում է նորը՝ առաջադիմականը, և Էդիլյանի շնորհիվ ճեմարանում դասավանդումն սկսվում է նոր մեթոդներով:

Էդիլյանը ճեմարանում իր նոր մեթոդներով դասավանդեց 5 տարի և կարևոր փոփոխություններ կատարեց ուսուցման համակարգում ու ծրագրերում:

Այդ տարիներից նրան աշակերտած Պետրոս Սոտնիկյանը գրում էր, որ Էդիլյանի դասախոսություններն ուղեկցվում էին դիպլոմատիկական գրություններով, որն այն ժամանակ բացառիկ երևույթ էր Համբուրգի պայմաններում⁵:

1914 թ. սեպտեմբերին Էդիլյանը մանկավարժական աշխատանքի է հրավիրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոց: Այստեղ կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվում է նոր հիմքերի վրա դնել դասավանդումը: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ Էդիլյանն այստեղ ևս շարունակում է իր գիտական գործունեությունը, զբաղվելով նաև հայ մանկավարժության պատմության հարցերով: Ընդգծելի է հատկապես նրա՝ հայ մանկավարժության առաջին սերնդի ներկայացուցիչներից մեկի՝ մեծանուն մանկավարժ Սեդրակ Մանդիմյանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատությունը: Նույն կերպ 1915 թ. Թիֆլիսում Մանդիմյանի թաղման առիթով իր արտասանած դամբանականում նա Մանդիմյանին համարում է հայ անվանի մանկավարժ-մասնագետ և նրա ժառանգությունը դիտում որպես հայ մանկավարժական մտքի կարևոր նվաճումներից մեկը⁶:

Առաջին աշխարհամարտի տարիներից Անդրկովկասում բացվեցին հարյուրից ավելի որբանոցներ՝ լեռն-լեռում հիվանդ ու սովալլուկ երեխաներով, որոնց ճակատագիրը չէր կարող չմտահոգել հոգով ու էությանը հոգեբան և մանկավարժ Էդիլյանին, և նա ամբողջ էությանը նվիրվեց մանկատների որբ ու հիվանդ երեխաների կրթության ու դաստիարակության խիստ պարտավորեցնող գործին:

1916-ին նա ստանձնեց Կովկասի գաղթականական որբանոցների տեսչի խիստ պատասխանատու պաշտոնը: Նա, շրջելով ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում ու Հյուսիսային Կովկասում գտնվող գրեթե բոլոր որբանոցները, հոգ էր տանում որբերի հագուստի, սննդի և ուսման վերաբերյալ: Նա ուսուցման ու դաստիարակչական աշխատանքների նոր պլաններ ու ծրագրեր էր կազմում եղնելով տեղական պայմաններից ու հնարավորություններից:

⁵ Գ. Էդիլյան, Ամտիկ էջեր (կազմեց. առաջարանը գրեց, ծանոթագրեց ու խմբագրեց՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Տեր-Գրիգորյան), «Լույս», Երևան, 1988, էջ 12:

⁶ Տե՛ս Լ. Պ. Ալեքսանյան, Չժվ. աշխ., էջ 26:

Էդիլյանը դեմ էր այն կարծիքին, որ մանկատների սաներին սխտեմատիկ կրթություն պետք չէ, թե նրանց գրաճանաչությունն էլ ձեռիք է և կամ տարրական գիտելիքներ տալն ու միայն արձեստներ սովորեցնելը:

Էդիլյանը մտածում էր ոչ միայն որքանոցների սաների կրթության ու դաստիարակության մասին, այլև հոգատարությամբ զբաղվում էր նաև ուսուցիչների ու դաստիարակների սոցիալական հարցերով, մտահոգվում ուսուցիչների վերադասավորման խնդիրներով:

Նա այնքան էր կարևորում որքանոցներում տարվող կրթադաստիարակչական աշխատանքները, որ գրեց այդ հարցին նվիրված «Գաղթականական որքանոցներ» գիրքը, որում հանգամանորեն շարադրված են ոչ միայն հայ որբերի ժամանակի վիճակը, այլև տրված են մեթոդամանկավարժական ցուցումներ, առաջարկված են կրթության և դաստիարակության եղանակներ ու մեթոդներ, ընդգրկված են նաև մանկավարժների ու դաստիարակների խնդիրներն ու պարտականությունները:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունն արմատական փոփոխություն մտցրեց նաև Արևելյան Հայաստանի ինչպես քաղաքական ու տնտեսական, այնպես էլ կրթական ու մշակութային կյանքում. նոր խնդիրներ դրվեցին նաև դպրոցի առջև: «Մեր պետության մեջ սկսվել է քաղաքական մի նոր կյանք,- գրում է Գուրգեն Էդիլյանը,- ապրել անցյալի պես և կրթել անցյալի պես, անկարելի է...»: Եվ նա նոր դպրոցի համար մշակեց նոր մեթոդներ, առաջ քաշեց նոր խնդիրներ, որոնցից մեկն էլ ռուսաց լեզվի դասավանդման կատարելագործման ու քարելավման խնդիրն էր:

1919-ի աշնանը, երբ Հայաստանի նորաստեղծ Հանրապետության Լուսավորության նախարարությունը Էդիլյանին է վստահում տարրական դպրոցների բաժնի վարիչի պարտականությունը, և փորձված ու հմուտ մանկավարժը ձեռնամուխ է լինում նոր ծրագրերի ու դասագրքերի ստեղծմանը:

1920 թ., երբ Գյումրիից Երևան է տեղափոխվում Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ ժողովրդական համալսարանը, Էդիլյանը դառնում է նրա առաջին և հիմնադիր դասախոսներից մեկը՝ ստանձնելով մանկավարժական ֆակուլտետի ղեկավար պարտականությունը:

1920 թ., Էդիլյանը, որպես որքանոցների հմուտ մեթոդիստ-մանկավարժ, աշխատանքի է գործուղվում Գյումրիի Ամերիկոսի որքանոցները վերատեսչի պաշտոնով, իսկ 1925-1926 թթ. դպրոցական տեսչի պաշտոնով աշխատանքի է գործուղվում Ստեփանակերտ:

1926 թ. Էդիլյանն Արցախից վերադառնում է Հայաստան և աշխատանքի անցնում նախ՝ մանկավարժական ուսումնարանում, ապա կրկին հրավիրվում Պետական համալսարան: Այստեղ նա աճեցրեց, կրթեց ու դաստիարակեց բարձրորակ մանկավարժական կադրեր, որոնք եղան իր գործի նվիրյալ շարունակողները. «Նա իր տաղանդի ուժով առաջ մղեց հայ հոգեբանական ու մանկավարժական միտքը և իրավամբ դարձավ փորձաքարական հոգեբանության, մանկավարժության և լեզվի մեթոդիկայի հիմնադիրը Խորհրդային Հայաստանում»⁷, - գրում է Լ. Ալեքսանյանը:

⁷ Գուրգեն Էդիլյան, Կենսամատենագիտություն (կազմեց և առաջաբանը գրեց՝ մանկավարժական գիտությունների թեկնածու Լ. Պ. Ալեքսանյան), Երևանի համալս. հրատ., 1985, էջ 17:

բազմակողմանի զարգացում ունի, կենդանի միտք, որ երբեք չէր դադարում գործելուց... Խոսում էր համգիստ, կազմակերպված, սահուն...»:

- Մեր պրոֆեսորը զարմանալի ընդունակություններ ուներ մերձնչելու: Եվ մեծը եմ-թարկվում էիմք մրա ազդեցությամբ,- գրում է Ռ. Զարյանը և վերադառնում մրա խորհուրդները:

- Ինչի մասին էլ խոսելիս լինեք, եթե դա գրույց չէ, աշխատեք ձեր առարկայից չձեռվել, չձեռվել քննության առարկայից:

- Հետևե՛ք, որ ձեր ասելիքը ձևակերպելիս յուրաքանչյուր բառը ծառայի մտքին, մրա բացահայտմանը: Դաստիարակե՛ք ձեր միտքն այնպես, որ ավելորդ, պարզապես բառեր չլինեն: Ամեն մի բառ իր տեղում լինի, ածականը, եթե անհրաժեշտ է, ստույգ գտնվի:

- Ուսանողական տարիները լավագույնն են մարդու կյանքում: Օգտվեցե՛ք այդ տարի-ներից այն լրջությամբ, որ անհրաժեշտ է ապագա մասնագիտության պաշարն ըստ ամենայնի ձեռք բերելու և միտքը կրթելու համար:

- Պարապեցե՛ք այնպես և այնքան, որ ձեր գլուխը ցավի: Գրադարանում մնացե՛ք այն-քան, որ գրադարանի աշխատողները դուրս հանեն ձեզ:

- Այգիներում շա՛տ եղեք, երկնքի տակ: Սիրե՛ք ու սիրվեք: Սիրահարված մարդուց գեղեցիկ արարած չկա: Սիրած աղջկա հետ շրջե՛ք փողոցներում, թափառեք անմպատակ, հենց այնպես, երբեմն երկնքին նայելով և ձեր աստղը որոնելով:

- Հավաքվեցե՛ք, սեղան նստե՛ք, բաժակ-բաժակի զարկե՛ք, ամոգ զվարճացե՛ք:

- Հաճախ եղե՛ք համերգներին և կնկատեք, թե ինչպես կթարմանաք և կնորոգվեք մտքով ու հոգով:

- Նայեցե՛ք ներկայացումներ, թատրոններ՝ գնացեք: Թատրոնը գեղարվեստական ներգործության հզոր ուժ է, դա կախարդական արվեստ է:

Զարյանը հիշում է նաև, որ Էդիյանը մարդու կյանքում կարևորում էր և հումորը.

- Առանց հումորի ապրել չի կարելի: Հումորի զգացումից զուրկ մարդը դժբախտ է... Հումորը փրկություն է. երբանիկ եմ այն մարդիկ, որ հումորի զգացումը չեն կորցնում կյանքի դժվարին պայմաններում անգամ: Այդպես եմ ֆրանսիացիները: Ես կկամենայի, որ այդ հարցում դուք ֆրանսիացի լինեիք...

«Երկար ու գեղեցիկ խոսեց կամքի մասին: Եվ խոսեց այնպես, որ մեզանից ամեն մեկը հավատաց իր ուժերին, իր ապագային: Ասում էր, որ կամք ունեցողը հաղթահարում է անասելի դժվարություններ, և քերում էր Դեմոսթենեսի օրինակը, թե ինչպես կակազը դարձավ մեծահռչակ հռետոր», - հիշում է Ռ. Զարյանը: Վերջինս լավ է հիշում նաև իրենց սիրելի դասախոսի վերջին դասախոսությունը, որի մեկ ժամն է պարապել ու ավարտել հետևյալ բառերով.

- Ե՞րբ կհանդիպեմք, չգիտեմ: Կհանդիպե՞մք, դա էլ չգիտեմ: Եթե չհանդիպեմք՝ ոչինչ... Ո՛ղջ լերուք:


«Օուտ եկավ ու գնաց: Այլևս չհանդիպեցիմք: Երբեք...»⁹:

⁹ Ռ. Զարյան, Հուշապատում, գիրք 3-րդ, Երևան, 1981, էջ 155-164:

Իսկ ո՞ր գմաց այդ լուսավոր մարդը, ի՞նչ եղավ նրա հետագա ճակատագիրը... Հայ մեծ մանկավարժն ու հոգեբանը ևս ենթարկվեց 1937 թ. բռնություններից և աքսորվեց Սիբիր: Այնտեղ էլ՝ Օմսկում, վախճանվեց 1942 թ. հունվարի 18-ին, 57 տարեկան հասակում՝ չունենալով ո՛չ ընտանիք, ո՛չ էլ ժառանգներ: Աքսորում եղած 4 տարիներից էղիվամը չունենալով ո՛չ ընտանիք, ո՛չ էլ ժառանգներ: Աքսորում եղած 4 տարիներից էղիվամը զոհեց 35 մեծ ու փոքր մոր աշխատություններ («Դատական հոգեբանություն», «Կամքի հոգեբանություն», «Հոգեբանության տիպերը», «Ուսուցման արվեստը», «Խ. Արուսյանի կյանքն ու գործը» և այլն), որոնց մի մասը կորել է, մյուս մասը պահպանվում է արխիվում, մի շարք գործեր էլ քավական թվով մասնակների հետ գտնվում են քրոջ՝ Երանիկի, և զարմիկ Լևոն Պետրոսյանի մոտ: Դրանք շատ արժեքավոր գործեր են և սպասում են իրենց հրատարակողին:

Ազատագրկման դատապարտված խոհուն գիտնականը երբեք չի հուսահատվել, հոռետեսության գիրկը չի ընկել՝ հավատացած լինելով, որ անցնելու են այդ օրերը, ցրվելու է խավարը, և իր մեծանուն մարդիկ ի վերջո արդարացվելու են:

Ընդոտ էին նրա կամխագուշակումները, բայց այդ խավարը ուշացումով ցրվեց, երբ չկար ինքը, և չկային իր մեծանուն դատապարտվածներից շատերը ...



Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆԻ
«ԱՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔԸ

*«Հարց ցիարսն քո եւ պատմեացնն քեզ
եւ ցծնրս քո եւ ասասցենն քեզ»:
«Հարցրու քո հորդ, եւ թող պատմի քեզ,
եւ ծնրնրիդ հարցրու, եւ թող ասեն քեզ»:
(Բ Օրինաց ԼԲ 7)*

Մովսես Նախամարգարեի այս պատգամով է առաջնորդվել «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» աշխատության հեղինակ Ռաֆայել Պապայանը: Այս գործի գրության շարժիչ ուժն անհողդողդ համոզումն ու ազնիվ մղումներն են: Անժխտելի է, որ միայն կյանքի սրվերի, կեղծիքի ու տմարդի երևույթների հանդեպ անհանդուրժողականություն որդեգրած, մարդկային բարձր նկարագիր ռսեցող մտավորականը կարող է սրելով նման անկեղծ ու դուրանորդ, ընթերցողին անմիջական հաղորդականության մեջ պահող ինքնաբերական խոսք: Որպես ասվածի առիավառք՝ վկայաբերենք ընդամենը մեկ արդասացություն: «Չկա անբարոյականության ավելի ճշմարիտ դրսևորում, քան կաշառակեր դատավորի մեղադրական վճիռն ամբաստանյալ կաշառակերի նկատմամբ»:

Կա՞ սրանից առավել գորեղ հոգեբանական գրեթե կեղծիքի եւ չարաշահության դեմ: Հոգով եւ ապրումով, անկաշկանդ զգացողությամբ շարադրված լինելը գրքի հաջողության գրավականներից է: Գնահատելի է, որ հեղինակ-ընթերցող հարաբերության մեջ ընթերցողը սոսկ ընդունողը չէ աստվածաշնչյան դրույթների ու վկայաբերումների, բարոյական սկզբունքների, փիլիսոփայական բազմաբնույթ հարցերի, արդի իրավունքի հիմնադրարարների, այլ, ինչպես հեղինակն է կամենում, ընթերցողն սկսում է խորհել, ինչ-ինչ հարցերում բանավիճել, երբեմն չհամաձայնել արծարծված մտքերին:

Գոյություն ունեն գրված և չգրված օրենքներ: Չգրված օրենքներն ինքնին ավանդույթներն են, որոնք հիմնականում աստվածաշնչյան հիմք ունեն: Ներկաբար, օրենքներ գրելիս անհրաժեշտ է ուշադրության ամենի նաև ավանդույթի ուժը: Կյանքն ունի իր ընդհանուր օրենքները, ազգերը և ժողովուրդները՝ իրենց մասնակի օրենքները, քրիստոնեական հիմքը կանգնեցնի դրանք, կմեղմի անհամարեղելիությունը: Այս հանգամանքը կարևոր է նաև համաշխարհայնացման ընդառաջ գնալիս ցնցումներից գերծ մնալու համար:

Շարադրանքում ամկա են իմաստաբանորեն խորը և դիպուկ արտահայտություններ, ինչպես «Աստված-մարդ-սողուն» հիերարխիա, որն Աստծո բացակայության պայմաններում վերածվում է «սողուն-մարդ» շղթայի:

Խիստ հետաքրքրական է գրքի «Ներգոյություն» մասը: Նրանում ամկա է նրբանկատ ու ներդրամիտ հավատալի խոսքը՝ ուղղված նաև անհավատներին: Այսպես՝ «Ով ընդունում է Քրիստոսին որպես բարոյական նորմերի կրող և ուսուցիչ, դրանով իսկ, խոստովանի թե ոչ, ենթագիտակցաբար ճանաչում է Քրիստոսին որպես Աստված: Ճանաչում է, որովհետև իր մեջ ներդրած է այդ ճանաչումը, չի գիտակցում, որովհետև աղավաղված են պատկերացումները»:

Գիրքն ընթերցողին կմտքեցնի իսկական քրիստոնյայի նկարագրին, որին կյանքում նմանվելը այդքան էլ դյուրին չէ: Այն աստվածաբաններին կսովորեցնի իրավունքի հիմունքներ, իրավաբաններին՝ աստվածաբանություն: Գիրքն ունի դաստիարակչական մեծ նշանակություն նաև արդի ներկայապատկերության համար: Հայրեր և որդիներ սերնդեսերունդ փոխանցվող վեճն աստվածաշնչական «Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես» պատվիրանով համարեղելիություն է ձեռք բերում:

Աշխատությունը համառոտակի ներկայացնելիս կարելի է ասել. «Զեյս ի քոյոց Ջեզ մատուցանեմք»: Այսինքն՝ Աստծու կողմից մարդուն տրված ազատության իրավունքը տնօրինում է ինքը՝ մարդը: Մարդու կողմից իշխանությանը տրվում է իշխանություն ազատորեն: Այն միաժամանակ և՛ իրավունք է, և՛ պարտավորություն: Եթե իշխանությունները ծառայեն մարդկանց, ապա մարդիկ էլ այդ իրավունքը, որպես ծառայություն, կփոխանցեն Աստծուն:

Ազատության հենքի վրա տրված իշխանությունը հավասարազոր է ծառայության: Ծառայություն, որն իշխանությունը պետք է ցուցաբերի մարդկանց հանդեպ, իսկ մարդը՝ որպես տուրք հատուցի Բարձրալին: Այսպիսով, իշխանությունն ազատ կամքի դրսևորման արդյունք է, որը սիրով տրված է Աստծու կողմից: Աստված սեր է, և սիրո քարոզն է օրենքի ու իրավունքի հիմքը, և Աստծո կողմից ի վերուստ տրված պատվիրանները թրծված են սիրով: Գիրքը մեկ անգամ ևս հավաստում է, որ օրենքն է մարդու համար, և ոչ թե մարդը՝ օրենքի:

Նույնով հեք, որ նման քայլերով ընթացող հեղինակը որպես այս գրքի բնական շարունակություն պիտի ստեղծի այնպիսի մի աշխատություն, որում արդեն իսկ կմտնան իսկապես իրականությանը հարիւր դրոշմներ: Ինչպես մեր հայրերը քրիստոնեությանն ազգային շունչ ու ոգի հաղորդեցին, այնպես էլ հեղինակը համամարդկային մտքեցումները կմասնավորեցնի մեր ժողովրդի համար, ժողովուրդ, որը մարտիրոսված, վավերական քրիստոնյա է:


Նորանկախ պետության խնդիրներն ու պահանջներն արմատապես տարբերվում են պետականության ավանդույթ ունեցող ժողովուրդներից: Իրավական պետություն ստեղծե-

լու մեր ջանքերն ապարդյուն կլինեն, եթե մենք չառաջնորդվենք գրքում արծարծված գաղափարներով:

Այսօրեղ ուզում ենք վկայաբերել Վեհափառ Հոր դիպուկ բնորոշումը. «Գիրքը կոչում է պատասխանատվության, որը պարի օգնի ազգային-հասարակական մեր կյանքից մերժել հոգեզուրկ ընթացքները՝ իբրև փակուղի, ապրել առ Աստված հավատով ու վստահությամբ»: Նորին Սրբության այս բնորոշումը նաև հանձնարարական է ուղղված հոգևորականությանը, որպեսզի այսուհետև ևս նվիրումով, հանձնակարարության մղումով իրականացնենք մեզ վստահված ազգանվեր սպասավորությունը և Եկեղեցին կառուցենք մեր սրբերում, որպեսզի 2000-ամյա քրիստոնյա մեր ժողովուրդը ներծծվի աստվածաշնչական ճշմարտություններով և կառուցի իր պետությունը, պետություն, որտեղ օրենքները կլինեն հորիզոնական, հոգևորը՝ ուղղահայաց: Ահավասիկ այս է 21-րդ դարում մեր ազգի առաքելությունը:

Վերջում մեր սրտաբուխ մաղթանքներն ա շնորհավորանքի ջերմ խոսքերն ենք ուղղում հեղինակին՝ ծննդյան 60-ամյակի առթիվ:

Միրելի Ռաֆայել Պապայան, Ձեր արդյունավոր կյանքի հավատարիքն է այս սրվար հատորը: Բարձրյալն Աստված թող այսուհետև ևս սրել ծագործական ուժ ու եռանդ պարգևի Ձեզ, որպեսզի Տիրոջ բարեխնամ Աջի հովանյալ կարողանաք սրել ձեր բարձրարժեք նոր գործեր և նվաճել հոգևոր-իմացական նորանոր բարձունքներ: Ձեզ և Ձեր ընտանիքի անդամների արևշատության համար հայցում ենք Տիրոջ գորակցությունն ու օրհնությունները: Ամեն:



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ահա ավարտին է մոտենում ես մեկ տարի: Ափսոսանքով, թե ուրախությամբ հրաժեշտ ենք փալիս արդեն հին փարվան և հույսով ու լավատեսությամբ մուտք գործում նոր՝ 2003 թվական: Կանգնած ենք հին փարվա վերջին և նորի սկզբին: Մի իրադարձություն, որ յուրաքանչյուր բանական մարդու խորհելու և մտորելու առիթ է փալիս: Ամեն մեկս ակամա մտվոյի հայում ենք թե՛ 2002 թվականում և թե՛ ընդհանրապես մեր ապրած կյանքում անհատական թե՛ հավաքական առումով հաջողված կամ ընդհակառակը՝ ձախողված ձեռնարկումներին կամ իրադարձություններին: Մի պահ, երբ մարդ հաշվեփու է լինում իր և Աստծո առաջ, ցավով է լցվում թերացումների համար և հայցում Տիրոջ օգնականությունը՝ ապագայի հանդեպ ունեցած հույսերի և փեսիլքների իրականացման գործում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունն ու պաշտոնությունը, Ս. Էջմիածնի հոգևոր կրթօջախների ուսանողությունը, նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ Կաթողիկոսի, ինչպես միշտ դեկտեմբերի 31-ի երեկոյան հավաքվել էր ավանդական դարձած սիրո սեղանի շուրջ՝ հրաժեշտ փալտ անցնող փարվան և նոր իղձերով ու ցանկություններով Վեհափառ Հայրապետի օրհնությամբ թևակոխելու 2003 թվական: Առ Բարձր-յալը հղված Տերունական աղոթքով և Հայաստանի Հանրապետության հիմնով ու Գևորգյան Հոգևոր Ծննդարանի քայլերգով սկսվեց ամառոքյա հանդիսությունը:

Ամառոքյա երեկոն փարեմուտի իր խոսքով բացեց Գևորգյան Հոգևոր Ծննդարանի փետուջ Արժանապարհիվ Տ. Եղիշե ավ. քեն, Սարգսյանը՝ ասելով.

«Մի քանի ժամից 2002 թվականը կդառնա պատմություն: Եթե ընդունենք, որ պատմությունը փաստերի, կատարած-չկատարած գործերի արձանագրումն է ուրեմն թույլ տվեք փարեմուտի այս երեկոյին երադարձ մի հայացք ներել անցնող փարվա պատմությանը:

2002 թվականը Վեհափառությանդ ղեկավարությամբ Մայր Աթոռի, Հայոց Եկեղեցու և Գևորգյան Հոգևոր Ծննդարանի համար եղավ արդյունաշատ: 2002 թվականին էր, որ Մորությանդ ջանքերով Գևորգյան Հոգևոր Ծննդարանը Մ Կառավարության որոշմամբ ճանաչվեց որպես աստվածաբանական համալսարան: Կատարվեց նավակարգիդ նորակառույց և նորոգված մի շարք եկեղեցիների: Նույնը Գևորգյան Հոգևոր Ծննդարանում եղավ առաջ: Ավարտաճառերի պաշտպանությամբ շրջանավարտ մի խումբ սաներ կգան լրացնելու Մայր Աթոռի միաբանության շարքերը: Իրար երկից հիմնովին նորոգվում և նոր փեսք են ստա-

նում Մայր Աթոռի բոլոր շինությունները: Տարբը հասել է Գևորգյան Նոգևոր Ծեմարանի մասնաշենքի հիմնական նորոգմանը:

Մոբիլության առաքնությունում և ամենօրյա հեղինակական աշխատանքի ստեղծման Մայր Աթոռի միաբանության շարքերը վերջին երկու տարիների ընթացքում ռամալում են նոսրացում, խոստումնալից ու Սահակ Մեսրոպյան օրհնյալ ժամանակների օրհնակով նվիրական զանազան հասարակություններում իրենց ուսումը և լեզուների իմացությունն ավելի կարարյալ դարձնող սանկում, ոտներ վերադառնալու են Մայր Աթոռ և իրեն նվիրումով, ծառայությամբ օգրում, ոտներ վերադառնալու են Մայր Աթոռում այսպես ձեռնադրություններ եղել, որոնց թիվն այսօր անցնում է հինգ տասնյակից: Այնպիսի հիշողությունն գնում է 17-րդ դարի սկիզբը, երբ Մովսես Կաթողիկոսին հաջորդում են Փրիպպոս Աղբակեցի, Կակոթ Զոդայեցի Կայրապետները: Երանց ժամանակների համար էր Դավիթ Բաղիշեցին գրում. «Ի մերում ժամանակին կրկին Լուսաւորից եղեն Ամենայն Հայոց, զի ժամանակն սոցա աջօր մերովք տեսանմք զՍուրբ Էջիածին անթի վարդապետը և արքայք և խարազանագգեստք կրօնաւորք, աւելի քան հինգհարիւր»:

Ժողովուրդների և նույնիսկ հասարակությունների պարմությունն ունի տեղափոխության և մակընթացության շրջաններ: Հայոց Եկեղեցին նույնպես մեր ողջ պարմության ընթացքում ունեցել է վերընթացներ, դժբախտաբար նաև դժվարին շրջաններ:

Փառք Արարիկն, որ Ձերդ Մոբության Հայրապետության շրջանում սկսվել է մեր Ս. Եկեղեցու, Հայոց Հայրապետության վերելքի մի նոր շրջան: Ծեմարանի հանդեպ Ձերդ Մոբության նպատակալից ուղղությունը համոզում են բոլորիս, որ ապագայում, երբ պարմություն կդառնան Վեհափառությանը գործունեությունը, ժամանակի պարմագիրը միանշանակ պիտի հաստատի և գրի, որ ի Հայրապետության Տ. Տ. Գարեգին Երկրորդ շինարար մեծագործ Հայրապետի Ս. Էջիածնում հավաքով և գիտությամբ գինված շնորհալի վեդարավորների մի սրվար բանակ կար:

Վեհափառ Տեղ, կանգնած ենք անցնող և գալիք՝ 2003 հորելյանական տարվա շնին: Թույլ տվեք տարեմուտի այս երեկոյին բոլոր ներկաների, ինչու չէ՛ նաև մեր ողջ ժողովրդի անունից շնորհավորել Ձերդ Մոբությանը, քանզի Ձեր երջանկահիշարակ նախորդների Էջիածնապաշտությունը, Հայրենապաշտությունը և իմաստությունը Ձեր հոգում և գիտակցության մեջ ունենալով, առաքնություն եք մեր Ս. Եկեղեցին և ժողովուրդը Հայրենիքում և Միյուրքում մի անգամ ևս հաստատելով, որ «ի վերա Աթոյն և Ս. Էջիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կար»:

Ուրեմն, թույլ տվեք հոտնկայս քաժակ բարձրացնել հանուն Գևորգյան Նոգևոր Ծեմարանի դասախոսների, սաների և այստեղ ներկա եղողների, ջերմագին շնորհավորել Մոբությանը գալիք Ամանորը և Սուրբ Ծննդյան նվիրական տոները՝ մաղթելով քաջառողջություն և երջանկի Հովվապետություն ի փառս և ի շինություն երկհազարամյա մեր Ս. Եկեղեցու»:

Արժանապատիվ Տեր Հոր խոսքից եկաւ, հանուն միաբանության, բարեմաղթանքի շնորհավորական սրտի խոսք ասաց Ս. Էջմիածնի ավագագույն հոգևորականներից Երևանի պետական ինստիտուտի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Շահին արքեպիսկոպոսը:

«Վեհափառ Հայրապետ Ամենայն հայոց

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Գևորգյան Հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմի և ուսանողության անունով, Ս. Աթոռո պաշտոնյաներու և ծառայողներու անունով կշնորհավորենք Ձերդ Սրբության Ամանորդ՝ ի սրտե մաղթելով, որ նոր սկսող տարին արձանագրե Ձեր կյանքին մեջ նոր հաղթանակներ, փառավոր հաջողություններ և եկեղեցաշին իրագործումներ:

Մենք փառք կուտանք Ամենակալ Աստուծո, որ վերջացող այս տարին եղավ փառավոր տարի մը, որոս ընթացքին Ձերդ Սրբությունը Մայր Աթոռ հրավիրեց և շրջապատվեցավ ազգանվեր ու բարեպաշտ բարերարներով, որոնք Ձեր երազներուն մարմին տվին և ուխտանվեր իրենց կյանքը ձոխացուցին բարեգործության:

Ինչպես անցնող տարիներուն, այս տարի եւ, իբրև հովիվ բարի, Ձերդ Սրբությունը այցի գնաց իր հորին միջև ծայրագույն Արևելք, «ճանչցա զիրս և ճանաչեցա յիրոցն»:

Հայաստանի կրթության դաշտին մեջ Ձերդ Սրբությունը մաքրեց մեր դպրոցները անաստվածության վերջին աղբերեն և հաջողեցավ հայ Առաքելական Եկեղեցիի դարավոր իմաստության, աստվածաշունչ պատգամին և սիրո ոգիին առջև բանալ հայ մանուկներուն սիրտներուն դռները:

Արարարյան Հայրապետական թեմի առաջնորդական պատասխանատվության օրերուն ձեռնարկված Հայրորդաց տունները Կաթողիկոսական Ձեր հոգածության շնորհիվ մեծցան, ծաղկեցան և մանուկներու նոր սերունդ մը կրթեցին, որ ծծեց Զրիստոսաշունչ հայ մշակույթի կաթը և դարձավ մեծ խոստում՝ պսակելով ազգային ու եկեղեցականը ամեն հայ հոգիին մեջ:

Իսկ Մայր Աթոռն և ներս Գևորգյան Հոգևոր ճեմարանը ճանցվեցավ բարձրագույն ուսման կրթական հաստատություն մը՝ յորս մասնագիտական ամբիոններով:

Զույր Եկեղեցիներուն հետ Ձերդ Վեհափառությունը սերտացուց և ձոխացուց կապերը՝ առաքելով միջկեղեցական կամ Եկեղեցիներու կողմն կազմակերպված միջազգային ժողովներուն Ձեր ենթակայացուցիչները և պատգամները:

Ձեր մեծ նախորդներուն նման, ինչպես Զաքարիա և Սիմեոն երջանկահիշատակ Կաթողիկոսները, Դուք նոր կյանք տվիք Ս. Էջմիածնի տպարանին, հրատարակությունները ձոխացան հայագիտական, եկեղեցագիտական, կրոնագիտական և պատմագիտական հիանալի հրատարակություններով, որոնք ուրախացուցին Ակադեմիան իր ինստիտուտներով, համալսարանն իր ֆակուլտետներով և Մայր Աթոռն իր թեմերով:

Այս տարի Ձերդ Սրբությունը շարունակեց շինարարությունը Մայր Աթոռի սահմաններում մեջ՝ հիմն դնելով մեծ կառույցին, որ պիտի ըլլա միաբանության նոր թաղամասը: Դուք նախաձեռնեցիք հայագիտական ուշխարանքի նոր կենտրոնի մը հիմնարկներին, զոր նվիրեցիք Ձեր երջանկահիշատակ նախորդի հիշատակին:

Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց,

Կաղոթենք մեր հայրերու Աստուծուն, որ ծաղկե Ձեր գործության գավազանը, որ երկար տարիներ շարունակեք ամրացնել Մայր Աթոռը, որպեսզի անոր ճաճանչումով լուսավորվի մեր ժողովուրդին քրիստոնյա հավատքը և ան՝ հոգի և հոգիով հառաջանա դեպի հավիտենական հույսը»:

Սրբազան Հոր սրբաբուխ խոսքից հետո ճեմարանականների կարարմամբ հնչեց Զրոքեկյաց եղեկեայզ «Ուվ գարմառալի» շարականը: Այնուհետև դասախոսության անունից շնորհավորական խոսք ասաց եղևոր կրթօջախների սիրված դասախոս, պրոֆեսոր Պողոս Խաչատրյանը:

Հաշված ժամեր ու ռոպեներ անց կվերջավորվի հին տարին և ծնունդ կառնի նոր՝ 2003 թվականը, որ ակնկալիքով և տենչանքով է լցրել երագող հոգիները, նաև տխրությամբ ու ապաշավանքով՝ կորուստների ու չարվածի համար: Բայց, մանավանդ, ուրախությունն ու սպասումն են թևածում մեր սրտերում, որովհետև անցյալի հետ քաժանման ցավից ավելի բերկրալի է նորի հետ հանդիպումը:

Մինչ կսկսվի նոր տարին՝ խոհական մարդն ինքնաբերաբար ներսուզվում և փրկվում է այն գաղափարին, թե ինչ տվեց 2002 թվականը: Երկրի համար թող այդ հաշվեկշիռը կատարեն վիճակագիրները, տնտեսության ու քաղաքականության բնագավառի մարդիկ: Իսկ ինչ վերաբերում է հայ հոգևոր-եկեղեցական կյանքին, մենք ի գործ ենք դիպել և արձանագրել մի շարք հաջողություններ:

Ամենից առաջ կուզենայի ընդգծել այն դերը, որ անցնող տարում կատարել է Մայր Աթոռը: Ավելի ու ավելի է զգացվում Եկեղեցու կենտրոն շունչը, որ տարածվում է ողջ Հանրապետության վրա և նպաստում մեր նորանկախ երկրի պետականության ամրապնդմանը: Ծավալվել է եկեղեցաշինության գործը՝ հետզհետե ընդգրկելով նաև Հանրապետության մոտացված ծայրամասերը՝ Աստու խոսքին զանկոտ մնացած գյուղերը: Այդ շարժումն իր հետագա ընթացքի մեջ, անշուշտ, կօժանդակի մեր ժողովրդի մոլորյալ գավալներին՝ գիտակցաբար ետ կանգնելու օրադասնուր անկոչ աղանդավորներից և հոգով ու հավատով կապվելու Հայոց Առաքելական Եկեղեցու՝ դարերով վավերացված ու սրբազործված դավանանքին: Մուրք Էջմիածինն այդ անխորոք ու անսրելիյուր ճանապարհի ջահակիրն է՝ Ամենայն Հայոց Ազգրեկիր Կաթողիկոսի՝ անխոնք Քարեզին Երկրորդ Վեհափառ Հայրապետի առաքնորդությամբ:

Մեզ զարմացնում ու հիացնում է պարզապես Վեհափառի լայնամասշտաբ և հեղինակական գործունեությունը, որ ծավալվում է ոչ միայն Մայր Հայրենիքում, այլև իր ծիրի մեջ է առել ի սփյուռս աշխարհի ցրված հայությանը:

Մենք՝ դասախոսներս, Վեհափառին և Էջմիածնի միաբանությանն առնչվում ենք հարկապես Գևորգյան Հոգևոր Ճեմարանով և Վազգենյան Դպրանոցով: Չեմ կարող չընդգծել այն անդադրում, հոգածու վերաբերմունքը, որ Հայոց Հայրապետը դրսևորում է կրթական գործունեության նկատմամբ: Ինչպե՞ս է հաջողում իր բազմազգաղ ժամանակից օրեր ու ժամեր հարկացնել և գործնական մասնակցություն բերել Ս. Էջմիածնի ուսումնական օբյեկտների ներքին կյանքին: Այդ ասարեզում էական խնդիրներ առաջադրողը և նրանց լուծման հարմար տարբերակներ առաջարկողը Վեհափառն ինքն է՝ միշտ ունկնդիր նաև տեսչության ու դասախոսների ձայնին:

Դրա Հոգևոր Ճեմարանը կանգնած է զարգացման նոր հեռանկարի առաջ. Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հոգևոր այս հաստատությանը շնորհել է համալսարանի կարգավիճակ: Դա անհասի պարզավորեցնող է միաժամանակ ճանաչումն է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտների կրթական բարձր որակի: Նոր կարգավիճակն ինքնին պահանջ է դնում առանց կրրուկ փոփոխությունների լրացնել, ճշգրիտ ու բարելավել դասավանդվող առարկաների ցանկը, վերանայել ուսումնական ծրագրերը, վերակառուցվել ու համալսարանական արդի պահանջներն այնպես ներառել, որ նրանց ոչ թե հակադրվեն, այլ ներհյուսվեն ու հարստացնեն Ճեմարանի փառապանծ անցյալի ավանդները: Համոզված ենք՝ գալիք առաջընթացին ուղղված այս փորձությունը Ճեմարան-Համալսարանը հաջողությամբ կհաղթահարի:

Այդ ուղին պարզավորեցնող է ոչ միայն դասախոսներին, այլև մեր սաներին: Իմ պաշտոնակիցների անունից կցանկանայի, որ նրանք չխնայեն իրենց ժամանակն ու ընդունակությունները, Հայ Եկեղեցու ապագա նվիրյալի խորհրդով յուրացնեն գիտելիքների այն մեծ պաշարը, որը նրանց կդարձնի մտավոր պարզան մակարդակով հոգևոր գործիչներ: Դասախոսներս մեզ մեծապես վարձատրված ենք զգում՝ ականապետը լինելով մեր նախկին սաների հաջողություններին: Ինչպե՞ս թուրախանաս, երբ մեր աջքի առաջ նրանք արժանիորեն հոգևոր ծառայությանն են նվիրվում, հեղգհեղեղ ճանաչելի դառնում ու գնահատվում իրենց գործի մեջ:

Ճնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ, երկա՜ր, երկա՜ր շաբաթն կյանք Վեհափառ Հայրապետին, իսկ Ձեզ բոլորիդ՝ հաջողություններ և երջանկություն:

Այնուհետև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողության անունից Ամանորի առիթով շնորհավորանքի խոսք ասաց Գ. յսարանի սան Էդվարդ դավի Խոսեֆյանը:

«Վեհափառ Տեր,

Գերազանց Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, Բարե-
շնորհ սարկավազներ, հարգելի դասախոսներ, սիրելի ձեռնարանական եղբայր-
ներ և հարգարժան հյուրեր:

Այսօր մեկ անգամ ես Ամանորի և Զրիարոսի հրաշափառ Սուրբ Ծննդյան տո-
ների խորհուրդն իր վրա է բնեռում քրիստոնյա աշխարհի և ողջ մարդկության
հայացքները:

Այսօր մեկ անգամ ես, երբ ապրում ենք Ամանորի տոնական խորհրդով և
սրտի ուրախ տրոփով սպասում ենք ժամ առ ժամ մոտենող Զրիարոսի հրաշա-
փառ Ծննդյանն ու Նրա հոգևորոգ խորհրդին, ի մի ենք եկել իբրև զավակներդ
Ձերդ Սրբության՝ մեր հոգու և սրտի որդիական քերթ, անկեղծ շնորհավորանք
ներդ Ձեզ բնծայելու:

Վեհափառ Տեր, այսօր, հավաքված Ամանորի ավանդական այս սեղանի
շուրջ, նոր հույսերով, նոր երազներով, զայիքի նկատմամբ վառ և անքեկանելի
հավատով ենք դիմավորում սպասվող նոր տարին, հավատ, որ մեզ է փոխանց-
վում Ձեզանից՝ մեր շնորհագարդ Հայրապետից, մեր ավագ հոգևոր հայրերից և
եղբայրներից, մեր սիրելի ու սնուցող Հոգևոր Ծննդունից և Նրա դասախոսա-
կան կազմից:

Այսօր մեզ՝ Ծննդունի սաներին, մեծ պարիվ է վիճակվել Վեհափառ Տիրոջ և
մյուս հարգարժան ներկաների հեղ մի հարկի ներքո հրաժեշտ տալ 2002 թ. և
ստանալ Ձերդ Սրբության Ամանորյա բարեմաղթանքը: Այս հոգեհարազար
մթերոդորդ մեկ անգամ ես պարտավորեցնում է մեզ անմեացորդ նվիրվել Հա-
յաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Վեհափառ Տեր, իբրև Ձերդ Սրբության հոգեզավակներ ու Ձեր Հայրապետա-
կան շրջանի առաջին սաներ, մենք մեր պարտքն ենք համարում զինվորագրվել
Ձերդ Վեհափառության պատգամներին և անսակարկ և ինքնամոռաց նվիրումով
լծակից և համեստ օգնականներդ լինել Ձեզ՝ մեր Եկեղեցու առաքելության իրակա-
նացման համար Ձեր բոլոր ձեռնարկներին, իսկ դրա համար մեզ այսօր հարկա-
վոր է ուսանել, ուսանել և դարձյալ ուսանել, որպեսզի արժանավոր զավակներդ
դառնանք Ձերդ Վեհափառության և ծառաներդ հավիրենական Եղևորտույթ-
յան:

Այս ներկաներին բարեմաղթանքի իր խոսքն ուղղեց Գուգարաց թեմի առաջնորդ Ս.
Սեպուհ եպս. Չուլջանը: Երազարժ մի հայացք ներելով թե՛ այս և թե՛ նախորդ տարիներ-
ին, Սրբազան Հայրն ի մասնավորի ասաց.

Իրավամբ հաշվելովության օր է այսօր, յուրաքանչյուր տարվա ավարտին Հա-
յոց Հայրապետի շուրջ համախմբված փորձում ենք գնահատական տալ անցյալի
մեր գործունեությանը և հաջորդ տարվա համար ու զայիք տարվա համար բարե-
մաղթություններ անել: Ծառ գեղեցիկ է և հիասքանչ, երբ սիրտ սեղանի շուրջ տո-
նում ենք այս օրը և լսում այն գեղեցիկ խոսքերը, որ այսօր իրար կմաղթենք: Այս

ամենը շատ լավ է ու բարի, սակայն մենք բոլորս էլ գիտակցում ենք, թե անցնող տարիներին ինչ չենք արել և ինչ պետք է անենք այսօր:

Ծուրաբանցորս գիտենք, թե ինչ մարտահրավերներ կան ներկված Հայ Եկեղեցու առջև, աթեիզմին հաջորդող տարրեր զաղափարներով Հայաստանը լցվել է օտարածին ու օտարամուր ուժերով, և մենք հայ եկեղեցականներով պարտավոր ենք դիմակայել, պայքարել ու կարողանալ հաղթահարել և մեր ռազմավարությամբ մենք պետք է կարողանանք հայ ժողովրդի միասնականությունը, ամբողջականությունը ապահովել: Մա մեր յուրաքանչյուրիս պարտքն է, մենք պարտավոր ենք գեթ դժվարությամբ, բայց հաստատուն քայլերով ընթանալ դեպի առաջ:

Հայ Եկեղեցին, ինչպես ձեզանից շատերն ասացին, այն սրբություն սրբոցն է Ս. Էջմիածնով, Ամենայն Հայոց Հայրապետով, որ իրավունք չունի հանդուրժելու այն ուժերին, որոնք հայ ժողովրդի միասնականությունը սասանում և մեր ազգային դիմագիծը խաթարում են: Ուստի մեր պարտքն է համախմբված թե՛ հոգևորական, թե՛ աշխարհական, թե՛ քաղաքական գործիչ և թե՛ մտավորականներ, ձեռք ձեռքի տված տեր կանգնենք մեր ազգային արժեքներին: Այս է հրամայականը 2003 թվականի»:

Երեկոյի ուրախությունը բազմապարկվեց կաղանջեցեցի ուրախ կատակներով և շա-
հումների ավանդական վիճակահանությամբ:

Ամանորի ուրախ և հոգևից խոսքերով զարդարված հանդիսության մասնակիցներն անհամբերությամբ էին սպասում Նորին Սրբության Հայրապետական պարգամին ու շնորհավորանքներին, և որ զալիք նոր փարին իրենց համար սկսվի մեր երանելի Զանաճայապետներից եկող հայրապետական օրհնությամբ և հանդիսության վերջում քերմ և եղանորդ հորդորով ներկաներիս իր հայրապետական մաղթանքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Միեկի Սրբազան Հայրեր, հոգևոր եղբայրներ, հոգևոր սպասավորներ, Գե-
րագույն Հոգևոր Խորհրդի աշխարհական պատվարժան անդամներ, հարգա-
րժան դասախոսներ, սիրելի պաշտոնեություն և շատ սիրելի սաներ:

Առաջին զգացումն առ Աստված գոհաբանական զգացումն է երբ հրաժեշտ ենք տալիս 2002 թվականին, մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Իր հոգածության ներքո շնորհեց մեզ այս պարզել, խաղաղ կյանքի պայմաններում անցկացնել ևս մեկ տարի, որպես Եկեղեցի, որպես ազգ և հայրենիք:

Ես փառք եմ տալիս Աստծուն այս երեկոյի համար նաև, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընտանիքն ի մի է բերել, ամբողջական, գոհության զգացումով, լավ տրամադրությամբ դիմավորելու նոր տարին:

Ուրախ եմ, որ այս սեղանի շուրջ են մեր թեմակալ առաքնորդները, միաբան եկեղեցականները, որոնք զանազան թեմերում իրենց ծառայությունն են մատուցում, մեր Վիրահայոց թեմի առաքնորդական տնտեսապետ, Սփյուռքից՝ Միազյալ Լահանգներում սպասավորող եկեղեցական Հայր Օշականը, նաև բոլոր Եկեղեցի-

դա շնորհիվ Հայաստանի մեր թեմակալ առաջնորդների է նրանց իշխանության ներքո գործող հոգևոր սպասավորների:

Հույս ունեմ, որ այդ աշխատանքներն առավել պիտի կազմակերպվեն առաջիկա տարիներին և արդյունքները մեզ ամենքիս համար ավելի ուրախալի պիտի լինեն, որովհետև մեր Եկեղեցին պիտի տեսնենք հասարակված մեր ժողովրդի կյանքում, պիտի տեսնենք հավատքը մեր ժողովրդի կյանքի մաս դարձած և պիտի տեսնենք այդ աղոթքի արդյունքում օրհնություն է իջնում մեր ժողովրդի վրա և ժպիտը, հոգու բերկրանքն ու ցնծությունը առավել տեղ են զբաղեցնում մեր կյանքից ներս:

Ես չեմ ուզում անդրադառնալ այն ամենին, ինչ որ անցնող տարում կատարվեց: Այսպես կամ այնպես ամենքդ տեսնուք, թե ինչպես աշխատեցինք բոլորս, ինչ ձեռքբերումներ ունեցանք, որտեղ թերացանք, ուր տկարացանք, ինչ չափով վրիպումներ ունեցանք և անհաջողություններ մեր կյանքում: Ես կուզեմ այսօր, իմ հայացքն ուղղած 2003 թվականին, առավել չափով անդրադառնալ այս տարվա մեր անելիքներին, որ հարկանշված է Մայր աթոռ Ս. Էջմիածնի օծման 1700-ամյա տարեդարձով: Եվ նախախնամական է թերևս, որ հորեկյանական տարիներ են իրարու հաջորդում, որոնք որ մեզ խանդավառում են, գոյեպնդում են, մղում ավելի խնամքով ծրագրելու մեր հեղափոխ աշխատանքը:

Ինձ համար հոգեկան մխիթարություն է և մեծ բավականություն, երբ մտածում եմ, որ առաջիկա տարում արդեն առաջին ծիծեռնները պիտի ելն գան, միաբաններ Ս. Էջմիածնի, որոնք տարիներ առաջ մեկնել են ուսման, բարեհաջող կերպով ավարտին են հասցնում իրենց ուսումնական արտասահմանյան ստացված աստիճանական համալսարաններում, և գալու են համալրելու մեր շարքերը և նոր ոգով, գիտելիքների ընդլայնված պաշարով իրենց օգտակարությունը բերելու այստեղ մեզ և մեր ժողովրդի զավակաց սպասավորությանը:

Ուրախություն և բերկրունք են իմ հոգուն հավելում նաև, երբ մտածում եմ, որ առաջիկա տարիներին մեծ թվով եկեղեցականներ պիտի ունենանք մեր Եկեղեցուց ներս՝ շնորհիվ այն դասընթացների, որ այսօր ընթանում են Երևանում նկարի ունեմ քահանայից պարտաստության դասընթացները: Մոյր 25 շնորհալի, խոստումնալից երիտասարդներ ունենք այնտեղ, որոնք որ համալսարանական կրթությամբ, ներքին համոզումով, հավատքի մղումով եկել են իրենց կյանքի ընթացքը շարունակելու այլևս Եկեղեցուց ներս, որպես եկեղեցական՝ իրենց սպասավորությունը բերելու մեր ժողովրդին:

Ինձ համար շատ գոյեպնդող է, որ մեր բարերար զավակներ գործակց են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հավատում են Ս. Էջմիածնի առաքելությանը, որդեգրած ընթացքին և սատար են կանգնում և ամեն կերպ աջակցում, որպեսզի մենք կարողանանք ավելիով արդյունքներ արձանագրել, որովհետև այդ արդյունքները կարճացնում են այն ճանապարհը, որ մեր Եկեղեցու ամբողջությունը, լիարժեքությունն է կազմում:

Եւ պարտք եմ զգում իմ խղճի առջև այս պահին երկինք աղոթք բարձրացնել բարեխառն մեր հայրողիների համար, որոնք որ հաջողությունների մեջ հիմնական մասն են բաժին ունենում:

Խոսքս շատ չափերի երկարեմ, ինչպես սասացի: Առաջիկա տարին Ս. Էջմիածնի օծման 1700-ամյակն է, և սա առավել պարտավորությունների տակ է դնում մեզ առաջին, որպեսզի յուրաքանչյուր մեր հերթին կարողանանք լսել մեր ուժերը, մենք, որպեսզի յուրաքանչյուր մեր հերթին անբավարար են, այդ ուժերը պետք է եռապատկել, որ որովհետև այդ ուժերն անբավարար են, այդ ուժերը պետք է եռապատկել, որ կարողանանք ինչ-որ չափով գոհացնել Ժամանակավորապես, արժանապատիվ գոհանալով մեր կարողանալը կարողանալը լրացնել, որ այսօր ունի մեր Եկեղեցին մեր ազգի, մեր հայրենիքի նկատմամբ:

Չեմ կարող չանդադրադառնալ, որ շատ վճռական են մեր առաջիկա նախագահական և խորհրդարանական ընտրությունները, և օրեր առաջ տեղի ունեցած որոշումներից ապահովությունը զախի է զգոնության կոչելու, որպեսզի մենք լինենք մեր դիրքերում, հոգևոր առաջնորդի դիրքերում, ամենքս մեր տեղում հոգևոր հովիվ, թեմակալ առաջնորդ և Կաթողիկոս: Որպեսզի կարողանանք միշտ ուղիղ առաջնորդել, որ յուրաքանչյուր հայրողի հաշվելու լինի իր յուրաքանչյուր քայլին: Ես իմ աղոթքն եմ առ Աստված բարձրացնում, որպեսզի Տերը զորացնի այս առաքելության մեջ, որ մեր կողման առաքելությունն է և մեր ընթացքն է:

Առավել չափով մեր հույսը նոր հասնող սերունդն է, որ այսօր, որպես հոգևոր կրթական հաստատությանը սաներ, իրենց ուսումն են առնում մեր դասախոսների, մանկավարժների հոգածու խնամքի ներքո, նրանցից ստանալով անհրաժեշտ գիտելիքներ:

Ես իմ գնահատանքն եմ փոխանցում ձեզ ամենքիդ ձեր կարարած ծառայությանը համար, ձեր քերած ազնիվ աշխատանքի համար, որով շնանում է Հայ Առաքելական մեր Եկեղեցին և զորանում է իր առաքելության մեջ: Ամենքիդ անխափի՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, մեր սիրելի դասախոսներին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեականը, մեր թեմակալ առաջնորդներին և միաբաններին: Մեր գնահատանքի խոսքը վերաբերում է մեր տեղական տեղապետներին, որ հոգածությամբ, նախաձեռնողությամբ, հեղինակալորեն առաջ են տանում կրթական գործը: Գևորգյան Հոգևոր Ընկերություն, ինչպես նաև Սևանի Վազգենյան Դպրանոցում և Գյումրիի Ընծայարանում:

Աղոթք եմ առ Աստված բարձրացնում՝ հայցելով, որ Տերը խաղաղության մեջ պահի աշխարհը համայն, անվտանգ պահի մեր Հայաստան երկիրը և մեր Ժողովուրդն ի սփյուռս աշխարհի: Թող Տերը զորացնի նորոգությունն ազգերի և Եկեղեցիների միջև, և յուրաքանչյուր հաղափորեն տեսնենք մեր կյանքի առաքելությունն ու նաև տեսնենք այդ առաքելության մեջ մեր տեղն ու դերը և անսակարկ նվիրումով լծվենք մեր պարտականությանը կարարմանը, որ դրված է յուրաքանչյուրիս ուսերին Երկնային կողմից:

Ուրեմն, ուրախ տրամադրությամբ սկսեցինք հրաժեշտի արարողությունը 2002 թվականի, և այդ ուրախությունը թող դառնա ոգի, թող դառնա ներշնչանք ուժ և կարողություն նոր՝ 2003 թվականը ձեռքբերումների տարի դարձնելու:

Թող Տիրոջ Աջը և բարի աչքը մեզ բոլորիս վրա լինի, և նրա օրհնության մեջ մենք գորացած շենացնենք մեր երկիրը, գորացնենք ու երջանկացնենք, բարօր դարձնենք մեր ժողովրդի կյանքը և պայծառացնենք մեր Սուրբ Եկեղեցին: Տերը մեզ օգնական մեր դժվարին, բայց քաղցր ծառայության մեջ»:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պանսանիչ»-ով:

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԿԻՍՅԱՆ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ՈԳԵՂԵՆ ՈՒԺ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

2002 թ. դեկտեմբերի 26-ին, Պետրոս և Պողոս առաքյալների փոխին, Երևանում Ազգապատմարտի «ՈԳԵՂԵՆ ՈՒԺ» սոցիալ-մշակութային կենտրոնը սիրով կրկին հյուրընկալել էր հասարակայնության հեղիտյազուգիսներին, այս անգամ հանդիպման Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կուրալի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել հայա. Բաղդասարյանի և նույն թեմի քահանայից դասի հեղի նվիրված թեմի հոգևոր-մշակութային 6-ամյա գործունեությանը: Այդ առթիվ կազմակերպվել էր նաև Տ. Հովնան քահանա Մաթևոսյանի սերտագործությունների անդրանիկ ցուցադրությունը:

Ներկաները սիրով ու հետաքրքրությամբ ծանոթացան Ազգապատմարտի «Ոգեղեն ուժ» կենտրոնի բազմապիսի և արժեքավոր ցուցանմուշներին ու աշխատանքային 9-ամյա պատմության էջերին:

Ազգապատմարտի «Ոգեղեն ուժ» սոցիալ-մշակութային ինքնուրույն կենտրոնը գործում է հիվանդանոցում աջակցելով առաջին հերթին «Սյրեն» և բուժվերականգնողական կենտրոնների վիրավոր ազգապատմարտիկներին, հաշմանդամներին: Մեր նպատակներն են՝ Աստուծո ամենազոր սիրտ, հոգևոր ներգործության և հայոց ոգեղեն ուժի միջոցով մարդկանց օգնել՝ սպասնալու հոգևոր լիցքեր, նպաստել առողջական խնդիրներ ունեցողների բուժման ընթանալու վերականգնմանը, անդամախաբված վերջույթներով ծանր հաշմանդամներին, կենտրոն այցելողներին ամենօրյա աշխատանքով հաղորդակից դարձնել հայ մշակույթին, հայոց հաղթական ոգուն՝ կազմակերպելով ամենապարզ բնույթի միջոցառումներ, հանդիպումներ հոգևորականների, մտավորականների, հասարակական, պետական գործիչների և զինվորականների հետ:

Բարու ազգապատմարտն ընդդեմ չարի հարապն է, որի պատմական դասերի օրինակով մարդասիրական-հայրենասիրական դաստիարակչական կարևոր աշխատանքներ է կատարում Ազգապատմարտի «Ոգեղեն ուժ»-ը: Բազմապիսի վավերագրերի կողքին դանիճը զարդարում են նաև հայտնի արվեստագետների գեղանկարներն ու քանդակները: 1700-ամյա Բրիստոլյա Հայաստանը պատկերող ցուցանմուշների կողքին դանիճում լուստակարները պարունակում են նաև Կուրալի թեմի հոգևոր-մշակութային 6-ամյա գործունեության մասին: Ցուցադրվում են նաև Կուրալի մարզի պատմական ուխտավայրերն ու սրբավայրերը: Դանիճի բարձր պատերին երիտասարդ, դժբախտաբար՝ հաշմանդամ, շնորհաշատ Արիզա Արշուկյանի պատրաստած «Աստված սեր է» և «Փառք Բեզ, Տեր» մեծադիր գեղազարդ պատրաստներն իրենց վրա են հրավիրում բոլորի ուշադրությունը:

Տ. Հովնան քահանա Մաթևոսյանը ներկայացրեց իր 50 գունանկարներն ու գծանկարները, որոնց թեմաններն են՝ Տիրոջ սերը, հայրենի բնաշխարհը, եկեղեցիները, խաչքարերը, մեկ խոսքով՝ հոգևոր աշխարհը: Տ. Հովնան քահանան նաև երգեր է հորինում և կատարում դրանք: Ծանոթացել ենք նրա երկու ձայներիգներին, նրանցից առաջինում («Հրեշտակների պարը») փռել են գրել «Գարնան երգ», «Կանգ», «Հիշողություն», «Մարտուն», «Մեքսիկական բալլադ», «Միրո հեքիաթ», «Հանդիպում», «Թռիչք», «Էդրոս հիշարակին», «Խոս-

տրվանություն», «Դեպի երկինք» գործերը: Իսկ «Նոյինակային» խորագրված ծայնների-գում «Վազք», «Խննթը», «Մորմոք», «Ծնունդ», «Գաղթ», «Մի արտասվիր», «Մարդը հա-յելու առաջ», «Մտածող աչքեր», «Տիեզերքի կապը», «Երագանք», «Վերջալույս», «Նռու-ները» ստեղծագործություններն են:

Առաքել Սրբազանն իր սրտաբուխ խոսքում պարմեց Կոտայքի թեմի հոգևոր-մշակու-թային գործունեության մասին: Թեմի փարաձեռում գործող ութ եկեղեցիների հոգևոր հովիվ-ները, բացի եկեղեցիներում տեղի ունեցող ծիսական արարողություններից, կատարում են նաև հովվական այցելություններ փարբեր կրթական հաստատություններ, կազմակեր-պություններ, երկամսյակներ, ծերանոց և կալանավայրեր: Իսկ այն համայնքներում, որ-տեղ չկան գործող եկեղեցիներ, թեմակալ առաջնորդը և մյուս հոգևոր հայրերը մշակույթի տներում հաճախակի կազմակերպում են հանդիպումներ ժողովրդի հետ: Թեմում կատար-վում են նաև մեծ ծավալի եկեղեցաշինական աշխատանքներ:

Այնուհետև Սրբազան Հայրը պատասխանեց ներկաների կողմից տրված հարցերին: Խոսք ասաց նաև Հովնան քահանա Մաթևոսյանը, ինչպես նաև Ամինջի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հարություն քահանա Ավագյանը:

Ազատամարտի «Ոգեղեն ուժ» կենտրոնի չքնուցվող դահլիճում շատ ցուրտ էր: Սա-կայն Սրբազանի և արժանապատիվ հոգևոր հայրերի հոգու ջերմությունը փաթացել էր ներկաներին՝ ուրախության հուզիչ պահեր պարզեցնելով: Կյուրեղ քահանա Տալյանն իր խոս-քը նվիրեց օրվա հոգևոր խորհրդին՝ Պողոս և Պետրոս առաքյալների տոնին: Տ. Կյուրեղ քահանայի հետ հանդիպությանը մասնակցեցին և իրենց կատարումներով ողջունեցին Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու մանկանց երիտասարդաց երգչախմբի անդամները: Ի դեպ, մայիսի 28-ից հունիսի 3-ն անցկացված Լեհաստանի Հայնովկա քաղաքի ամենամյա եկեղեցական երաժշտության միջազգային 21-րդ փառատոնում Ջրվեժի Ս. Կաթողիկե եկե-ղեցու աղջիկների «Մաղմուս» երգչախմբին շնորհվել է առաջին մրցանակ:

Բնապուր գեղեցիկ ծայնով հրագդանցի Սաթենիկ Նահապետյանը «Հավուն, հա-վուն»-ի իր նուրբ կատարմամբ նույնպես ուրախացրեց բոլորին:

Հանդիսությունն ավարտվեց ներկա հոգևորականների աղոթքով և «Պահպանիչ»-ով:

Տարիներ շարունակ բազմաթիվ հյուրեր ընդունած Ազատամարտի «Ոգեղեն ուժ» առ-ցիալ-մշակութային կենտրոնում այդ սքանչելի օրը խորին երախտագիտության ու վեհ Մի-րո բարձր զգացումներն էին թևածում, քանզի «Միտոց է Մերը ճանաչվում, Մերը՝ Միրով միաբանվում»:

ՍԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազատամարտի «Ոգեղեն ուժ»

սոցիալ-մշակութային կենտրոնի հիմնադիր-տնօրեն



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆՍՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՅ ԴԵՍՊՄՆ ԴԱՎԻԹ ՊԵԼԵԳԻՆ

Հունվարի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսրայելի արքայազին գործերի նախարարության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի բաժանմունքի փոխսփյուռեն, դեսպան Դավիթ Պելեգին՝ ՀԱԱԳՆ փոխնախարար Ռուբեն Շուգարյանի և Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհենի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց աշխարհում և մասնավորապես Ս. Երկրում խաղաղության հաստատման խնդիրների շուրջ և նշվեց կրոնական պետերի կարևոր դերակատարությունն այս հարցում:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ գոհունակություն հայտնեց նրկու երկրների միջև ամկա հարաբերությունների ամուլությամբ՝ ընդգծելով, որ դրանց զարգացմանն իրենց նպաստն են բերում նաև հայ և հրեա համայնքները: Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց, որ Իսրայելի իշխանությունները, ընդառաջելով Ամենայն Հայոց Հայրապետի, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և բազմաթիվ այլ դիմումներին, ըստ այդմ վճռեցին պատրիարքությանը պատկան Պարոն Տեր կալվածքի խնդիրը՝ չանտեսելով պատրիարքության իրավունքներն ու շահերը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏՐ ՆԱՆԴԻՊԵՑ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՏ

Հունվարի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Էջմիածին քաղաքի մտավորականության հետ՝ Արմավիրի մարզպետ Ալբերտ Վերոյանի և Էջմիածնի քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանի գլխավորությամբ:

Հանդիպման նպատակն էր քննարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ փոխհամագործակցության այն ոլորտները, որոնք նպաստավոր կարող են լինել քաղաքի զարգացմանն ու բարգավաճմանը:

Այս առիթով Նորին Սրբությունը ներկաներին տեղեկացրեց մի շարք ծրագրերի մասին, որոնք առաջիկայում կյանքի կկոչվեն: Դրանցից է քաղաքի նախկին պիոներ պալատում Հայոտրյաց տուն հիմնելու ծրագիրը: Հայոց Հայրապետը գնահատանքով նշեց, որ ամերիկաբնակ բարերարներ տեր և տիկին Հարություն Թուֆայանները ոչ միայն ստանձնել են շինքի վերանորոգման և կանավորման, այլև հետագա գործունեության ծախսերը: Վեհափառ Հայրապետի հաղորդմամբ, առաջիկայում քաղաքի երեխաները Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կստանան նաև մեկ այլ նվեր՝ ընդարձակ մի խաղահրապարակ: Նախատեսվում է նաև քաղաքում ծերանոց կառուցել: Վեհափառ Հայրապետը հավաստեց, որ Մայր Աթոռը հնարավորինս կիրականացնի նաև այլ ծրագրեր:

Հանդիպման ընթացքում ներկաները առիթ ունեցան իրենց հարցերն ուղղելու Հայոց Հայրապետին և իրենց մրաժույթները կիսելու կրթական և սոցիալական զանազան խնդիրների շուրջ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՅՈՒՐԻ ԼՈՒԺԿՈՎԻՆ

Հունվարի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի գլխավորած պատվիրակությանը՝ Երևանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի և Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը և Մոսկվայի քաղաքապետն ուրախությամբ փաստեցին, որ վերջին տասը տարիներին առավել է ամրապնդվել հայ-ռուսական դարավոր բարեկամությունը:

Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Մոսկվայի քաղաքապետին՝ հայ համայնքի նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի համար:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ պրն Լուժկովը դրվատանքով խոսեց մոսկվաբնակ հայերի մասին: Նա նշեց, որ Նորին Սրբություն Ալեքսի Պապրիարքի

աջակցությամբ քաղաքապետարանը բարի հարաբերություններ է հաստատում բոլոր համայնքների և կրոնական հարանվանությունների հետ:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետը պրն Լուժկովին շնորհեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի շթանշան:

Հանդիպմանը ներկա էին Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոռյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիսն եպս. Ադամյանը և Մ. Էջմիածնի միաբանության հոգևոր հայրեր:

ՆԱԽԳԻՍՏ Տ. ՎԱՋԵ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆԻ



Երուսաղեմի Նայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը խոր վշտով փնդեկացնում է Սրբոց Նակոբյանց միաբանության անդամ Տ. Վաջն Ծ. վրդ. Իգնատիոսյանի մահվան մասին:

Նայոց Վաջեն վախճանվել է հունվարի 6-ին, Մարսելում, ուր երկար տարիներ, իբրև իռլենդ հովիվ, սպասավորել է Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս և Ս. Սահակ - Ս. Մաշտոց եկեղեցիներում:

Նոգեշնորհ Նայոց Սուրբի անժամանակ մահվան կապակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսը ցավակցական գրեթե է հղել Ամենապատիվ Պատրիարքին և Արևմտյան Եվրոպայի Նայրապետական պապվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուր արքեպս. Նազգաշյանին՝ աղոթելով հանգուցյալի հոգու հանգստության համար:

Տ. Վաջն Ծ. վրդ. Իգնատիոսյանը (ավագանի անունով՝ Նարություն) ծնվել է 1939 թ. Բելություն:

Նոգեշնորհ կրթությունը ստացել է Նախ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դպրեվանքում, ապա՝ Երուսաղեմի Սրբոց Նակոբյանց վանքի ընծայարանում: 1961 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1966-1969 թթ. աստվածաբանության և հայրաբանության մեծ գիտելիքները խորացնելու նպատակով ուսանել է Փարիզի կաթոլիկական ինստիտուտում:

Նոգեշնորհ Նայոց Սուրբը հեղինակ է բազմաթիվ գրքերի, որոնց թվում են «Բարեխոսություն Սրբոց», «Մեր Սուրբ Պատարագը», «Նայական մանրանկարչությունը և Թորոս Ռոսլինը», «Աստվածամայրը» և այլ աշխատություններ:

Հանգուցյալ Նայոց Սուրբի վերջին օծման և թաղման կարգը կատարվեց հունվարի 13-ին Մարսելի Սրբոց Թարգմանցա եկեղեցում:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԳԻՍԴ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, չորեքշաբթի.- Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (յոնն էջ 19):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 5-ին, կիրակի.- ճրագայոյց Ծննդեան եւ Աստուածայայտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառնեկ արք. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո Մայրավանքի ողջ միաբանությունը և ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Ս. Ծննդյան «հաղորդող մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին Վեհարան, որպես Տնօրինների արարողություն կատարելուց հետո՝ ուղղվեցին սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավերիսը ցնծությամբ նշելու:

Հունվարի 6-ին, երկուշաբթի.- ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՐՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան հայրապետական իր պատգամը ուղղեց հայ ժողովրդին (յոնն էջ 3):

Հրեթացս Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց Զրօրհների արարողություն:

Հունվարի 7-ին, երեքշաբթի.- Բ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արք. Քարամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Քրիստոս ծնաւ եւ յայրենցաւ...» բնաբանով քարոզ խոսեց (յոնն էջ 28):

Հավարդ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համորեն ննջեցելոց:

Հունվարի 12-ին, կիրակի.- Է. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իզնապրիոս արք. Մալիտայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 13-ին, երկուշաբթի.- Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պապարագ մարտիցեց Տ. Օշական վրդ. Գյուլգուլյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Հայր Սուրբը «Եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս» (Ղուկ. Բ 21) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 26):

Ս. Պապարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 14-ին, երեքշաբթի.- Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր Աթոռում, Ս. Հովհաննես Մկրտիչ Մկրտարանում, Ս. Պապարագ մարտիցեց Տ. Ասողիկ քին. Կարապետյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Տեր Հայրը հավուր պապշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 19-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պապարագ մարտիցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Սրբազան Հայրը հավուր պապշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 23):

Ս. Պապարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 26-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պապարագ մարտիցեց Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Սրբազան Հայրը «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ ծնծղանների, որ դողանջում են» (Ա Կորնթ. ԺԳ 1) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 21):

Հավարտ Սուրբ և անմահ Պապարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Январь 2003 г.)

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Святого Рождества и праздника Богоявления, 6 января 2003 г. (с. 3-5).
2. Новогоднее послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 31 декабря 2002 г. (с. 6-7).
3. Святое Рождество в Первопрестольном Святом Эчмиадзине, 6 января 2003 г. (с. 8).
4. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами церковей сестёр, с иерархами патриарших Престолов Армянской церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Рождества Спасителя (с. 9-12).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Благословения и поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 85-летия Заруи Долуханян, 30 января 2003 г., № 123 (с. 13-14).
6. Патриаршие награды (пожалование в январе 2003 г. патриарших энциклик, орденов «Св. Нерсес Шнорали» и благословений духовным и светским лицам, а также организациям, преданным Армянской церкви) – (с. 15).
7. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, передал Председателю Народного собрания Республики Армения высшую награду Ассирийской Православной церкви, 14 января 2003 г. (с. 16).
8. В этом году будет отмечаться 1700-летие освящения Кафедрального собора Первопрестольного Святого Эчмиадзина (с. 17).
9. Межепархиальное собрание представителей молодежи в Первопрестольном Святом Эчмиадзине, 23 января 2003 г. (с. 18).

ПРОПОВЕДИ

10. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Усика Сантуряна в Кафедральном соборе Святого Эчмиадзина по случаю Нового года, 1 января 2003 г. (с. 19-20).
11. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 26 января 2003 г. (с. 21-22).
12. Проповедь Его Преосвященства епископа Езника Петросяна в Кафедральном соборе

Святого Эчмиадзина, 19 января 2003 г. (с. 23-25).

13. Проповедь архимандрита Ошакана Гюльполяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина по случаю праздника Тезоименитства Иисуса Христа, 13 января 2003 г. (с. 26-27).

14. Проповедь иеромонаха Давида Карамяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 7 января 2003 г. (с. 28-29).

РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

15. ПРЕПОДОБНЫЙ ИЕРЕЙ АДАМ МАКАРЯН – Блаженный Августин против Ницше (научное исследование) – (с. 30-34).

Перевод

16. НИКОЛАЙ БЕРДЯЕВ – Свобода (Фрагмент из книги «Мировоззрение Достоевского». Перевод с русского иеромонаха Геворкя Сарояна и дьякона Арама Оганисяна) – (с. 35-47).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

17. АННА АРЕВШАТЯН – Книга Канонов Саака Партева, как исторический источник формирования служб в Армянской церкви V веке (научное исследование) – (с. 48-53).

18. ГЕВОРК ТЕР-ВАРДАНЯН – Об издании списков утерянных коллекций армянских рукописей (по случаю передачи Ереванскому Матенадарану экземпляра Нового Завета, написанного в Пустыни Лима в 1282 году) – (научное исследование) – (с. 54-68).

19. АРПЕНИК КАЗАРОСЯН – Скрипторий монастыря Шогагаванк – (научное исследование) – (с. 69-73).

20. АРАМАИС ГЕВОРКЯН – Новые тенденции во внешнем декоре церквей периода правления Закаридов (XII-XIII века) – (научное исследование) – (с. 74-78).

Точка зрения

21. РУБЕН СИМОНЯН – Крепость Гага – (научное исследование) – (с. 79-85).

22. СААК СААКЯН – Деятельность Нерсеса Аштаракеш в его бытность Главой Армянской Епархии Грузии – (научное исследование) – (с. 86-90).

Видные деятели Геворкянской Духовной Семинарии

23. ХАЧИК БАДИКЯН – Гурген Эдилян – (научное исследование) – (с. 91-98).

РЕЦЕНЗИЯ

24. ЕПИСКОП НАВАСАРД КЧОЯН – Духовная ценность труда «Христианские источники современного права» Рафаэля Папаяна (с. 99-102).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

25. ДЬЯКОН ГЕВОРК МАКАРЯН – Новый год в Первопрестольном Святом Эчмиадзине, 31 декабря 2002 г. (с.103-113).

26. СЕДА АРУТЮНЯН – Церемония в центре «Духовная сила», 26 декабря 2002 г. (с. 114-115).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

27. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Посла Пелега, заместителя директора Департамента Центральной Европы и Евразии Министерства иностранных дел Израиля, 16 января 2003 г. (с. 116).

28. Встреча Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, с интеллигенцией г. Эчмиадзина, 30 января 2003 г. (с. 117).

29. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, мэра г. Москвы г-на Юрия Лужкова, 31 января 2003 г. (с. 117-118).

30. Кончина верховного архимандрита Ваче Игнатосяна (с. 119).

31. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Святом Престоле Эчмиадзина в течение января 2003 г. (с. 120-121).

**“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(January 2003)**

1. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ, January 6, 2003 (p. 3-5).
2. New Year's Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, December 31, 2003 (p. 6-7).
3. Festivities in the Mother See on the occasion of Holy Nativity, January 6, 2003 (p. 8).
4. Letters of Greeting and telegrams on the occasion of the Holy and Miraculous Nativity of the Savior, exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and the Heads of Sister Churches, the Incumbents of the Patriarchal Sees of the Armenian Church, and State officials (p. 9-12).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Message of Blessing and Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 85th Anniversary of Birth of Mrs. Zarubi Dolukhanian, January 30, 2003, no. 123 (p. 13-14).
6. Pontifical Awards (Encyclicals, Orders of “Saint Nerses Shnorhali” and Letters of Blessing granted in January 2003 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to clergymen and laymen, as well as organizations devoted to the Armenian Church) – (p. 15).
7. The Highest Honor of the Syrian Orthodox Church transmitted by His Holiness Karekin II to the President of the National Assembly of the Republic of Armenia, January 14, 2003 (p. 16).
8. This year we celebrate the 1700th anniversary of the consecration of the Cathedral of the Mother See of Holy Etchmiadzin (p. 17).
9. Inter-diocesan Meeting of youth representatives in the Mother See of Holy Etchmiadzin, January 23, 2003 (p. 18).

SERMONS

10. Sermon delivered by His Eminence Archbishop Hussik Santurian in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the New Year, January 1, 2003 (p. 19-20).
11. Sermon delivered by His Eminence Archbishop Nerses Pozapalian in the Cathedral of Holy Etchmiadzin, January 26, 2003 (p. 21-22).

12. Sermon delivered by His Eminence Bishop Yeznik Petrosian in the Cathedral of Holy Etchmiadzin, January 19, 2003 (p. 23-25).
13. Sermon delivered by Very Rev. Fr. Oshakan Gulgolian in the Cathedral of Holy Etchmiadzin on the Feast of the Naming of Our Lord, January 13, 2003 (p. 26-27).
14. Sermon delivered by Rev. Fr. David Karamian in the Cathedral of Holy Etchmiadzin, January 7, 2003 (p. 28-29).

RELIGIOUS STUDY

15. REV. FR. ADAM MAKARIAN – Saint Augustine versus Nietzsche (Investigation) – (p. 30-34).

Translation

16. NIKOLAI BERTIAEV – Freedom (A passage from the book "Dostoevski's Conception of the World". Translation from Russian by Rev. Fr. Gevork Saroyan and Deacon Aram Hovhannisian) – (p. 35-47).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

17. ANNA AREVSHATIAN – The Book of Canons by Sahak Parthev as Historical Source for Studying the Formation of the 5th century Office of the Armenian Church (Investigation) – (p. 48-53).
18. GEVORK TER VARDANIAN – Publication of Lists of Lost Armenian Manuscript Collections (On the occasion of the presentation of a copy of the New Testament written in the Lim Hermitage in 1282, to the Yerevan Matenadaran) – (Investigation) – (p. 4-68).
19. ARPENIK GHAZAROSIAN – The Scriptorium of the Shoghagavank Monastery (investigation) – (p. 69-73).
20. ARAMAIS GEVORKIAN – New Trends in the Exterior Ornamentation of Churches in the Period of the Zakarian Kings (12th-14th centuries) – (Investigation) – (p. 74-78).

Viewpoints

21. ROUBEN SIMONIAN – The Fortress of Gaga (Investigation) – (p. 79-85).
22. SAHAK SAHAKIAN – The Activities of Nerses Ashtaraketsi during his tenure as Primate of the Armenian Diocese of Georgia (Investigation) – (p. 86-90).

Public Figures of the Gevorkian Theological Seminary

23. KHACHIK BADIKIAN – Gurgen Edilian (investigation) – (p. 91-98).

CRITICAL REVIEW

24. **BISHOP NAVASARD KCHOYAN** – The Spiritual Value of Rafael Papayan's book "The Christian Sources of Modern Law" (p. 99-102).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

25. **DEACON GEVORK MAKARIAN** – The New Year at the Mother See, December 31, 2002 (p. 103-113).
26. **SEDA HARUTIUNIAN** – Ceremony at the "Spiritual Strength" Center, December 26, 2002 (p. 114-115).

AUDIENCES AT THE MOTHER SEE

27. Audience granted by His Holiness Karekin II to Ambassador David Peleg, Deputy Director General for the Division for Central Europe and Eurasia of the Ministry of Foreign Affairs for the State of Israel, January 16, 2003 (p. 116).
28. Meeting of His Holiness Karekin II with intellectuals of the city of Etchmiadzin, January 30, 2003 (p. 117).
29. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Yuri Luzhkov, Mayor of Moscow, January 31, 2003 (p. 117-118).
30. Very Rev. Fr. Vatche Ignatiosian enters his eternal rest (p. 119).
31. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during January 2003 (p. 120-121).

“ETCHMIADZINE”
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D'ETCHMIADZINE
(Janvier 2003)

1. Message de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l'occasion de Noël et de la Fête de l'Épiphanie, 6 janvier 2003 (p. 3-5).
2. Message de Nouvel An de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, 31 décembre 2002 (p. 6-7).
3. La fête de Noël au Saint-Siège d'Etchmiadzine, 6 janvier 2003 (p. 8).
4. Lettres et télégrammes de félicitations échangés entre Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, et les chefs des Eglises sœurs, les Primats des Patriarcats de l'Eglise Arménienne et les personnalités officielles à l'occasion de la Sainte et Miraculeuse Nativité du Sauveur (p. 9-12).

ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

5. Message de bénédiction et de félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l'occasion du 85^e anniversaire de la naissance de Zaruhi Doloukhanian, 30 janvier 2003, no. 123 (p. 13-14).
6. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres de « Saint-Nerses Chnorhali » et messages de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, accordés à des personnalités religieuses et laïques, ainsi qu'aux organisations ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne en janvier 2003) – (p. 15).
7. Remise de la plus haute distinction de l'Eglise Assyrienne au Président de l'Assemblée Nationale de la République d'Arménie par Sa Sainteté Garéguin II, 14 janvier 2003 (p. 16).
8. Cette année, on célébrera le 1700^e anniversaire de la consécration de la Cathédrale du Saint-Siège d'Etchmiadzine (p. 17).
9. Réunion inter-diocésaine des représentants de la jeunesse au Saint-Siège d'Etchmiadzine, 23 janvier 2003 (p. 18).

SERMONS

10. Sermon de Son Eminence l'archevêque Houssik Santourian à la Cathédrale de Saint Etchmiadzine à l'occasion du Nouvel An, 1^{er} janvier 2003 (p. 19-20).
11. Sermon de Son Eminence l'archevêque Nerses Pozapalian à la Cathédrale de Saint Etchmiadzine, 26 janvier 2003 (p. 21-22).
12. Sermon de Son Eminence l'évêque Eznik Pétrossian à la Cathédrale de Saint Etchmiadzine, 19 janvier 2003 (p. 23-25).

13. Sermon de l'archimandrite Ochakan Gulgulian à la Cathédrale de Saint Etchmiadzine à l'occasion de la Fête du Seigneur, 13 janvier 2003 (p. 26-27).
14. Sermon du Révérend Frère David Karamian à la Cathédrale de Saint Etchmiadzine, 7 janvier 2003 (p. 28-29).

ETUDE RELIGIEUSE

15. **REVEREND ADAM MAKARIAN** – Saint Augustin contre Nietzsche (recherche scientifique) – (p. 30-34).

Traduction

16. **NICOLAS BERDIAEV** – Liberté (Un passage du livre « La conception du monde de Dostoïevski ». Traduit du russe par le Révérend Frère Guévork Saroyan et le diacre Aram Hovhannissian) – (p. 35-47).

ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES

17. **ANNA AREVCHATIAN** – Le Livre de Canons de Sahak Parthev comme source historique pour l'étude de la formation de l'office du Ve siècle de l'Eglise Arménienne (recherche scientifique) – (p. 48-53).
18. **GUEVORK TER-VARDANIAN** – Le problème de la publication des listes des collections perdues de manuscrits arméniens (à l'occasion du don au Maténadaran d'un exemplaire du Nouveau Testament écrit à l'ermitage de Lim en 1282) – (recherche scientifique) – (p. 54-68).
19. **ARPENIK GHAZAROSSIAN** – Le scriptorium du monastère de Choghavank – (recherche scientifique) – (p. 69-73).
20. **ARAMAIS GUEVORKIAN** – Nouvelles tendances dans le décor extérieur des églises de la période des Zakarides (XII^e-XIV^e siècles) – (recherche scientifique) – (p. 74-78).

Points de vue

21. **ROUBEN SIMONIAN** – La forteresse de Gaga – (recherche scientifique) – (p. 79-85).
22. **SAHAK SAHAKIAN** – Les activités de Nerses Acharakétsi au poste de Primat du Diocèse des Arméniens de Géorgie – (recherche scientifique) – (p. 86-90).

Les Personnalités du Séminaire Guévorkian

23. **KHATCHIK BADIKIAN** – Gourguen Edilian – (recherche scientifique) – (p. 91-98).

CRITIQUE LITTÉRAIRE

24. **ARCHEVEQUE NAVASSARD KTCHOYAN** – La valeur spirituelle de l'ouvrage « Les sources chrétiennes du droit moderne » de Raphaël Papayan (p. 99-102).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

25. **DIACRE GUEVORK MAKARIAN** – Le Nouvel An au Saint-Siège d'Etchmiadzine, 31 décembre 2002 (p. 103-113).
26. **SEDA HAROUTUNIAN** – Cérémonie au centre « Force spirituelle », 26 décembre 2002 (p. 114-115).

AUDIENCES AU SAINT-SIEGE

27. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à l'Ambassadeur David Peleg, vice-directeur du Département d'Europe Centrale et d'Eurasie du Ministère des Affaires étrangères d'Israel, 16 janvier 2003 (p. 116).
28. Rencontre de Sa Sainteté Garéguin II avec les intellectuels de la ville d'Etchmiadzine, 30 janvier 2003 (p. 117).
29. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Youri Loujkov, maire de la ville de Moscou, 31 janvier 2003 (p. 117-118).
30. Décès de l'archimandrite suprême Vatché Ignatiossian (p. 119).
31. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine au mois de janvier 2003 (p. 120-121).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
"Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie**

ԴԱՍԻՉ՝ 77764

ՍԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ